



ՏՕՐՔՈՒԱՏՕ ՏԱՍՍՕ¹⁾

Թ Ա Տ Ե Ր Ա Խ Ա Ղ

Գ Է Օ Տ Է Ի

ԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾՈՂԱՌԹԻՒՆ

Ա. Բ. Ա. Ն. Ն. Տ. Ս. Ի. Լ.

Չ Ո Ղ Լ Ի Ք

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ՏԱՍՍՕ.

ՏԱՍՍՕ.

Քաղերս անվտանգ են հետևում քեզ, սով իշխանուհի և անչափ ու անկարգ մտքերը լուղում են հոգուս մէջ։ Թւում է, միայնութիւնը կանչում է, սիրով շնջում է, արի, ես կը լուծեմ քո կրծքի նոր լարուցուած տարակուսանքները։ Բայց երբ մի հալեացք եմ զցում քո վրայ, երբ մի խօսք եմ լսում քո շրթունքից, մի նոր օր է ծագում ինձ համար և բոլոր կապանքներն արձակում են ինձանից։ Յօժարութեամբ խոստովանում եմ քեզ, ախ մարդը, որ անսպասելի կերպով եկաւ մեզ մօտ, մեղմութեամբ չը զարթեցրեց ինձ իմ գեղեցիկ երազից։ Նրա վարքը, նրա խօսքերն ախպէս զարմանալի կերպով ներգործեցին վրաս, որ ես աւելի քան մի օր և է անգամ կրկնապատիկ զգում եմ, որ ինքս ինձ հետ նորից հակասական շփոթութեան մէջ եմ ընկել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Անկարելի է, որ մի հին բարեկամ, որը երկար ժամա-

¹⁾ Տես «Լուսալո» 1901 թ. Ա.

Նակով հեռացած, վարել է մի օտար կեանք, նորն վարկենում, երբ նա նորից մեզ տեսնում է, իսկ և իսկ առաջուպ նման լինէր: Նա ներքուստ չի փոխուել: Թող մի քանի օր նրա հետ միասին լինենք, լարերը կը դաշնաւորուեն, մինչև որ նորից բաղաւորապէս մի գեղեցիկ ներդաշնակութիւն կը միացնի նրանց: Երբ նա լաւ կը ճանաչի, ինչ որ դու գործել ես այս ժամանակամիջոցում, նա քեզ անշուշտ կը զետեղի ալն բանաստեղծի կողքին, որին նա այժմ քո վերաբերմամբ մի հակալ է կարծում:

ՏԱՍՍՕ

Ա՛լա, իմ իշխանուհի, գովարանութիւնը որ նա իր բերանից արտասանեց Արիոստի համար, աւելի զուարճացրեց ինձ, քան վիրաւորեց: Մեզ համար մխիթարական է, այդ մարդուն հռչակուած տեսնել, որ մեր առջև կանգնած է որպէս մի մեծ կաղապար: Մենք կարող ենք հանգիստ սրտով ասել. Եթէ նրա արժանաւորութեան մի մասն ունենաս, պէտք է նրա փառքի մի մասն տիրանաս: Ո՛չ, ինչ որ ամենասաստիկ կերպով շարժում է սիրտս, ինչ որ այժմ լցնում է ամբողջ հոգիս, այդ ուրուականներ էին ալն աշխարհի, որը կենդանի, անխոնջ, առհելի, կանոնաւոր կերպով պտտում է մի մեծ, միալնակ խելացի մարդու շուրջը և վերջացնում է իր ընթացքը, որը զստահանում է նրան նախագծել կիսաստուածք: Ազահութեամբ ունկընդիր էի, ուրախութեամբ լսում էի փորձուած մարդու հաստատուն խօսքերը, բայց աւանդ, որ քան աւելի լսում էի, աւելի և աւելի ստորանում էի ինքս իմ առջև, ես վախենում էի անհետանալ, ինչպէս արձագանքն անհետանում է ժայռերին գիպելով, վախենում էի կորչել որպէս մի արձագանք, մի ոչնչութիւն:

ԻՇԽԱՆՈՒԷԻ

Փոքր ինչ առաջ, կարծես թէ, պարզ զգում էիր ինչպէս հերոսը և բանաստեղծը միմեանց համար են ապրում, ինչպէս հերոսը և բանաստեղծը միմեանց որոնում են և ոչ մէկը միւսին չը պէտք է նախանձի: Թէպէտ հիանալի է երգին արժանի գործը, բայց և նույնպէս գեղեցիկ է գործերի կատարեալ ամբողջութիւնը լանձնել արժանաւոր երգերով ապագալ սերնդին: Բաւական եղիր մի փոքրիկ պետութիւնից, որ քեզ

պաշտպանում է, որ տեղից որպէս մի ասից հանգստութեամբ կարող ես նայել աշխարհի վայրենի ընթացքի վրայ:

SUMMO

Եւ մթթէ առաջին անգամ զարմացմամբ չը տեսայ այս տեղ, ինչպէս հիանալի վարձատրեցին քաջ մարդուն: Որպէս անփորձ երիտասարդ, չը կայ այս տեղ այն բոպէին, երբ տօնը տօնին հետեւելով թուում էր, որ զարձնում է Ֆէրրարան փառքի մի կենտրոն: Ո՛հ ինչ տեսարան էր: Նոյն լայն հրապարակըն, որ դիւրաչարժ քաջութիւնը պէտք իրեն ցոյց տար իր պարծառութեան մէջ, կազմեց մի շրջան, որ արեգակը շուտով չի լուսաւորելու: Այդ տեղ խիտ նստած էին ամենագեղեցիկ կանաչք և մեր ժամանակակից առաջին մարդիկը: Հայեացքը զարմացմամբ թռչում էր այդ ազնիւ բազմութեան վրայով: Գոչում էին, մեր հայրենիքն, այդ միայնակ, անձուկ, ծովապատ մեր երկիրն է դրանց բոլորին այս տեղ ուղարկել: Դրանք միասին կազմում էին մի հիանալի դատարան, որ պէտք է վճիռ կալացնէր պատու, արժանաւորութեան, առաքինութեան մասին: Երբ ամեն մէկին առանձին նայես, ոչ մէկին չես գտնի, որ իր դրացու առջև ամաչելու կարիք ունենար: Եւ լետոյ դռները բացուեցին, ձիերը տրոփեցին, փալլեցին սաղաւարտները և վահանները, խմբուեցին մանլակիները, հնչեցին փողերը և նիզակները ջարդուելով փչուեցին, հարուածներից ձայն էին տալիս սաղաւարտները և վահանները, փոշին պտտուելով, մի բոպէաչափ ծածկեց, լաղթողի փառքը լաղթուածի անարդանքը: Ո՛հ, թող տուր մի վարագոյր քաշեմ այդ խիտ լուսաւորուած ամբողջ տեսարանի առջև, որ այս գեղեցիկ բոպչում ինձ լոյժ զղալի չը լինի իմ անարժանութիւնը:

ԻՇԽԱՆՈՒՂԻ.

Եթէ այն ազնիւ ասպարէզն, այն գործքերը քեզ յորդորում էին դէպի ջանք և ձգտումներ, ես կարող էի միևնոյն ժամանակ, երիտասարդ բարեկամ, քեզ տալ համբերութեան խաղաղ դասի ապացոյց: Ես չէի տեսնում այն տօնախմբութիւնները, որ դու փառաբանում ես, որոնց այն ժամանակ հարիւրաւոր լեզուներ գովաբանում էին և շատ տարիներից լետոյ էլ գովել են: Մի հանդատ տեղում, ուր ուրախութեան բեկբեկուած վերջին արձագանքը հազիւ թէ կարողանար ան-

հետանալ, ես պէտք է զգալի շատ վշտեր և կրէի ինչ ինչ տխուր մտատանջութիւններ: Մահն իր լալնատարած թեւրոյժ երերում էր աչքերիս առջև ու քողարկում էր միշտ նոր կեանքի տեսարանը: Միայն կամաց կամաց նա հեռացաւ և ինձ թող տուեց ինչպէս մի մէզի միջով տեսնել կեանքի բազմազան գոյները թէպէտև գունատ, բայց դուրեկան: Ես կրկին տեսալ կենդանի կերպարանքների մեղմ շարժումն: Երբ նա ժիշտներին օգնութեամբ հիւանդութիւնիցս լետոյ առաջին անգամ դուրս եկալ, ալն ժամանակ զուարթ դէմքով եկաւ Լուկրէցիան և բերեց քեզ ձեռքիցդ բռնած: Դու առաջինն էիր որ անծանօթ լինելով պատահեցիր ինձ իմ նոր կեանքում: Այն ժամանակ ես շատ բան էի սպասում քեզ համար և իմ համար: Մինչև այժմ էլ լուսը մեզ չի խաբել:

ՏԱՍՍՕ.

Ա ևս, որ ամբողջի խոնուած աղմուկից թմբած, այդ քան շքեղութիւնից կուրացած և մի քանի կրքերից լուզուած, քըրոջդ հետ լուռ անցնում էի պալատի հանդարտ անցքերով, լետոյ մտալ ալն սենեակն, ուր դու երևացիր ինձ նաժիշտներ: Դ վրալ լենուած, ալն ինչ բոպէ էր: Ո՛հ, ներքի: Ինչպէս աստուածալնութեամբ մերձաւորութիւնը հեշտութեամբ և լօժարութեամբ բժշկում է կախարդուածին աւիւնից և ցնորքից: Նոյնպէս էլ ես լանկարծակի հայեցողութեամբ բժշկուեցի բոլոր երևակալութիւններից, ամեն կրքից, ամեն մի սնտոի ձգտումից: Երբ անփորձ կիրքս հաղար ու մի առարկաների լ'տեից ընկած մեղմութեամբ մոլորում էր, ես սկզբում ամօթով ընկղմուեցի իմ մէջ և ճանաչեցի ցանկալին: Այդ պէս էլ 'ի զուր են որոնում ծովի մեծատարած աւաղների մէջ մի մարդարիտ, որ ամփոփուած, թաղնուած է իր անդորր պատենի մէջ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Այն միջոցին սկսեցին գեղեցիկ ժամանակները և եթէ զուքս Ուրբինօն քրոջս չը տանէր, գեղեցիկ ու անդորր երջանկութեան մէջ կ'անցնէինք շատ տարիներ: Իայց տարաբաղտաբար այժմ շատ ենք զրկուած այդ սիրալի կնոջ ուրախ հոգուց, նրա զուարթութեամբ և կեանքով լի սրտից, հարուստ սրախօսութիւնից:

ՏԱՍՍՕ.

Ես լաւ գիտեմ, որ ալն օրից, երբ նա ալս տեղից հե-

ուացաւ, ոչ ոք չէր կարող տալ քեզ այն անապակ բերկրութիւնը: Ո՛րքան լաճախ սիրտս ճմլում էր, որքան լաճախ քո պատճառով լայտնել եմ իմ վիշտս խաղաղ պրակին: Ա՛խ, գոչեցի ես, միթէ միայն քոյրն ունի բաղդ, իրաւունք, նազելու համար շատ քան լինելու: Միթէ մի այլ արժանաւոր սիրտ չը կայ, որ նրան համապատասխանէր: Միթէ խելքը և սրամտութիւնը հանգել են: Եւ միթէ այդ միակ կինը, որքան էլ որ պատուական էր, ամեն ինչ էր: Ո՛հ, ներքի իշխանուհի: Շատ անգամ ինքս մտածում էի իմ համար, և ցանկանում էի, որ կարողանամ մի բան լինել քեզ համար: Գոնէ մի չնչին բան լինել ոչ միայն խօսքով, այլ գործով ցոյց տալ կեանքում, թէ ինչպէս սիրտս լուեխայն նուիրուած է քեզ: Բայց ինձ չը լաջողուեց և սխալմամբ լաճախ գործել եմ այն, ինչ որ կարող էր սրտիդ ցաւ պատճառել, վիրաւորում էի այն մարդուն, որին դու հովանաւորում էիր, անմտաբար խառնակում էի այն, ինչ որ դու կամենում էիր պարզել և միշտ այն բողէին, երբ կամենում էի քեզ մօտենալ, ինձ զգում էի քեզանից հեռու և աւելի հեռու:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Քո ցանկութիւնը, ճասօ, երբէք ես անուշադիր չեմ թողել և գիտեմ ինչպէս դու ինքդ դրաղուած ես քեզ վնասելու համար: Փոխանակ այն, որ քոյրս գիտէ վարուել ամեն մէկի հետ ինչպէս էլ որ նա լինի, դու հազիւ կարող ես երկար տարիներից լետոյ գտնել քեզ մի բարեկամ:

ՏԱՍՍՕ.

Պարտաւիր ինձ. Բայց դրանից լետոյ էլ ասան, ձեր է այն մարդն, այն կինը, որի հետ կարող եմ սրտանց խօսել, ինչպէս քեզ հետ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Պէտք է եղբօրս վրայ վստահ լինես:

ՏԱՍՍՕ.

Նա իմ իշխանն է: Սակայն մի կարծիր, որ ազատութեան վարեհի ձգտումը փքում է կուրծքս: Մարդս ծնուած չէ ազատ լինելու և մի ազնուականի համար աւելի գեղեցիկ բաղտ չը կայ, քան ծառայել մի իշխանի, որին նա լարգում է: Նա իմ տէրն է, և ես զգում եմ այդ մեծ խօսքի ամբողջ ծաւալը: Ես պէտք է սովորեմ լուռ մնալու, երբ նա խօսում

է և կատարել, երբ նա հրամայում է, եթէ նոյն իսկ խելքս ու սիրտս խիստ հակաճառում լինէին նրան:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Սերբարս երբէք այդ չի պահանջում: Եւ այժմ որովհետև Անտօնիօն կրկին ալստեղ է, դու ունիս մի նոր և խելացի բարեկամ:

ՏԱՍՍՕ

Առջ ես այդ լոյսն ունէի, այժմ համարեա թէ լուսահատում եմ: Ո՛րքան կրթական կը լինէր նրա հասարակութիւնն իմ համար և հազար ու մի դէպքում օգտաւէտ նրա խորհուրդը: Ես կարող եմ ասել, որ նա ունի այն ամենը, ինչ որ ինձ պակասում է: Սակայն բոլոր աստուածները ժողովուած են եղել նրա որորանին պարզեներ մատուցանելու տարաբաղտաբար գրացիաներն ¹⁾ այն տեղ չեն եղել և ով որ այդ սքանչելիներից պարզ և չի ստացել, կարող է շատ բան ունենալ, շատ բան տալ, բայց երբէք չի կարող տալ հանգչիլ իր կրօնի վրայ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Բայց կարելի է նրա վրայ վստահ լինել և այդ մեծ բան է: Մէկ մարդից չը պէտք է ամեն բան պահանջես, դա կը կատարի, ինչ որ քեզ խոստանայ: Եթէ նա իրեն քեզ բարեկամ լստնէ, կը հոգայ քո մասին ինչպէս ինքը կը հոգայիր: Գուք պէտք է միանաք: Ես մեծ լոյս ունիմ այդ գեղեցիկ գործը շուտով կատարելու: Միայն մի ընդդիմանայ, ինչպէս դու սովոր ես: Քնքով և շնորհալի Լէօնօրէն վաղուց ալստեղ է և նրա հետ կարելի է ուրախութեամբ ժամանակ անցկացնել, նրա հետ էլ երբէք մօտիկ լինել չես կամեցել, այն ինչ նա այդ ցանկանում էր:

ՏԱՍՍՕ.

Ես քեզ եմ լսել. հակառակ դէպքում ես նրանից կը հեռանալի փոխանակ մօտենալու: Որքան էլ նա կարողանում է սիրալիր երեւալ, այնուամենայնիւ չը գիտեմ, թէ ինչ է պատճառը, որ ևս դժուարութեամբ եմ կարողանում նրա հետ բոլորովին ազատ խօսել, և եթէ նա նաև նպատակ ունի բարեբարել իր բարեկամներին, մի նպատակ է զգացուած և մարդ տխրում է:

¹⁾ Շնորհքի և սիրալութեան շաստուածուհիները:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Այդ կերպով երբէք չենք կարող հասարակութիւն ունենալ, Տասու: Այդ ճանապարհը տանում է մեզ թափառելու մենաւոր պրակներով միջով և խաղաղ հովիտներով: Հոգին աւելի և աւելի քնքշանում է և ձգտում է վերածել իր մէջ ոսկէ ժամանակը, որից նա արտաքուստ զրկո ած է և փորձը դժուարութեամբ է լաջողում:

ՏԱՍՍՕ.

Ո՛հ Բնչ խօսք է արտասանում իշխանուհիս: Ո՛ւր է թռել ոսկէ ժամանակը, որին ՚ի զուր տենչում է ամեն մի սիրտ: Այն տեղ, ուր ազատ երկրի վրայ մարդիկ վախելու թեամբ տարածում էին որպէս ուրախ հոտեր, այն տեղ, ուր քաղմագոյն դաշտի վրայ ստուեր էր տալիս հովուին և հովուհուն մի հնադարեան ծառ, մի նորաբուս, մացառի նուրբ ոստերով վստահաբար ընդգրկում էր տենչալից սէրը, ուր միշտ մաքուր աւազի վրայ բոլորում էր հանդարտ դետը լաւերժահարսին, ուր երկչոտ օձը կանաչների մէջ անվտանգ անհետանում էր, անտառի համարձակ աստուածը, պատժուելով քաջ երիտասարդից, փախչում էր, ուր ամեն մի թռչուն արձակ օդում և ամեն մի կենդանի անցնելով լեռներ, ձորեր, ասում էր մարդուն, Սոյլ է տուած, ի՛նչ սր հանելի է:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Իմ բարեկամ, ոսկէ ժամանակն անցել է: Միայն լաւ մարդիկ են վերադարձնում այն: Աւ պէտք է քեզ խոստովանեմ, թէ ես Բնչ եմ կարծում. ոսկէ ժամանակը որով բանաստեղծը սովորութիւն ունի մեզ փալփալել, այդ դեղեցիկ ժամանակն արդէն եղել է, ինձ թւում է, որ այժմ էլ կայ: Աւ եթէ մի անգամ եղել է, անկասկած է, այժմ էլ կրկին կարող է լինել: Դեռ հանդիպում են միատեսակ սրտեր և միասին վայելում են զեղեցիկ աշխարհի երջանկութիւնը:

Բարեկամ, առածի մէջ միայն մէկ խօսք է փոխւում, Սոյլ է տուած ինչ որ պատշաճ է:

ՏԱՍՍՕ

Ո՛հ, եթէ բարի և ազնիւ մարդկանցից կալացած մի ընդհանուր ատեան որոշէր, ինչն է պատշաճ, փոխանակ այն որ ամեն մէկը կարծում է, թէ այն է վայելուչ, որ իրեն օգտաւէտ է: Չէ որ մենք տեսնում ենք, որ ուժեղին, խելօքին ամեն զործ սաղում է և նա իրեն ամեն բան թող է տալիս:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Եթէ կամենում ես Յիշտն իմանալ ինչն է պատշտծ, հարցրու, միայն ազնիւ կանանցից, որովհետեւ դրանց համար անհրաժեշտ է, որ ամեն ինչ որ պատահում է, պատշաճ լինի: Պատշաճութիւնը պարսպի նման պատում է քնքոյլ, դիւրեաւ վիրաւորելի սեռը: Ուր տիրւպետում է բարոյականութիւնը, դրանք են կառավարիչներն, իսկ ուր իշխում է ցոփութիւնն, այն տեղ դրանք ոչինչ են: Եւ եթէ հրկու սեռիցն էլ հարցնես, այդ մտրղը ձգում է դէպի ազատութիւնը, կինը—դէպի բարոյականութիւնը:

ՏՍՍՕ.

Դու մեզ անուանում ես անզնւայ, կոպիտ, անզգայ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Ո՛չ, Դուք միայն ձգտում էք դէպի հեռաւոր բարիքները և ձեր ձգտումը պէտք է բռնի լինի: Դուք վտահանում էք գործել մշտնջենաւորութեան համար, այն ինչ մենք կը ցանկալինք տիրապետել այս աշխարհում մի միայն մտակալ սահմանափակ բարիքին, կը ցանկալինք, որ դա մշտական մերը լինէր: Մենք չենք հաւատում ոչ մի այլ մարդու սրտին, եթէ նաև մեզ ջերմ նուիրուած լինէր: Անցողական է գեղեցկութիւնը, որ դուք, թուում է, միայն էք գնահատում: Ինչ որ աւելորդ է մնում նա այլ ես չի գրգռում, իսկ ինչ որ չէ գրգռում, մնած է: Եթէ լինէին այնպիսի այլ մարդիկ, որոնք կարողանային գնահատել մի կանացի սիրտ, կամենային տեսնել թէ ինչ հաւատարմութեան և սիրոյ սքանչելի գանձ կարող է պարունակել մի կնոջ կուրծք: Եթէ մի քանի գեղեցիկ ժամերի լիշողութիւնը կարողանար վառ մնալ ձեր սրտերում, եթէ ձեր հայեացքը, որ սովորաբար թափանցիկ է, կարողանար անցնել այն քօղի միջով, որ մեզ վրայ գցում է ծերութիւնը կամ տկարութիւնը, եթէ ունենալը, որ պէտք է հանդիստ պահէր, չը դարձնէր ձեզ ազահ դէպի միւսների գուլքերը, այն ժամանակ մեզ համար կը բացուէր մի գեղեցիկ օր և մենք կը տօնէինք մեր ոսկէ դարը:

ՏՍՍՕ

Դու ինձ այնպիսի խօսքեր ես ասում, որոնք ուժգնութեամբ զարթեցնում են կրծքումս կիսանիր հոգներ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ի՞նչ ես ուզում ասել, Տասսօ, համարձակ խօսիր:

S U Ս Ս Օ

Արդէն շատ անգամ լսել եմ, այս օրերում կրկին լսեցի, եթէ իմացած չը լինէք, պէտք է ինքս մտածէի, թէ ազնիւ իշխանները ձգտում են ձեռքդ խնդրելու: Ինչ որ պէտք է սպասենք, դրանից ենք վախենում և պէտք է խիստ լուսահատուենք: Գու մեզ կը խողնես, բնական է այդ: Բայց չը գիտեմ, թէ մենք այդ ինչպէս պէտք է տանենք:

ԻՇԽԱՆՈՒՂԻ

Առ այժմ անհոգ եղէք: Համարեա կարող եմ ասել, ընդ միշտ անհոգ եղէք: Այստեղ ինձ հաճելի է և ուրախութեամբ եմ կամենում մնալ: Գեռ ինձ յայտնի չէ ոչ մի հանգամանք, որ ինձ հրապուրէր: Եւ եթէ անպատճառ ցանկանում էք ինձ այստեղ տեսնել, յայտնեցէք ինձ այդ ձեր միաբան համաձայնութեամբ և ստեղծեցէք նորն իսկ ձեզ համար մի երջանիկ կեանք, իսկ ձեզանով իմ համար:

S U Ս Ս Օ

Ո՛հ, սովորցրու ինձ, որ կատարեմ ինչ որ կարելի է կեանքիս բոլոր օրերը քեզ են նուիրուած: Երբ սիրտս բացւում է քեզ մեծարելու, քեզնից գոհանալու համար, միայն այն ժամանակ եմ զգում պարզագոյն երջանկութիւն, որը կարող են մարդիկ զգալ: Աստուածայինը միայն քեզանում տեսալ: Այդպէս զանազանում են երկրային աստուածները միւս մարդկանցից, ինչպէս և զանազանում է բարձր ճակատագիրն ամենախելօք մարդկանց խորհրդից և կամքից: Ինչ որ մենք տեսնում ենք որպէս ուժգին ալիքներ ալիքների վրայ, նրանք շատ բան, որպէս թեթև ալիքներ, թողնում են աննշմարելի կերպով խշշալով անցնել իրենց ոտների տակ, չեն լսում մըրրիկը, որ մեր շուրջը շառաչում է և մեզ գլորում է, նրանք հազիւ լսում են մեր աղաչանքը և թողնում են, որ մենք, ինչպէս անում են սահմանափակ, ողորմելի երեխաները, լըցնենք օդը հառաչանքով և աղաղակով: Գու ինձ լաճախ ետ համբերել, ո՞վ աստուածային, և քո հախեացքը, որպէս արեգակ, չորացրել է կոպերիս ցողը:

ԻՇԽԱՆՈՒՂԻ

Շատ իրաւացի է, որ կանալք քեզ քաղցրութեամբ են դիմաւորում: Քո երգերը զանազան կերպով փառաբանում են մեր սեռը: Քնքշութեամբ կամ քաղցրութեամբ դու միշտ կա-

րողացել ես ցոյց տալ նրանց սիրոյ արժանի և ներկայացնել ազնիւ, իւր եթէ Արմիդան ¹⁾ երեսում է առեւութեան արժանի, նրա հրապուրքը և սէրն իսկոյն հաշտեցնում են:

ՏԱՍՍՕ

Ինչ որ կրկնապէս հնչում է իմ երգի մէջ, ես միայն մէկին, բոլորը մէկին եմ պարտական: Երևակայական, անորոշ պատկեր չէ սաւառնել ճակատիւ առջև, որ երբեմն փալլուն մօտենար հոգուս, երբեմն էլ անհետանար: Ես իմ աչքերովս եմ տեսել ամենայն մի առաքինութեան, ամենայն մի գեղեցկութեան նախապատկերը: Ինչ որ նրան նմանեցրել եմ, այն կը մնայ: Տանկրէտի դիւցազնական սէրը դէպի Խօրինդէն, էրմէնէսի մեղմ, աննշմարելի հաւատարմութիւնը, Սօֆրօնիէի մեծութիւնը և Օլիւդէի կարիքը ստուերներ չեն, որ ցնորքն առաջ է բերել: Ես գիտեմ, որ դրանք մշտնջենաւոր են, որովհետեւ դրանք կան: Եւ թնչն աւելի իրաւունք ունի դարևր շարունակ գոյութիւն ունենալ և հանդարտ շարունակաբար ներգործել, քան մի ազնիւ սիրոյ զաղտնիք, որ համեստութեամբ հաւատ է ընծայում սքանչելի երգին:

ԻՇԽԱՆՈՒՂԻ

Յայտնեմ արդեօք քեզ մի առաւելութեան մասին ես, որին ալդ երգը զաղտնագողի մերձենում է: Դա մեզ հրապուրանքով հետզհետէ ձգում է դէպի իրեն, մենք ունկնդիր ենք: Մենք լսում ենք և կարծում ենք որ հասկանում ենք: Ինչ որ հասկանում ենք, այն չենք կարող պարսաւել: Եւ վերջապէս ալդ երգը մեզ գրաւում է:

ՏԱՍՍՕ

Ո՛րպիսի երկինք ես բացում իմ առջև, ո՛վ իշխանուհի: Եթէ այս պայծառութիւնը չը կուրացնի ինձ, կը տեսնեմ մի անսպասելի, մշտնջենաւոր բախտ, որ սքանչելապէս իջնելու է ոսկէ ճառագայթների վրայով:

¹⁾ Արմիդան Տասսօի «Ագատած Եւուսաղեմի» մէջ գրտնուած կանանց նախատիպերից մէկն է, որի անունը համարեա առած է դառել, որպէս հրապուրիչ կնոջ մի կատարեալ օրինակ և նրա կախարդական պարտէզները նկարագրում են որպէս ամենաբարձր գեղեցկութիւն, որ կարող է լինել բնութեան մէջ: Ալդ նիւթերի մասին Գուքը և Բօսսինին օպերա են գրել:

ԻՇԽԱՆՈՒՆԻ

Կանգ առ, Տասուս, Կան շատ բաներ, որոնց մենք պէտք է ուժգնութեամբ ձեռնարկենք: Սակայն ուրիշները կարող են միայն ողջախոնուութեամբ և զրկանքով մեր սեպհականը դառնալ: Այդ պատճառով էլ ասում են. եղբիւր առաքինութիւն, եղբիւր սէր, որ նրան մերձաւոր է, Դրա մասին լաւ մտածիր:

ԵՐԿՐՈՐԿ ՏԵՍԻԼ

ՏԱՍՍՕ (միայն)

Արդեօք թո՛ղ է տուած քեզ աչքերդ բանալ, կը համարձակուես շրջահալել: Դու միայնակ ես, Լսեցին արդեօք այս սիւններն. ինչ որ նա խօսեց: Եւ ունես վկաներ, բարձրագոյն բախտիդ այս լուռ վկաներից վախենալո՛ւ ես: Բարձրանում է նոր կեանքի օրուալ արեզակը, որ նախընթացներին հաւասար չէ: Աստուածունին իջնելով, արագութեամբ բարձրացնում է մահկանացուն: Ի՞նչ մի նոր շրջան է բացում աչքերիս, ի՞նչ թագաւորութիւն: Ի՞նչպէս հիւանալի վարձատրում է ջերմ ցանկութիւնը: Ես երազում էի մօտ լինել բարձրագոյն բախտին և այս բախտը գերազանց է երազներից: Կոյր ծընուածք թող երևակալէ լոյսը, գոյներն, ինչպէս կամենում է: Երբ լատնում է նրան նոր օր, նրա համար մի նոր զգացմունք է: Լի քաջութեամբ և գուշակութեամբ, ուրախութեամբ արբած, երերուելով մուտք եմ գործում այս շաղի վրայ՝ Դու ինձ շատ ես տալիս, դու տալիս ես մեզ ինչպէս երկինքը և երկիրն անչափ հարուստ, լի ձեռքերով պարզեներ և պահանջում ես ինձանից ալն, ինչ որ մի ալդպիսի պարզեն իրաւունք է տալիս: Ես պէտք է զրկեմ ինձ, պէտք է ինձ չափաւոր ցոյց տամ և ալդ կերպ արժանանամ, որ որ . . . ինձ վրայ վստահ լինես: Ի՞նչ արեցի, որ նա կարողացաւ ինձ ընտրել: Ի՞նչ պէտք է անեմ, որ նրան արժանի լինիմ: Նա կարողացաւ քեզ վրայ վստահ լինել և դրանով ցոյց տուեց, որ վստահալի ես: Այն իշխանունի, քո խօսքերին, քո հալեացքին թող իմ հոգիս լաւիտեան նուիրուած լինի: Այն, պահանջիւր, ինչ ցանկանում ես, օրովհետեւ ես քոնն եմ: Թող նա ուղարկի ինձ հեռաւոր երկրներ, աշխատանք, վտանգ և փառք

որոնելու, թող շնորհի ինձ ոսկէ քնար խաղաղ պրակում,
 թող նուիրէ ինձ խաղալութեանը և փառքին: Եւ նրանն եմ,
 սովորցնելով, նա պէտք է ինձ տիրէ: Սիրտս պահում էր ամենայն
 գանձեր նրա համար: Ո՛հ, եթէ մի աստուած ընծայէր
 ինձ մի հազարերանգ գործիք, այն ժամանակ էլ դրանով հա-
 զլւ կը կարողանալի բաւարար արտալալտել անասելի լար-
 գանքս: Նկարչի վրձին, բանաստեղծի ամենաքաղցր շրթուն-
 քը, որ մի ժամանակ կերակրուել է ալզի մեղրով, իմ համար
 եմ ցանկանում: Ո՛չ, ապագայում Տասսօն այլ ևս միայնակ,
 թուլ, տխուր չը պէտք է թափառի ծառերի տակ և մարդկանց
 մէջ: Նա այլ ևս միայնակ չէ, նա քեզ հետ է: Ո՛հ, երանք
 ամենաազնիւ գործը սարսափելի վտանգով շրջապատուած, իմ
 համար ակներև դառնար: Եւ կը լարձակուէի, լօժարութեամբ
 կեանքս վտանգի կենթարկէի, որ նրանից եմ ստացել, լուս-
 զօն մարդկանց կը հրաւիրէի իմ բարեկամը շինել և նրա
 ակնարկութեամբ ու ցանկութեամբ, ազնիւ խմբով կը կատա-
 րէի անկարելին: Անմիտ, ինչն և բերանդ չը քողարկեց այն,
 որ դու զգում էիր, մինչև որ դու արժանի և աւելի արժանի
 լինէիր նրա ոտների տակ սփռուելու: Ա՛յդ էր քո նպատակը,
 քո խելացի ցանկութիւնը: Թ՛ող հէնց այդպէս լինի: Աւելի
 գեղեցիկ է մաքուր և անարժան լինելով, այդպիսի մի պար-
 գև ընդունել, քան կիսով չափ կարծել, թէ պէտք էր պա-
 հանջել: Ուրախ նախր: Ո՛րքան մեծ, որքան անչափ է, որ
 դրած է առջևդ: Եւ լուսով լի երիտասարդութիւնը կրկին
 հրապուրում է քեզ դէպի անլալտ, լուսափայլ ապագան: Լալ-
 նացիւր կուրծք: Ո՛վ զքեզ բախտի, մէկ անգամ էլ նպաստա-
 մատուց եղէք այս բոյսին: Սա ձգտում է դէպի երկինք և
 դրանից դուրս են գալիս հազարաւոր ոստեր, ծաղիկներ են
 տալիս: Ո՛հ, թ՛ող դրանք պտուղներ տան, ո՛հ, թ՛ող դրանք
 ուրախութիւն բերեն: Թ՛ող մի քնքուղ ձեռք քաղէ դրանց
 թարմ, հարուստ ոստերի ոսկէ զարդարանքը:

ԵՐՐՈՐԳ ՏԵՍԻԼ

ՏԱՍՍՕ, ԱՆՏՕՆԻՕ.

ՏԱՍՍՕ

Գնալը բարի, ինձ թւում է, որպէս թէ այժմ քեզ առա-

Չին անդամն եմ տեսնում: Ոչ մէկի մասին արած ծանուցումն պնքան հաճող չի եղել ինձ: Բարև եկար: Այժմ ճանաչում եմ քեզ և քո բոլոր արժանաւորութիւնդ: Առանց դանդաղելու տալիս եմ քեզ ձեռքս և սիրտս և լոյս ունիմ, որ դու էլ ինձ չես արհամարհի:

ԱՆՏՅՈՒԻՑ

Առատութեամբ տալիս ես ինձ գեղեցիկ պարգևներ և դրանց արժանաւորութիւնը ճանաչում եմ, ինչպէս որ պէտքն է: Այդ պատճառով էլ թող տուր լապաղեմ, մինչև որ կարողանամ ընդունել: Սակայն ես չը դիտեմ, կարող եմ արդեօք դրա փոխարէն քեզ նոյնը տալ: Ես յօժարութեամբ չէի կամենալ շտապել և անշնորհակալ երևալ: Թող տուր, որ երկուսիս համար էլ կորովամտութեամբ և խնամոտ հոգամ:

ՏԱՍՍՕ.

Ո՞վ է կարող կորովամտութիւնը պարսաւել: Կեանքի ամենալին մի քալը ցոյց է տալիս, թէ դա որքան կարևոր է: Սակայն աւելի գեղեցիկ է լինում, երբ մեզ սիրտն է ասում, թէ որ տեղ նուրբ զգուշութիւնը հարկաւոր չէ:

ԱՆՏՅՈՒԻՑ.

Այդ պէտք է ամեն մարդ ինքն իրեն հարցնի, որովհետև սխալանքի մասին ինքը պէտք է զղջալ:

ՏԱՍՍՕ.

Թող ալդպէս լինի: Ես իմ պարտաւորութիւնս կատարեցի: Իշխանուհու խօսքը, որ կամենում է մեզ բարեկամ տեսնել, ես լարգեցի և ինձ քեզ ներկայացրի: Ես չը պէտք է քեզնից քաշուեմ, Անտօնիօ, բայց 'ի հարկէ չեմ էլ կամենում ժիտ լինել. թող ալդպէս լինի: Ժամանակը և ծանօթութիւնը կարելի է պատուիրեն քեզ, աւելի սրտով պահանջես պարգևը, որ դու այժմ ալդքան սառնութեամբ մի կողմ ես դնում, նաև համարեա թէ արհամարհում ես:

ԱՆՏՅՈՒԻՑ.

Շատ անգամ մարդիկ չափաւորին ոտնասիրտ են անուռնում, որովհետև կարծում են, թէ իրենք աւելի սրտանց են, ան պատճառով որ եռանդը թռուցիկ կերպիւ նրանց վրայ լարձակումն է գործում:

ՏԱՍՍՕ.

Ի՞նչ պարսաւում ես, ինչ որ ես եմ պարսաւում, որից

հէնց ես խօսի եմ տալիս: Թէպէտե երկտասարդ եմ, բայց և լաւ հասկանում եմ, որ համբերութիւնը սրտմտութիւնից աւելի լաւ է:

ԱՆՏՈՆԻՕ.

Այդ շատ իմաստնաբար է, միշտ այդպէս էլ մտածիր:

ՏԱՍՍՕ.

Գու. իրաւունք ունեւ ինձ խորհուրդ տալ, ինձ զգուշացնել, որովհետեւ փորձառութիւնը քեզ միշտ ընկերակցում է, որպէս երկար փորձած բարեկամ: Բայց հաւատն միայն, որ մի մեղմ սիրտ միշտ ունկնդիր է ամեն օրուայ և ամեն մի ժամի զգուշացնելուն և փորձում է ամեն մի բարի գործում, որ քո խստութիւնը կարծում է թէ նոր պէտք է սովորցնի:

ԱՆՏՈՆԻՕ

Շատ դուրեկան է, երբ մարդ ինքն իրենով է զբաղւում, եթէ միայն այդպէս օգտաւէտ լինէր: Ոչ մ' մարդ իր ներքինը չի ճանաչում, որովհետեւ իր չափով չափելով, երբեմն իրեն շատ փոքր է համարում և տարաբախտաբար երբեմն էլ շատ բարձր է դասում: Մարդ իրեն ճանաչում է միայն մարդկանց մէջ: Միայն կեանքը ցոյս է տալիս ահն մէկին, թէ ինչ է նա:

ՏԱՍՍՕ.

Հաւանութեամբ և լարզանքով եմ քեզ լսում:

ԱՆՏՈՆԻՕ.

Սե այդ ասելով դու արնուամենայնիւ այլ բան ես կարծում, քան ես կամենում եմ ասել:

ՏԱՍՍՕ

Այդ կերպով մենք չենք մօտենում, Խելացի չէ, լաւ էլ չէ դիտմամբ չը ճանաչել մի մարդուն, ով և լինէր այդ մարդը: Իշխանուհու խօսքը հազիւ թէ հարկաւոր էր, ես քեզ հեշտութեամբ ճանաչեցի: Սե գիտեմ, որ բարի ես ցանկանում և գործում: Անձնական վիճակիդ վերաբերմամբ անհոգ ես, մտածում ես ուրիշների մասին, ուրիշներին ես օգնում և կեանքի դիրաշարժ ալիքի վրայ սիրտդ անփոփոխ է մնում: Սե քեզ այդպէս եմ տեսնում: Սե թիչ կը լինէի ես, եթէ չը դիմաւորէի քեզ: Մթթէ ազահութեամբ չէի որոնում նաև մի մասն թաղցրած գանձիդ, որ դու պահում ես: Գիտեմ, որ չես զըզջալ, եթէ սիրտդ բանաւ: Գիտեմ, իմ բարեկամը կը լինես, եթէ ինձ ճանաչեա: Սե այդպէս մի բարեկամ ինձ վաղուց է:

հարկաւոր: Ես չեմ ամաչում, որ անփորձ եմ և երիտասարդ եմ: Ապագայի ոսկէ ամպը դեռ անշարժ հանգչում է գլխիս վրայ: Ընդունիր ինձ, ո՛վ ազնիւ մարդ, կրճքիդ վրայ և սովորցրու ինձ եռանդուն և անփորձ երիտասարդիս չափաւոր կեանքի:

ԱՆՏՈՆԻՕ

Մէկ վարկեանում պահանջում ես, ինչ որ ժամանակը միայն հասուն խորհրդածութեամբ է տալիս:

ՏԱՍՍՕ

Մէկ վարկեանում սէրը տալիս է ինչ որ ջանքն երկար միջոցում հաղիւ է ձեռք բերում: Ես այդ չեմ խնդրում քեզանից, ես վստահանում եմ պահանջել: Ես քեզ կոչում եմ լանուն առաքինութեան, որ աշխատում է միացնել բարի մարդկանց: Եւ պէտք է արդեօք մի անուն ևս չիչեմ: Իշխանուհին չոյս ունի, Լէօնօրէն կամենում է ինձ առաջնորդել դէպի քեզ և քեզ դէպի ինձ: Ո՛հ, թող տուր, որ նրա ցանկութեանն ընդառաջ գնանք: Թող տուր աստուածուհու առջև միաբան լալտնուենք, առաջարկենք նրան մեր ծառայութիւնը, մեր ամբողջ հոգին: Միաբանուած կատարենք նրա համար ամենաարժանաւոր գործը: Կրկնում եմ, անհ իմ ձեռքս, տուր քոնը: Մի հրաժարուիր և այլ ևս մի մերժիր, ո՛վ ազնիւ մարդ, արժանացրու ինձ լաւ մարդկանց գեղեցիկ վալեղութեանը, որ լաւագոյնին հաւատալով, կարողանամ նրան անձնատուր լինել:

ԱՆՏՈՆԻՕ

Դու լեցուն առագաստներով ես դնում: Սակայն ինձ թւում է, որ դու սովոր ես լաղթել, ամեն տեղ ճանապարհներն ու դռներն առջևդ բաց տեսնել: Ես ցանկանում եմ քեզ ամենայն մի արժանաւորութիւն և ամենայն բախտաւորութիւն, բայց և լաւ տեսնում եմ, որ մենք միմեանցից դեռ շատ հեռու ենք մնացել:

ՏԱՍՍՕ

Թող այդ լինի հասակով, փորձուած արժանաւորութեամբ, բայց զուարթամտութեամբ և հաստատամտութեամբ ոչ ոքի չեմ կարող զիջանել:

ԱՆՏՈՆԻՕ

Կամքը շի գրաւում գործքերը դէպի իրեն: Քաջասրտութիւնը ճանապարհներն իրեն աւելի կայծ է երեւակայում: Ով հաս-

նում է նպատակին, նա պատկազարդում է և մի արժանաւոր շահախ զրկում է պսակից: Սակայն թեթև պսակներ, կան զանազան տեսակի շատ պսակներ: Դրանցից լաճախ կարելի է հեշտութեամբ ստանալ զքօսնելու ժամանակ:

ՏԱՍՍՕ

Ինչ որ մի աստուածութիւն մէկին հեշտութեամբ է տալիս և միւսին խստութեամբ արգելում է, այդպէս մի ինչքամեն մարդ չի կարող ստանալ երբ կամենալ և բաղձալ:

ԱՆՏՈՆԻՕ

Վերնգրիր շատուածներից առաջ, բախտին, այն ժամանակ ես լստարութեամբ կը լսէի, որովհետև նրա ընտրութիւնը կոյր է:

ՏԱՍՍՕ

Արդարութիւնն էլ ունի աչքի մի կապ և փակում է ամեն մի կեղծիքի աչքերը:

ԱՆՏՈՆԻՕ

Թող բախտաւորուածն իր բախտը հեշտութեամբ բարձր դասի, թող նա իր արժանաւորութեան համար հնարի հարիւրաւոր աչքեր և խելացի ընտրութիւն և խիստ հոգացողութիւն, թող նրան անուանի Մինէրվա, թող անուանի ինչպէս կամենում է, թող ողորմութեամբ տուած պարզէն ընդունի որպէս վարձատրութիւն, պատահաբար զարդարանքը որպէս վաստակած զարդ:

ՏԱՍՍՕ

Կարիք չունէիր աւելի պարզ լինել: Այդ բաւական է: Խոր նալեցի սրտիդ մէջ և ընդմիշտ ճանաչեցի քեզ: Ո՛հ, եթէ իմ իշխանունին էլ քեզ այսպէս ճանաչէր: Ի զուր մի շուպլիբ աչքերիդ և լեզուիդ սլաքները: Դու ի զուր ես սլաքներդ դարձնում դէպի աւն անթառամ պսակը, որ գլխիս վրայ է: Նախ եղիբ այնքան մեծ, որ չը նախանձես ինձ: Այն ժամանակ կարող ես նրան վիճելի դարձնել: Ես սբութեամբ եմ գնահատում այդ և բարձր բարիքը: Սակայն ցոյց տուր ինձ այն մարդուն, որ արժանացել է այն բանին, որին ես ձգտում եմ, ցոյց տուր ինձ դիւցազնին, որի մասին պատմութիւնները խօսէին: Առաջ բեր բանաստեղծին, որ կարողանար համեմատուել Հովերոսի և Վիրգիլիոսի հետ, այն, աւելի ևս ասեմ, ցոյց տուր այն մարդուն, որ հրեք անգամ արժանացած լի-

նէր այս վարձատրութեանը, որին գեղեցիկ թաղն եռապատիկ աւելի ամաչացրած լինէր, քան ինձ: Այն ժամանակ ծունկ իջած կը տեսնես ինձ այն աստուածութեան առջև, որ ինձ ալդպէս պարզեաւորեց: Ես տեղիցս չէի բարձրանալ, մինչև որ ալդ զարդարանքը չը վերցնէր իմ գլխից, զնէր իր գլխին:

ԱՆՏՕՆԻՕ

Հարկաւ ալդ չափով արժանի ես նրան:

ՏԱՍՍՕ

Թող քննադատեն ինձ, չեմ կամենում խուսափել, սակայն արհամարանքի չեմ արժանացել: Այն թագը, որով իմ իշխանն ինձ արժանաւորութեամբ պատուեց, որ իմ իշխանուհու ձեռքը հիւսեց իմ համար, ոչ ոք չը պէտք է ենթարկի ոչ կասկածանքի, ոչ էլ հեզմական ծիծաղի:

ԱՆՏՕՆԻՕ.

Պատշաճելի չէ հպարտ ձայնը և լանկարծակի զայրութիւն ոչ քեզ դէպի ինձ, նույնպէս ոչ քեզ այս տեղում:

ՏԱՍՍՕ.

Ինչ որ դու այս տեղ քեզ թող ես տալիս, նույնն իմ համար էլ է պատշաճ: Եւ միթէ ճշմարտութիւնն այստեղից աքսորուած է: Միթէ պաշտում ազատ խօսքն արգելուած է: Մի աղնիւ մարդ, միթէ այս տեղ պէտք է միայն ճնշում կրի: Ինձ թուած է, որ այս տեղ վսեմութիւնը, հոգու վսեմութիւնը, հէնց իր տեղումն է: Վսեմութիւնը չի համարձակուելու արդեօք այս երկրի մեծամեծների մերձաւորութեամբն ուրախանալ: Կարող է և պէտք է: Մենք մօտենում ենք իշխանին միայն աղնուականութեամբ, որ ժառանգել ենք նախնիքից: Ի՞նչու ոչ հոգով, որ բնութիւնն իւրաքանչիւրին բաւարար չափով չի տուել, ինչպէս և չի կարողացել տալ մեծաշուք նախնեաց մի շնորք: Այս տեղ միայն փոքրոգութիւնը պէտք է իրեն երկչոտ զգալ, նախանձը, որ ամօթալի կերպով իրեն լալտնում է, որպէս սարդի կեղտոտ ոտտայն, չը պէտք է կպած լինի այս մարմարիտնի պատերից:

ԱՆՏՕՆԻՕ.

Դու ինքդ ինձ ցոյց ես տալիս իմ իրաւունքը քեզ արհամարհելու: Վաղվաղկոտ երեխան ցանկանում է հաստատակամ մարդու հաւատարմութիւնը և բարեկամութիւնն ուժով:

ձեռք բերել: Դու անհամեստ ես, միթէ կարծում ես, որ քեզ կարգին ես վարում:

ՏԱՍՍՕ.

Աւելի լաւ է քո ասածով անհամեստ լինել, քան թէ ինքս ստիպուած լինիմ ինձ անազնիւ համարել:

ԱՆՏՈՆԻՕ.

Դու դեռ այնքան երիտասարդ ես, որ լաւ կրթութիւնը կարող է քեզ մի աւելի լաւ ճանապարհ հրահանգել:

ՏԱՍՍՕ.

Այնքան էլ երիտասարդ չեմ, որ կուռքերի առաջ խոնարհեմ և այնքան չափահաս եմ, որ կարող եմ կամակորութիւնը զսպել կամակորութեամբ:

ԱՆՏՈՆԻՕ.

Ուր վճռում են շրթնախաղը և լարախաղն, այն տեղից 'ի հարկէ հեռանում ես որպէս զիւցազն և լաղթող:

ՏԱՍՍՕ.

Յանդգնութիւն կը լինէր, եթէ բռունցքս գովէի, որովհետև դեռ ոչինչ չի կատարել, սակայն կարող եմ վստահ լինել նրա վրայ:

ԱՆՏՈՆԻՕ.

Յուզ խնայողութեան վրայ է, որ բախտիդ լանդուզն ընթացքում քեզ շատ երես է տուել:

ՏԱՍՍՕ.

Ես ինքս զգում եմ, որ արդէն չափահաս եմ: Բոլորովին չէի կամենալ քեզ հետ փորձել զէնքի համարձակ խաղը: Բայց դու բորբոքում ես լուզքը լուզքի վրայ, ուղեղս եռում է, ոխի ցաւալի ցանկութիւնը փրփրալով եփուում է կրծքումս, եթէ դու այն մարդն ես, որ պարծենում է, կանգնիր առջևս:

ԱՆՏՈՆԻՕ.

Դու բոլորովին չը գիտես, թէ ո՞վ ես և ո՞րտեղ:

ՏԱՍՍՕ.

Ոչ մի սրբութիւն չի պատուիրում մեզ հայնուանք տանել: Դու չարախօսում ես, դու պղծում ես այս վալրերը, ոչ ես, որ քեզ առաջարկեց հաւատարմութիւն, լարգանք, սէր, որ ամենազեղեցիկ նուէրներն են: Քո խելքն ազտտում է այս արքայութիւնը և քո խօսքերն այս մաքուր սրահը, ոչ

արտիս լեցուն զգացմունքը, որ շառաչում է, չի կարող կրել
ամենափոքր բիծ:

ԱՆՏՕՆԻՕ.

Լ'նչ մեծ հոգի փոքրիկ կրծքում:

ՏԱՍՍՕ.

Այս տեղ դեռ տեղ կալ կուրծքը թեթևացնելու համար:

ԱՆՏՕՆԻՕ.

Ժողովուրդն էլ խօսքերով է իրեն թեթևացնում:

ՏԱՍՍՕ.

Եթէ դու ինձ նման աղուական ես, ապացուցի՛ր:

ԱՆՏՕՆԻՕ.

Ի հարկէ ազնուական եմ, բայց գիտեմ, թէ՛ որ տեղ եմ:

ՏԱՍՍՕ.

Արի՛ վայր գնանք, որ մեր դէնքը կարող է արժէք ու-
նենալ:

ԱՆՏՕՆԻՕ.

Որովհետեւ չը պէտք է մենամարտութեան հրաւիրէիր,
ալդ պատճառով էլ չեմ կարող հետեւել քեզ:

ՏԱՍՍՕ.

Եր'չոտութեան համար այդպիսի արդելքը ծեռնտու է:

ԱՆՏՕՆԻՕ.

Երկչոտն սպառնում է միայն ուր նա ապահով է:

ՏԱՍՍՕ.

Ուրախութեամբ կարող եմ հրաժարուել ալդ ապահովու-
թիւնից:

ԱՆՏՕՆԻՕ.

Խնայիր միայն քեզ. դու այս վայրերը չես խնայում:

ՏԱՍՍՕ.

Թող այս վայրերն ինձ ներեն, որ ես կրեցի ալդ:

(սուրը հանում է)

Հանի՛ր կամ հետեի՛ր, եթէ չես կամենում, որ լաւիտեան
արհամարհեմ քեզ, ինչպէս քեզ ատում եմ:

ՉՈՐՐՈՐԳ ՏԵՍԻԼ

ԱԼՖՅՈՆՍ, ԱՌԱՋԻՆԵՐԸ

ԱԼՖՅՈՆՍ.

Ի՞նչ անակնկալ կուուի մէջ եմ տեսնում ձեզ:

ԱՆՏՕՆԻՕ.

Դու ինձ անպաշտպան ես տեսնում, ո՞վ իշխան, մէկի առջև, որին կատաղութիւնը բռնել է:

ՏԱՍՍՕ.

Ես աղօթում եմ քեզ, որպէս մի աստուածութեան, որ մի հայեացքով միայն զգուշացնելով, զսպում ես ինձ:

ԱԼՖՅՈՆՍ

Պատմիր Անտօնիօ, ասած ինձ Տասսօ, երկպառակութիւնն քնչպէս է մուտք գործել իմ տան մէջ: Ի՞նչպէս է նա ձեզ գրաւել, բարքի, օրէնքների շաւղից, ցնորքի ենթարկել խելացի մարդկանց: Զարման հում եմ:

ՏԱՍՍՕ.

Ես հաստատ համոզուած եմ, որ դու մեզ երկուսիս էլ չես ճանաչում: Ահա այս մարդը, որ լալտնի է որպէս խելացի և բարեբարոյ, վարուեց ինձ հետ որպէս կոպիտ, խորամանկ, որպէս անկիրթ և անազնիւ մարդ: Վստահ մօտեցալ սրան և սա ինձ 'ի բաց միրժեց: Սրտանց սիրելով զիմեցի ես սրան և սա դառնութեամբ, դառնազօն վարուելով, չք հանգստացաւ, մինչև որ արիւնիս ամենամաքուր կաթիլը մաղձի ալլակերպեց: Ներքի: Դու ինձ այս տեղ կատաղածի նման տեսար: Սրանն է բոլոր մեղքն, եթէ ես մեղաւոր դուրս եկալ: Նա լուզքն ուժգնութեամբ բորբոքեց, որ պատեց ինձ և ինձ էլ, դրան էլ վիրաւորեց:

ԱՆՏՕՆԻՕ

Սրան լափշտակեց բանաստեղծի բնրճր աշխուժը: Դու, ո՞վ իշխան, խօսքդ առաջ ինձ ուղղեցիր, հարց տուիր ինձ, թող այժմ ինձ թուլ տուած լինի, որ այս արագ ճարտասանից լետով ես էլ խօսեմ:

ՏԱՍՍՕ

Այո՛, պատմիր բառ առ բառ, պատմիր: Համարձակուիր, եթէ միայն կարող ես. լալտնել այս դատաւորին ամեն մի խօսք, ամեն մի կերպարանափոխութիւն: Երկրորդ անգամ

վիրաւորիք քեզ և քո դէմ վկայութիւն տուր: Իսկ ես չեմ ուրանալ ոչ մի արտաշնչութիւն. զարկի ոչ մի ծփանքը:

ԱՆՏՈՆԻՑ

Եթէ էլի ասելու բան ունես, ասա: Եթէ ոչ, լռիք և մի ընդհատիր ինձ: Թէ ես, իմ իշխան, թէ ալս ղիւրաբորբոք զլուխն առաջինն սկսեց կռիւը, որն էլ որ լինի, անիրաւ է, ալդ ալ հարց է, որի մասին առ ալժամ դեռ չը խօսենք:

ՏԱՍՍՕ

Ինչպէս: Կարծեմ ալդ առաջին հարցն է, թէ մեղանից ով է իրաւացի և ով անիրաւ:

ԱՆՏՈՆԻՑ

Բոլորովին ալդպէս չէ, ինչպէս մի անզուսպ խեղք կարող է մտածել:

ԱԼՖՅՈՆՍ

Անտճնիօ:

ԱՆՏՈՆԻՑ

Ամենաողորմած, ես լարգում եմ քո ակնարկութիւնը, բայց թող նա լռէ: Երբ խօսքս վերջացրած լինեմ, թող լետող նա խօսի: Գուցէ կը դատես: Ես միայն ասում եմ, որ ես չեմ կարող սրա հետ դատ վարել, չեմ կարող սրա վրայ գանգատուել, ոչ պաշտպանուել սրանից, ոչ էլ բաւականութիւն առաջարկել սրան: Որովհետեւ ալսպէս բոպէլիս սա աղատ մարդ չէ: Սրա վրայ ծանրանում է մի խիստ օրէնք, որ քո գութը միայն կարող է մեղմացնել: Սա ինձ սպառնաց ալստեղ, մենամարտութեան կոչեց: Գո առջև հազիւ թագցրեց մերկացրած սուրբ: Լե եթէ դու չը միջամտէ՛քր տէր, ես էլ պարտազանց կը լինէի և որպէս մեղապարտ, ամօթով առջևդ կանգնած կը լինէի:

ԱԼՖՅՈՆՍ (Տասսօին)

Լաւ չես արել:

ՏԱՍՍՕ

Իմ սիրտս ինձ արդարացնում է, ո՛վ տէր, ի հարկի քոնն էլ կարողարացնի: Այո, ուղիղ է, ես սպառնացել եմ, ես մենամարտութեան եմ կոչել, մերկացրել եմ սուրբ: Այլայն չես կարող երեսակալել, թէ ինչպէս սրա նենգաւոր լեզուն ընտիր խօսքերով վիրաւորեց ինձ, ինչպէս սրա խալթող և սուր ատամն իր նուրբ թոյնն արիւննիս մէջ թափեց և ջերմս աւելը:

ն աւելի սաստկացրեց: Եւ հանդարտութեամբ և սառնութեամբ հասցրեց ինձ ծալրալեղութեան: Ո՛հ, դու սրան չես ճանաչում և երբէք էլ չես ճանաչի: Ես ջերմ առաջարկեցի սրան իմ ամենազեղեցիկ բարեկամութիւնը և նա իմ աչք պարզեները զլորեց ստներիս տակ: Եւ եթէ սիրտս բորբոքուած չը լինէր, լաւիտեան անարժան կը լինէր քո ողորմածութեանը և քո ծառայութեանը: Ներքեր, եթէ մոռացութեան եմ տուել օրէնքը և այս վայրերը: Ոչ մի տեղ չեմ կտրող ստորուստալ, ոչ մի տեղ չեմ կտրող ստորուստիւն կրել: Եթէ այս սիրտս, որտեղ էլ որ լինի, քեզ համար և իր համար չը գործի, այն ժամանակ պատժիր, այն ժամանակ մերժիր և երբէք մի թողնիր, որ աչքդ տեսնեմ:

ԱՆՏՕՆԻՕ

Երկասարգը որպիսի հեշտութեամբ մեծ ծանրութիւն է վերցնում իր վրայ և սխալանքը փոշու նման թափ է տալիս իր շորերից: Զարմանալի կը լինէր, եթէ բանաստեղծութեան կախարդական ուժը մեզ անպատ չը լինէր, որ անկարելի բանի հետ սիրում է լծարութեամբ խաղալ: Ես գրեթէ երկբայում եմ, իմ իշխան, թէ դու և թէ քո բոլոր ծառաներն այս գործն աննշան համարեն: Վեհափառութիւնը տարածում է իր հովանաւորութիւնն ամեն մէկի վրայ, որ մտնում է նրան և նրա անեղծ բնակարանին, որպէս մի աստուածութեան: Որպէս մի խորանի առջև, արդէն սեամքում զսպում է ամեն մի կիրք: Այնտեղ չի փալլում ոչ մի սուր, այնտեղ չի արտասանում ոչ մի սպառնալի խօսք, այնտեղ նաև վիրաւորանքը չի պահանջում ոչ մի վրէժխնդրութիւն: Բաւական լաֆն դաշտ և արձակ տեղ է մնում զայրութի և անհաշտութեան համար: Այնտեղ ոչ մի երկչոտ չի սպառնալ, այնտեղից ոչ մի մարդ չի կարողանալ փախել: Քո նախնիքը հիմնել են այս պատերն ապահովութեան համար, որոնց արժանիքին միացել է մի սրբութիւն, այս խաղաղութիւնը ծանր պատիժներով պահպանել են խստութեամբ, կորովութեամբ: Մեղապարտն ենթարկուել է աքորանքի, բանտարկութեան և մահի: Այն ժամանակ ուշադրութիւն չէին դարձնում անձնաւորութեանց վրայ, մեղմութիւնը չէր բռնում իրաւունքի ձեռքը: Եւ ինքը չարագործը վախենում էր: Ալժամ տեսնում ենք, որ երկար և քեղեցիկ խաղաղութիւնից լետու, բարքի իշխանութեան մէջ

մտել է կոպիտ կատաղութիւն ցասումով: Տէր, վճռիր, պատժիր, որովհետև ով որ կարող է գործել իր սահմանափակ շրջանում, մթթէ օրէնքը և նրա իշխանի ուժը չի պաշտպանել նրան:

ԱԼՖՕՆՍ

Իմ անկողմնապահ սիրտը աւելի է ասում ինձ, քան դուք երկուսդ էք ասում և ասել կարող էք: Դուք աւելի լաւ կը կատարէիք ձեր պարտաւորութիւնն, եթէ դատավճիռս չը լայանէի, որովհետև այստեղ իրաւունքը և անիրաւութիւնը միմեանց շատ են նման: Եթէ Անտօնիօն քեզ վիրաւորել է, պէտք է քեզ մի կերպ բաւականութիւն տայ, ինչպէս որ դու կը պահանջես: Ինձ հաճելի կը լինէր, եթէ դուք ինձ միջնորդ ընտրէիք: Սակայն քո լանցանքը, Տնասօ, դատապարտում է քեզ բանտարկութեան: Բայց որովհետև քեզ ներում եմ, այդ պատճառով էլ քեզ համար մեղմացնում եմ օրէնքը: Գնա՛, Տնասօ: Մնա՛ քո սենեակում և միայն ինքդ քեզ վրայ հսկիր:

ՏԱՍՍՍ

Ա՛յդ է, ով իշխան, քո դատավճիռը:

ԱՆՏՕՆԻՑ

Մթթէ չես տեսնում հալրտկան մեղմութիւնը:

ՏԱՍՍՍ (Անտօնիօին)

Առ այժմ քեզ հետ խօսելու բան չունեմ:

(Ալֆօնսին)

Ո՛վ իշխան, քո ծանրակշիռ խօսքն, ինձ ազատ մարդուս, բանտարկութեան է լանձնում: Թո՛ղ այդպէս լինի: Դու այդ իրաւացի ես համարում: Պաշտելով քո սուրբ խօսքն, ես պատուիրելու եմ իմ սրտիս, պահպանել ամենախոր լուծթիւն: Այս լմ համար մի նոր բան է, այնչափ նոր, որ համարեալ թէ այս գեղեցիկ վալրում քեզ և ինձ չեմ ճանաչում: Սակայն սրան լաւ եմ ճանաչում: Ես կամենում եմ հնազանդել, թէպէտ և այստեղ դեռ կարող էի և պէտք է որ շատ բան ասէի: Նրթռունքս լամբանում են: Յանցանք էր դա արդեօք: Գո՛նէ թւում է, որպէս թէ ես լանցաւոր լինէի: Ինչ էլ որ սիրտս ասէ, ես կալանաւորուած եմ:

ԱԼՖՕՆՍ

Դու դրան աւելի նշանակութիւն ես տալիս, քան ես ինքս:

ՏԱՍՍՕ

Ինչպէս որ է, ինձ անհասկանալի է մնում, թէպէտև ոչ անհասկանալի, ես երեխայ չեմ: Ես կարծում եմ, ես պէտք է ալդպէս ենթադրէի: Յանկարծ ինձ ակնարկում է մի պարզութիւն, սակայն բոպէապէս կրկին ծածկւում է: Ես լսում եմ միայն իմ դատաւիճիւնը, խոնարհում եմ: Սրանք արդէն շատ զուր խօսքեր են: Այժմից սովորիր խոնարհելու, անզօր, դու մոռացար, թէ որտեղ էիր կանգնած: Կարծեցիր թէ աստուած ների սրահը հարթ գետնի վրայ է, այժմ լանկարծական դէպքը լաղթեց քեզ: Յօժարութեամբ հնազանդուիր, որովհետև ալը մարդին պատշաճ է նորնպէս կամաւ կատարել ամենադժուարինը: Ահա նախ մաւ ալս սուրը, որ դու սուիր ինձ, երբ կարդիրնալին ուղեկցում էի դէպի Ֆրանսիա: Ես դրան փառքով եմ գործադրել, սակայն այսօր էլ անպատուութեամբ չեմ գործածել: Յուսալից պարզեցի հրաժարում եմ խոր սըրտաշարժում:

ԱԼՖՅՈՒՍ

Դու չես զգում, թէ որքան հակուած եմ դէպի քեզ:

ՏԱՍՍՕ

Ինձ վիճակուած է հնազանդել և ոչ մտածել: Հակատագիրս տարաբախտաբար պահանջում է ինձնից մերժել ամենահիանալի պարգևը: Թագը չի զարդարում կալանաւորուածին: Ես ինքս վերցնում եմ իմ գլխից այն զարդը, որ թւում էր թէ լաւտեան ինձ շնորհուած լինէր: Շատ վաղ շնորհուեց ինձ ամենագեղեցիկ բախտը և կարծես թէ նրանով պանծացած լինէի, որ շատ շուտ առնուեց ինձնից: Դու ինքդ ես վերցնում արն, ինչ որ ոչ ոք վերցնել չէր կարող, որ ոչ մի աստուած երկրորդ անգամ չի տալ: Մենք, մարդիկս զարմանալի կերպով ենք փորձուում: Եթէ բնութիւնը տուած չը լինէր մեզ սքանչելի թեթևամտութիւնը, մենք չէինք կարող դիմանալ: Կարիքը շուալութեամբ սովորցնում է մեզ հանդարտ խաղալ անգին ինչքի հետ: Մենք լօժարութեամբ բաց ենք անում մեր ձեռքերը, որ մի ինչք անդառնալի սահէ մեզնից: Այս համբուրի հետ միանում է մի արտասուք և նուիրում է քեզ անցաւորութեանը: Այդ թող է տուած, որպէս մեր թուլութեան մի սքանչելի նշան: Ո՞վ չի լալ, եթէ անմահական ինքը խորտակուելուց ապահով չէ: Միաբանուիր ալս սրի

հետ, որ տարաբախտաբար քեզ չը գրաւեց: Սրա շուրջը վաթաթուած հանգչիր, ինչպէս քաջերի դագաղի վրայ ըստտիս գերեզմանի և իմ լուսի վրայ: Այստեղ լոծարութեամբ դնում եմ ոտներիդ տակ երկուսն էլ: Որովհետեւ ո՞վ է լաւ զինուած, երբ դու բարկանում ես: Եւ ո՞վ է զարդարուած, ո՞վ տէր, որին դու չես ճանաչում: Գնում եմ կալանաւորուած, սպասում եմ դատաստանի:

(Գնում է: Իշխանի ակնարկով մի մանկլաւիկ վերցնում է սուրբ պսակի հետ և դուրս է տանում):

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Յ Ե Ս Ի Լ

ԱԼՖՕՆՍ, ԱՆՏՕՆԻՕ

ԱՆՏՕՆԻՕ

Ի՞նչ է երազում պատանին: Ինչպիսի գոչերով է նկարագրում իր արժանաւորութիւնը և իր ճակատագիրը: Սահմանափակ և անփորձ երիտասարդութիւնն իրեն կարծում է միայնակ ընտրեալ էակ և իրեն ամեն բան թող է տալիս: Նա իրեն պատժած է զգում, և պատժել նշանակում է երիտասարդին լաւութիւն անել, որ հասակն առնելով մեզ շնորհակալ լինի:

ԱԼՖՕՆՍ

Նա պատժուած է, միայն վախենում եմ, որ շատ պատժուած լինի:

ԱՆՏՕՆԻՕ

Եթէ ցանկանում ես նրա հետ աւելի մեղմ վարուել, վերադարձրո՛ւ նրան, ո՞վ իշխան, ազատութիւնը և մար տարաձայնութիւնը թող վճռի սուրբ:

ԱԼՖՕՆՍ

Եթէ վարկն այդ պահանջում է, թող ալդպէս լինի: Բալց ասան, քնչպէս գրգռեցիր նրա զայրուիթը:

ԱՆՏՕՆԻՕ

Ես ինքս չը գիտեմ, թէ ինչպէս պատահեց: Կարելի է, որպէս մարդու, նրան վիրաւորած լինեմ, որպէս ազնուականի, նրան չեմ վիրաւորել: Եւ ամենամեծ բարկութեան միջոցին էլ նրա շրթունքից ոչ մի անվայել խօսք չի թռել:

ԱԼՖՅՕՆՍ

Այդպէս էլ թուաց ինձ ձեր կռիւը և ինչ որ մտածում էի, քո խօսքերն աւելի ևս հաստատում են: Երբ այր մարդիկ միմեանց հետ կուռում են, արդար են համարում խելացուն ընդունել մեղապարտ: Դու նրա հետ չը պէտք է կուռէիր, քեզ աւելի վայել կը լինէր առաջնորդել նրան: Դեռ ևս ժամանակ կա: Այստեղ մի դէպք չի եղել, որ ստիպէր ձեզ կըռուելու: Քանի որ խաղաղութիւն եմ վայելում, ևս կը ցանկալի նոյնքան միջոց վայելել նրա ներկայութիւնն, իմ տան մէջ: Վերականգնեցրու խաղաղութիւնը, դու այդ հեշտութեամբ կարող ես: Նախ թող Լէօնօրէ Սանվիտալէ'ն քնքով շրթունքով փորձի մեղմացնել նրան: Յետոյ մօտեցիր նրան, իմ անունից վերադարձրու նրան կատարեալ ազատութիւն և ազնիւ ու ճամբիտ խօսքերով վաստակիր նրա հաւատարմութիւնը: Կատարիր որքան կարող ես շուտ: Դու կը խօսես նրա հետ որպէս բարեկամ և հայր: Առաջ քան մեկնենք, ևս կը ցանկալի խաղաղութիւն տեսնել: Եւ եթէ կամենաս, քեզ համար ոչինչ անկարելի չէ: Աւելի լաւ կը լինի մէկ ժամ աւելի երկար մնանք և լետոյ կանանց լանձնենք քաղցրութեամբ վերջացնել, ինչ որ դու ձեռնարկել ես, և երբ վերադարձած լինենք, անհետացրած կը լինեն այս լանկարծակի տպաւորութեան վերջին հետքերը: Թուում է, Անտօնիօ, որ դու չես կամենում գործելու սովորութիւնդ կորցնել: Հազիւ վերջացրիք մի գործ, վերադարձար և քեզ համար իսկոյն մի նորն ստեղծեցիր: Յոյս ունեմ, որ այս էլ կը լաջողի քեզ:

ԱՆՏՕՆԻՅՕ

Ես ամաչում եմ և քո խօսքերից տեսնում եմ իմ մեղքը, որպէս կարելի է տեսնել մի պարզ հայելու մէջ: Մարդ ուրախութեամբ է խոնարհում մի ազնիւ տիրոջ, որ հրամայելով է համոզում:

ԵՐՐՈՐԳ ԳՈՐԾԱՂ ԱՌԹԻՒՆ

ՌԻԸՋԻՆ ՏԵՍԻԼ

ԻՇԽԱՆՈՒՀԻ (միայն)

Ո՛ր մնաց Լէօնօրէ'ն: Հոգսն ամենայն վարկեան աւելու՛մս:

լի և աւելի ցաւալի է շարժում սրտիս խորքը: Հազիւ դիտեմ,
թէ ինչ պատահեց, հազիւ գիտեմ, թէ երկուսից ո՞րն է մեղա-
ւոր: Ո՛հ երանի դարձ Գօթարութեամբ չէի կամենալ խօսել
ոչ եղբօրս, ոչ էլ Անտօնիօի հետ, մինչև որ կարողանալի պատ-
րաստուել, մինչև լսէի, թէ դործն ինչ դրութեան մէջ է և
ինչ կարող է պատահել:

Ն Բ Կ Բ Ո Ր Գ Ց Յ Ս Ի Լ

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ԼԷՕՆՕՐԷ

Ի՞նչ լուր ես բերում, Լէօնօրէ, առն ինձ, ինչ դրու-
թեան մէջ է մեր բարեկամների գործը: Ի՞նչ պատահեց:

ԼԷՕՆՕՐԷ

Չը կարողացայ իմանալ աւելի, քան մենք գիտենք:
Նրանք միմեանց հակառակել էին, Տասսօ՛ն սուրը մերկացրել
էր, եղբայրդ նրանց ջոկել էր: Միայն թուամ է, որ Տասսօ՛ն
է սկս՛ւ ալդ կռիւը: Անտօնիօ՛ն աղատ զբռնում է և խօսում
է իր հշխանի հետ, ալն ինչ Տասսօն կալանաւորուած է իր
սենեակում և միայն է:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Անկասկած Անտօնիօն նրան զալբացրել է, բարձր տրա-
մադրուածին օտարօտի և սառնութեամբ վիրաւորել է:

ԼԷՕՆՕՐԷ.

Նս էլ ալդպէս եմ կարծում, որովհետև երբ նա մեզ
մօտեցաւ, մի ամպ կանգնած էր նրա ճակատի շուրջը:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Ա՛խ, ինչպէս մոռանում ենք հետևել մաքուր, հանդարտ
սրտի ակնարկին: Մի աստուած շատ մեղմ խօսում է մեր
կրծքում, բոլորովին մեղմ, հազիւ լսելի կերպով լալանում է
մեզ, թէ ինչին պէտք է մօտենալ և ինչից փախչել: Այս
սուաւօտ Անտօնիօն ինձ թուեց աւելի կոշտ, քան մի որ և է
անգամ և ինքն իր մէջ աւելի խորասուզուած: Հողիս ինձ
զգուշացնում էր, երբ Տասսօն նրա մօտ էր կանգնած: Նախք
միայն նրանց երկուսի արտաքինը, երեսը, խօսելու ձևը,
հայեացքը, քալուածքը: Ամեն ինչ միմեանց հակառակ է: Նը-
րանք երբէք չեն կարող միմեանց սէր փոխարինել: Սակայն

Վեղծաւոր լուր համոզում էր ինձ, թէ բարեկամներդ երկուսն էլ խելացի, ազնիւ, բարեկիրթ են: Եւ քնչ կարող է բարի մարդկանց կապից հաստատ լինել: Ես ստիպեցի երիտասարդին և նա բողբոջին անձնատուր եղաւ: Որքան նա գեղեցիկ և ջերմ կերպով ինձ բողբոջին անձնատուր եղաւ: Ո՛հ, եթէ ևս իսկոյն Անտօնիօի հետ խօսած լինէի: Ես դանդաղեցի: Ժամանակը կարճ էր: Ես խորշում էի հէնց առաջին խօսակցութեան միջոցին երիտասարդին ջերմարար լանձնարարել նրան: Յոյս դրեցի պատշաճութեան և քաղաքավարութեան վրայ, աշխարհում ընդունուած սովորութեան վրայ, որ լարմար դրում է թշնամեաց մէջ: Վախենում էի փորձառու մարդուց, ոչ աշխոյժ երիտասարդից: Կատարում է: Չարիքը հեռու էր ինձանից, բայց ահա վրայ է հասել: Ո՛հ, մի խորհուրդ տուր ինձ: Ի՞նչ պէտք է անել:

ԼԷՕՆՕՐԷ.

Խօսքերիցդ երևում է, ինքդ էլ զգում ես, թէ խորհուրդ տալը որքան դժուար է: Այս տեղ մի թիւրիմացութիւն չէ: Ներդաշնակների մէջ, Այդ կարող էին ուղղել խօսքերն, անո, հարկաւոր դէպքում զէնքը կարող էլ հեշտութեամբ և լաշոյութեամբ վերականգնեցնել: Ես վաղուց զգում էի, որ այդ երկու այր մարդիկն, այն պատճառով են միմեանց թշնամի, որ բնութիւնն այդ երկուսից մի մարդ չի ձևակերպել: Եւ եթէ խելացի կերպով ձանաչէին իրենց օգուտը, կը միանային որպէս բարեկամներ: Այն ժամանակ կը կազմէին մէկ անձնատուրութիւն և կեանքում կ'ընթանային որպէս զօրեղ, բաղաւոր և ուրախ մարդիկ: Ես այդպէս լոյս ունէի, այժմ լաւ տեսում եմ, որ իղուր էր: Ինչպէս էլ որ եղած լինի այս օրուան երկպառակութիւնը, պէտք է խաղաղութեամբ վերջացնել, քայց այդ չի ապահովում մեզ վաղուան և ապագայի համար: Կարծեմ, աւելի լաւ կը լինէր, եթէ Տասսօն առժամանակ հեռանար այս տեղից: Նա կարող է գնալ Հռոմ, նոյնպէս Յըլօրէնցա դառնալ: Մի քանի շաբաթից լետոյ այն տեղ կը հանդիպէի նրան և որպէս բարեկամ կը կարողանայի նրա հոգու վրայ աղղել: Այդ միջոցին Անտօնիօն, որ օտարացել է մեզանից, դու կարող կը լինէիր նրան նորից աւելի մօտեցնել քեզ և քո բարեկամներին: Կարելի է, որ այդ կերպով ժամանակն լաշոյեցնի, որ շատ բան տալիս է, ինչ որ այժմ անկալելի է թւում:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Դու կամենում ես ջեղ վալելք պատճառել, ո՞վ բարեկամ: Ես պէտք է զրկուեմ, միթէ արդ արդարացի է:

ԼԷՕՆՕՐԷ.

Ոչնչից զրկուած չես լինի, բացի ան բանից, որ դու այս դէպքում վալելել չես կալող:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Միթէ արսպէս հանդարտօրէն պէտք է աքսորեմ մի բարեկամի:

ԼԷՕՆՕՐԷ.

Պահպանել, որին դու միայն ձեռի համար ես աքսորում:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Նղբարս լօժարութեամբ չի թողնի նրան:

ԼԷՕՆՕՐԷ.

Նիթէ նա մեղ նման նալի, հանգամանքի վրայ, կը համաձայնի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Շատ դժուար է, երբ բարեկամին դատապարտելով, մարդ ինքն իրեն դատապարտում է:

ԼԷՕՆՕՐԷ.

Եւ այնուամենայնիւ ջեղանով վրկում ես բարեկամին:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Ես չեմ համաձայնի, որ արդ կատարուի:

ԼԷՕՆՕՐԷ.

Ուրեմն սպասիր, որ մի աւելի մեծ չարիք պատահի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Դու ինձ տանջում ես և չը գիտես, օգնւտ ես արդեօք բերում:

ԼԷՕՆՕՐԷ.

Շուտով մեզ լալտնի կը լինի, թէ մեզանից ո՞վ է սխալուում:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Եւ եթէ արդ լինելու է այլ ևս ինձ մի հարցնի:

ԼԷՕՆՕՐԷ.

Ով հաստատ է վճռում, յողթում է ցալին:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Հաստատ վճռած չեմ, միայն թող արդպէս լինի, եթէ

նա երկար ժամանակով չի հեռանալու: Եւ թող մենք հոգանք նրա մասին, Լէօնօրէ, որ նա ապագայում պակասութիւն չունենայ, որ դուքը նրա ապրուստն ապագայումն էլ շարունակ յօժարութեամբ տալ: Խօսիր Անտօնիօի հետ, որովհետեւ եղբօրս մօտ նա շատ ոյժ ունի և նա երկպառակութեան պատճառով չի կամենալ մեր բարեկամին և մեզ թշնամութիւն անել: ԼԷՕՆՕՐԷ.

Քո մէկ խօսքն, իշխանուհի, աւելի նշանակութիւն կ'ունենայ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Դու գիտես, որ ես չեմ կարող, իմ բարեկամ, խնդրել իմ համար և իմ բարեկամների համար, ինչպէս կարողանում է իմ քույր Ուրբինօն: Ես յօժարութեամբ ալապէս հանգիստ ապրում եմ և եղբօրիցս շնորհակալութեամբ ընդունում եմ, ինչ որ նա միշտ կարող է և կամենում է ինձ տալ: Ես ինքս շատ անգամ կշտամբել եմ ինձ, ալժմ ես ինձ լաղթահարել եմ: Այդ պատճառով մի բարեկամ ինձ շատ է լանդիմանել. տսել է, դու անշահասէր ես, որ շատ գեղեցիկ է, բայց այնքան որ չես կարող զգալ բարեկամներին կարիքն ըստ արժանոցն: Ես թողնում եմ, որ հէնց ալապէս լինի և ալք պատճառով էլ ալժմ պէտք է կրեմ լանդիմանութիւն: Եւ ալժմ աւելի ես ուրախ եմ, որ իրապէս կարող եմ բարեկամիս օգտուէտ լինել: Մօրիցս ինձ ժառանգութիւն կը հասնի և ես յօժարութեամբ ցանկանում եմ օգնել նրա մասին հոգալու:

ԼԷՕՆՕՐԷ.

Եւ ես, ճիւղ իշխանուհի, մի այնպիսի պատեհութեան մէջ եմ, որ ես նոյնպէս կարող եմ ինձ ցոլց տալ որպէս բարեկամ: Նա լաւ տնտես չէ: Ինչ որ նրան պակաս լինի, ճարպիութեամբ կարող կը լինիմ օգնել:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Ուրեմն տար նրան, և եթէ զրկուելու եմ նրանից, թող ամենից առաջ քեզ պատկանի: Ես լաւ տեսնում եմ, որ ալապէս աւելի լաւ կը լինի: Պէտք է արդեօք այս ցաւը փրկարար և լաւ համարեմ: Մանկութիւնիցս ալապէս է եղել իմ վիճակը, ալժմ ես նրան սովոր եմ: Ամենագեղեցիկ բախտը միայն կիսով չափ կորցրած է, եթէ ձեռք բերելու մասին հաստատ լոյս չենք դնում:

ԼԷՕՆՕՐԷ.

Թու ունիմ բախտաւոր տեսնել քեզ, որքան գեղեցկաբար որ արժանի ես:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

ԼԷՕՆՕՐԷ. բախտաւոր: Ո՞վ է բախտաւոր, թէպէտ եղբօրս կը կամենալի ալդպէս անուանել, որովհետեւ նրա մեծ հոգին կրում է նրա ճակատագիրը միշտ միակերպ քաջութեամբ: Բայ ինչ որ նա վաստակում է, երբէք նրան չի պատկանել, Միթէ իմ քուր Ուրբինօն բախտաւոր է: Այդ գեղեցիկ, ազնիւ, մեծահոգի կինը չի ծնում իր երիտասարդ ամուսնու համար ոչ մի զաւակ: Նա լարզում է իր կնոջը և չի թողնում նրան անհանգիստ լինել, սակայն նրանց տանն ուրախութիւն չը կայ: Մեր մօր կորովամտութիւնն ինչ օգնեց նրան, Ամեն տեսակի գիտութիւնը, նրա մեծ խելքը, կարողացան արգեօք ուրիշների մոլութիւնից պաշտպանել նրան: Մեզ նրանից հեռացրին, այժմ նա մուսած է: Նա չը թողեց մեզ, իր զաւակներին միսիթարութիւն, որ իր Աստուծոյ հետ հաշտուած մեռաւ:

ԼԷՕՆՕՐԷ.

Ո՞հ, մի նայիր, թէ ումն ինչ է պակաս: Տես, թէ ումըն ինչ է, մնում: Քեզ ինչ չի մնում, իշխանուհի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ինձ ինչ է մնում: Համբերութիւն, ԼԷՕՆՕՐԷ: Ես դրան գործադրել եմ մանկութիւնիցս սկսած: Երբ բարեկամներս, քոյրերս տօնին և խաղի ժամանակ միասին ուրախանում էին, հիւանդութիւնն ամուր պահում էր ինձ իմ սենեակում և շատ ցաւերի ընկերակցութեամբ, պէտք է վազօրօք զրկանքի սովորէի: Միայն մէկ բան կար, որ գեղեցիկ գուարճացնում էր ինձ միայնութեանս ժամանակ, այդ երգեցողութեան ուրախութիւնն էր: Ես ինքս ինձ զբաղեցնում էի մեղմ հնչիւններով, որորում էի ցաւս և տենչանքս և ամեն մի ցանկութիւնս: Այդ ժամանակ վիշտը լաճախ վայելք էր դառնում և նաև տխրաւի զգացմունքը — ներդաշնակութիւն: Այդ բախտն էլ չը թողեցին երկար վայելելու, բժիշկը դրանից էլ զրկեց ինձ: Նրա խիստ պատուէրն էլ լուսութեան ենթարկեց ինձ: Պէտք է ապրէի, տանջուէի, միակ փոքրիկ միսիթարութիւնից էլ պէտք է զրկուած մնալի:

ԼԷՕՆՕՐԷ

Քարեկամներիցդ շատերն այցելում էին քեզ և ահա առողջ կենազուարճ ես:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ես առողջ եմ, այսինքն տկար չեմ և ունեմ մի քանի բարեկամներ, որոնց հաւատարմութիւնն ինձ բախտաւորացնում է: Մէկ բարեկամ էլ ունէի. . . .

ԼԷՕՆՕՐԷ

Ալժմ էլ նրան ունես:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եւ նրան շուտով կորցնելու եմ: Շատ նշանաւոր էր այն վարրիկանն, որք ես նրան առաջին անգամ տեսաւ: Զանազան հիւանդութիւններից լետով հազիւ կազդուրուել էի, ցաւը և տկարութիւնը հազիւ անցել էին, կրկին հանգիստ, համեստ նաւում էին կեանքի վրայ, կրկին ուրախանում էի օրուայ վրայ, եղբորս և քրոջս վրայ, անվիհներ ծծում էի քաղցր լոբի մաքուր բալասանը, Համարձակուեցի կեանքի մէջ աւելի հեռու նայել և հեռուից հանդիպեցին ինձ սիրելի ստուերներ: Այդ ժամանակ, Լէօնօրէ, քուրս այդ երիտասարդին ներկայացրեց ինձ: Նա եկաւ քրոջս ձեռքը բռնած և թող քեզ խոստովանեմ, այդ միջոցին սիրտս գրաւուեց նրանով և լաւիտեան գրաւած կը պահի նրան:

ԼԷՕՆՕՐԷ

Ո՛հ, իմ իշխանուհի, մի թույլ տալ քեզ զղջալ: Ազնու բան ծանաչելը վատտայ է, որ երբէք մեզանից խել չի կտրելի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Պէտք է վախենալ գեղեցիկից, սքանչելուց, որպէս մի բոցից, որ հիանալի շահաւէտ է, քանի որ կրակարանումն է վառուում, քանի որ քեզ մի լապտերից է լոյս տալիս: Որքան սքանչելի է, ո՞վ կը կամենալ, ո՞վ կարող է հրաժարուել նրանից: Եւ եթէ իր անպահպան շրջակայքը ճարակում է, որքան դժբախտութիւն է կարողանում առաջ բերել: Ալժմ թող ինձ: Ես շատախօսում եմ և աւելի լաւ կը լինի քեզնից էլ թաղցնեմ, թէ որքան թույլ և տկար եմ:

ԼԷՕՆՕՐԷ

Հոգեկան հիւանդութիւնը մեծ հեշտութեամբ լուծւում է գանգատի և մտերմութեան մէջ:

ԻՇԽԱՆՈՒԷԻ

Եթէ մտերմութիւնը բժշկում է, ևս շուտ կը բժշկուեմ, ևս մաքուր սրտով բողոքովին վստահ եմ քեզ վրայ: Ա՛խ, իմ քարեկամ: Թէպէտե՛ս վճռեցի, որ նա զնայ, բայց ևս արդէն զգում եմ աչն երկար, ընդարձակուած օրերի ցաւը, երբ պէտք է զրկուած լինիմ նրանից, որ ինձ ուրախացնում էր: Արեգակն ալ ևս չի թաղցնում իմ կողերից նրա զեղեցիկ, պարզ, երազական պատկերը: Նրան տեսնելու լոյսն ալ ևս ուրախալի ցանկութեամբ չի լցնում իմ հազիւ զարթնած հոգիս: Իմ առաջին հարկացքը դէպի մեր պարտէզն ի զուր է որոնում նրան ստուերների ցողում: Տենչանքս որքան զեղեցիկ քաւականացած էր զգում իրեն ամեն մի ուրախ երեկոյ նրա հետ լինել: Յարաբերութեան ժամանակ որքան աճում էր պահանջն աւելի ծանօթանալ միմեանց հետ և աւելի հասկանալ միմեանց: Եւ հոգին օրէ ցօր աւելի զեղեցիկ կերպով էր չարմարւում միշտ մաքուր ներդաշնակութեանց համար: Այժմ թնչ տեսակ խաւար է տարածւում իմ առջև: Արեգակի պայծառութիւնը, կէս օրուայ ուրախալի զգացմունքն, աշխարհի բազմատեսակ փառահեղ ներկան դատարկ է և թանձր մառախուղով ծածկուած, որ ինձ չըջապատում է: Սովորաբար ամեն մի օր իմ համար մի ամբողջ կեանք էր: Հոգսը լուռ էր, կասկածն ինքը լամբանում էր և լաջողութեամբ նաւելով, առանց թիալարելու, հոսանքը տանում էր մեզ թեթև ալիքների վրայով: Այժմ մթին ներկայում, ապագայի զարհուրանքը զաղտնապէս լարձակւում է կրծքիս վրայ:

ԼԷՕՆՕՐԷ

Ապագան կը վերադարձնի քեզ քո բարեկամներին և կը բերի քեզ համար նոր ուրախութիւն, նոր բախտ:

ԻՇԽԱՆՈՒԷԻ

Ինչ որ ունիմ լստարութեամբ կը ցանկալի պահպանել: Փոփոխութիւնը զրաղցնում է, սակայն թէ օգտաւէտ է: Երիտաւարդական տենչանքով, երբէք ազահութեամբ չեմ շօշափել ուրիշների վիճակի տուփն իմ կարօտ և անփորձ սրտիս համար, պատահմամբ մի առարկայ որսալու: Պէտք է նրան չարգէի, այդ պատճառով էլ սիրում էի նրան: Եւ պէտք է նրան սիրէի, որովհետև նրա հետ միասին կեանքս կեանք էր, որպիսին ևս երբէք չէի ճանաչել: Սկզբում ինքս ինձ ա-

առւմ էի, հեռացիր նրանից: Եւ խուսափում և խուսափում էի և միայն միշտ աւելի մօտենում էի: Որպիսի հաճուքով հրապուրուեցի և սրքան խիստ պատժուեցի: Անհետանում է մաքուր, ճշմարիտ ինչքա և տենչանքիս տակ մի շար ոգի դնում է ուրախութեան և բախտի տեղ համատեսակ ցաւեր:

ԼԷՕՆՈՐԻՆԷ

Եթէ մի բարեկամի խօսք չի կարողանում մխիթարել քեզ, կարող է գեղեցիկ աշխարհի լաւ ժամանակի հանդարտ ուժն աննշմարելի կերպով զովացնել քեզ:

ԻՇԽԱՆՈՒՂԻ

Աշխարհը շատ գեղեցիկ է: Նրա տարածութեան մէջ շատ լաւ բաներ են շարժւում այս ու այն կողմ: Ա՛խ, միայն միշտ մէկ քալլ հեռու են թւում մեզանից և կեանքի միջով մեր տաղնապալի տենչանքը նոյնպէս քալլ առ քալլ ձգում է մեզ դէպի գերեզման: Շատ սակաւ է պատահում, որ մարդիկ գրտնեն այն, ինչ որ նրանց համար նշանակուած է թւում: Շատ սակաւ է լինում, որ ստանան այն, որին մի բախտաւոր ձեռք հպուել է: Փախչում է, ինչ որ մեզ անձնատուր էր եղած: Մենք թողնում ենք, ինչ որ տենչանքով բռնած ունէինք: Կայ մի բախտ, միայն մենք նրան չենք ճանաչում: Մենք ճանաչում ենք, բայց չենք կարողանում գնահատել:

ՅՐՐՈՐԳ ՏԵՍԻԼ

ԼԷՕՆՈՐԻՆԷ (միայն)

Ինչպէս ցաւ է պատճառում ինձ այն ազնիւ, գեղեցիկ սիրտը: Ի՛նչ տխուր վիճակի է ենթարկուած նորին բարձրութիւնը: Ա՛խ, նա կորցնում է—և դու կարծում ես, թէ կը շահուես: Միթէ այնքան հարկաւոր է, որ նա հեռանալ: Այդ հարկաւոր ես դարձնում, որ միայն քեզ համար գրաւես սիրտն ու տաղանդը, որ դու մինչև այժմ մի ուրիշի հետ էիր վայելում և միթէ անհաւասար էիր վայելում: Միթէ արդար է այդպէս վարուելը: Միթէ բաւարար հարուստ չես, էլ թնչ է պակաս: Ունես և ամուսին, և որդի, և կալքեր, դիրք և գեղեցիկութիւն, դու այդ բոլորն ունես և դու բացի այդ բոլորից, վրամենում ես նրան էլ ունենալ: Սիրում ես նրան. Ուրեմն

ինչ է, ինչո՞ւ չես կարող զրկուել նրանից: Պէտք է ինքդ քեզ խոստովանես: Որքան հրապուրիչ է, նրա գեղեցիկ հոգու մէջ ինքդ քեզ ցոլացնել տալը: Միթէ բախտը կրկնապատիկ գեղեցիկ և սքանչելի չի լինի, եթէ նրա երգը մեզ տանի, բարձրացնի ինչպէս երկնալին ամպերի վրայ: Այն ժամանակ նախանձելի ես: Դու ես, դու միացնակ չունես այն, ինչ որ շատերը ցանկանում են: Յայտնի է, ամեն մարդ էլ գիտէ, ինչ որ դու ունես: Քեզ ճանաչում է հայրենիքը և քեզ նալում է: Այդ է բախտի բարձրագոյն զագաթնակէտը: Միթէ միայն լաուրա ¹⁾ անունն է, որ պէտք է հնչի բոլոր նուրբ շրթունքներից: Եւ միթէ միայն Պէտրարքան իրաւունք ունէր անծանօթ գեղեցկուհուն աստուածացնելու: Ո՞րտեղ կալ մի մարդ, որ համարձակուէր համեմատուել իմ բարեկամի հետ: Ինչպէս աշխարհը նրան մեծարում է, նոյնպէս զալոց աշխարհը նրան լարգելով կանուանի: Որքան սքանչելի է, այս աշխարհի փառքի մէջ նրան մօտն ունենալ, այնպէս նրա հետ մշտն թեթեւ քալելով մօտենալ ապագային: Այն ժամանակ չի կարող ներգործել քեզ վրայ ո՛չ ժամանակը, ո՛չ հասակը և ո՛չ լանդուզն համբաւը, որին հաւանութեան ալիքը քշում է այս ու այն կողմ: Ինչ որ անցաւոր է, պահպանում է նրա երգը: Դու դեռ գեղեցիկ ես, դեռ բախտաւոր ես, թէպէտ և իրաց շրջանն արդէն շատուց քեզ իր հետ տարածէ: Դու պէտք է նրան տիրես և նրանից ¹⁾ ոչինչ չես խլում, որովհետեւ նրա հակումը դէպի արժանաւոր մարդը, նման է նրա միւս կրքերին: Նրա կրքերը լոյս են տալիս որպէս լուանի աղօտ լոյսը, որ գիշեր ժամանակ հազիւ լուսաւորում է ուղեորի ճանապարհը: Նրանք չեն տաքացնում և իրենց շուրջը չեն սփռում ոչ ցանկութիւն և ոչ էլ կենաց ուրախութիւն: Նա ուրախ կը լինի, երբ գիտենալ, որ նա հեռու է, երջանիկ է ինչպէս վալելում էր նրան, երբ նրան ամեն օր էր տեսնում: Այն ժամանակ իմ բարեկամի հետ ինձ չեմ աքսորի նրանից և այս արքունիքից: Ես կը վերագառնամ և նրան էլ կրկին կը բերեմ: Այսպէս պէտք է լինի: Ահա գալիս

¹⁾ Պէտրարքայի սիրած կինն է: Պէտրարքան խոսակցութեամբ բանաստեղծներից մէկն է:

¹⁾ Իշխանուհուց:

է խտտասիրտ բարեկամը: Տեսնենք կը կարողանամ արդեօք սանձել նրան:

ՉՈՐՐՈՐԳ՝ ՏԵՍԻԼ.

ԼԷՕՆՕՐԷ, ԱՆՏՈՆԻՕ.

ԼԷՕՆՕՐԷ.

Խաղաղութեան փոխարէն դու մեզ համար պատերազմ ես բերում: Արթնես թէ գալիս ես մի բանակից, մի ճակատամարտից, ուր ուժն է կառավարում, բռունցքն է վճռում և ոչ Հռովմից, ուր հանդիսաւոր կորովամտութիւնն օրհնելով բարձրացնում է բազուկները և իր ոտների տակ սփռուած տեսնում է մի աշխարհ, որ լօժարութեամբ է հնազանդում:

ԱՆՏՈՆԻՕ.

Պէտք է տանեմ լանդիմանութիւնդ, գեղեցիկ բարեկամ, սակալն ներողութիւնն էլ հեռու չի դրանից: Վտանգաւոր է, երբ մարդ ստիպուած է իրեն երկար ժամանակ խելացի և չափաւոր ցոյց տալ: Չար ողին կողքիդ կանգնած քեզ դիտում է և երբեմնապէս նոյնպէս կամենում է ուժով մի զոհ ունենալ: Այս անգամ տարաբախտաբար զոհաբերութիւնը նրա համար կատարեցի բարեկամների հաշուով:

ԼԷՕՆՕՐԷ.

Ոտարների համար այնքան երկար հոգացիր և նրանց տրամադրութեանը լարմարուեցիր, իսկ այժմ երբ դու կրկին տեսնում ես քո բարեկամներին, այլ ևս նրանց չես ճանաչում և վարում ես որպէս օտարների հետ:

ԱՆՏՈՆԻՕ.

Հէնց այդ տեղն է վտանգը, սիրելի բարեկամ: Օտարների հետ մարդ շատ դժուր է լինում, այդ դէպքում մտադիր են, այդ դէպքում նրանց հաճութիւն լարմարուելով, մարդ ձգտում է իր նպատակին, որ կարելի լինի օգուտ քաղել: Բարեկամների մօտ միայն մարդ իրեն ազատութիւն է տալիս, հանգստանում է նրանց սիրով մէջ, քմահաճութիւն է թօլ տալիս իրեն: Այրքն աւելի անզուսպ է գործում և այդ պատճառով ամենից առաջ վիրաւորում է նրանց, որոնց աւելի քնքուր է սիրում:

ԼԷՕՆՕՐԷ.

Քեզ կրկին ուրախութեամբ եմ տեսնում, իմ թանկագին, բարեկամ, արդ հանդարտ խորհրդածութեանդ մէջ:

ԱՆՏՈՆԻՕ.

Այո, ես դժգոհ եմ և լօժարութեամբ լանձնառու եմ, որ այս օր անչափ մոլորուեցի: Միայն խոստովանում եմ, որ երբ մի արթուն մարդ տաք ճակատով վերադառնում է դառն աշխատանքից և մտածում է, ուշ երեկոյեան ցանկալի ստուերում հանգիստ առնել նոր աշխատանքի համար և տեսնում է, որ մի դատարկարան հանդարտ տեղաւորուել է արդ ամբողջ ստուերում, միթէ նա չը պէտք է ունենայ իր կրճ.քում փոքր ինչ մարդկային զգացմունք:

ԼԷՕՆՕՐԷ.

Եթէ ունի մարդկային զգացմունք, նա այն ստուերից մի ալ մարդու էլ մաս կը տայ, որը զրոյցով ու սքանչելի հնչիւններով կը քաղցրացնի հանգստութիւնը, կը թեթևացնի աշխատանքը: Մառը մեծ է, բարեկամ, որ ստուեր է տալիս, հարկաւորութիւն չը կայ մի ուրիշին տեղից հանել:

ԱՆՏՈՆԻՕ.

Լէօնօրէ, աւելորդ է կրկին և կրկին խաղալ համեմատութիւնների հետ: Աշխարհումս շատ բաներ կան, որոնց տալիս են մի ուրիշի և լօժարութեամբ կիսում են, սակայն կալ մի գանձ, որ լօժարութեամբ են տալիս միայն ամենաարժանաւորին, կալ ևս մի ալը, որ լօժար կամքով արժանաւորագոյնի հետ էլ երբէք չի կիսի: Եւ հարցնում ես ինձ արդ երկու գանձերի մասին. արդ դափնին է և կանանց շնորհքը:

ԼԷՕՆՕՐԷ.

Միթէ մեր երիտասարդի գլխի այն պսակը վիրաւորեց ծանր մարդուն: Նրա աշխատանքի և գեղեցիկ բանաստեղծութեան համար դու ինքդ չէիր կարող գտնել մի աւելի համեստ վարձատրութիւն: Որովհետև մի ծառայութիւն, որ արտաքով կարգի է, որ ծածանում է օդոց և հնչիւնների մէջ միայն, թեթև պատկերներով փաղաքշում է վեր հոգին, վարձատրում է միայն մի գեղեցիկ պատկերով, մի սքանչելի նշանով: Եւ եթէ նա հաղիւ հաղէ շօշափում երկիրը, բարձրագոյն վարձատրութիւնն էլ հաղիւ է շօշափում նրա գլուխը: Մի անպտուղ ոստ է պարգևը, որով երկրպագուն լօժարութեամբ

շնորհում է նրան մի անպտուղ հակումն, որպէսզի ամենամեծ հեշտութեամբ կատարած լինի իր պարտաւորութիւնը: Դու դժուար թէ նախանձես մարտիրոսի պատկերի ոսկէ ճառագայթներին, որ դրած է լերկ գլխի վրայ: Եւ 'ի հարկէ, դափնեալ պսակն է, որ թւում է քեզ աւելի որպէս մի նշան տանջանքի, քան բախտի:

ԱՆՏՕՆԻՕ.

Չը լինի թէ, քո սիրալիր բերանդ կամենում է սովորցնել ինձ արհամարհիլ մարդկային աշխարհասիրութիւնը:

ԼԷՕՆՕՐԷ.

Ինձ հարկաւոր չէ սովորցնել քեզ գնահատել ամեն ինչ իր արժանեաց համաձայն: Բայց ահու՛ւս ամենախիւթւում է, որ իմաստունին, ինչպէս և ուրիշներին հարկաւոր է երբեմնապէս իսկութեամբ լուսաբանել նրա ունեցած ինչքը: Դու, ազնիւ մարդ, դու չես պահանջիլ այն շնորհքը և լարդանքը, որ ցոյց են տալիս ուրուականին: Այն ծառայութիւնը, որով դու քեզ քո իշխանի հետ, որով դու քեզ քո բարեկամների հետ կապում ես, ազդու է, կենդան է և վարձատրութիւնն էլ պէտք է իրական և կենդան լինի: Քո դափնին իշխանի հաւատարմութիւնն է, որ կիտած է ուսերիդ վրայ և թեթևութեամբ տարւում է, որպէս մի սիրելի բեռն: Քո փառքն է ընդհանուր վստահութիւնը:

ԱՆՏՕՆԻՕ

Բայց կանանց շնորհքի մասին ոչինչ չես ասում: Չես կամենում արդեօք ներկայացնել որպէս մի աւելորդ բան:

ԼԷՕՆՕՐԷ.

Այդ կախում է ցանկութիւնից: Դու զրկուած չես զբրանից և քեզ աւելի հեշտ կը լինէր զրկուելը, քան թէ այն բարեսիրտ մարդուն: Ասա, կը լաջողէր արդեօք մի կնոջ, եթէ մտածէր հոգալ քո մասին իր կերպի, ձեռնարկէր քեզանով զբաղուելու: Քեզ մօտ ամեն ինչ զարդ, ապահովութիւն է: Դու հոգում ես քո մասին, ինչպէս և ուրիշների մասին: Դու ունես, ինչ որ կը ցանկային քեզ տալ: Նա մեզ զբաղեցնում է մեզ լատուկ մասնագիտութեամբ: Նրան պակասում են հազար ու մի մանր բաներ, որոնց մասին մի կին լօժարութեամբ աշխատում է հոգալ: Նա սիրում է հազնել ամենազեղեցիկ բեհէզ, միտաքսի զգեստ փոքր ինչ ասղնեգործած:

Նա սիրում է զարգարուած լինել, աւելի ևս, նա չի կարող հազնել անաղնիւ կերպաս, որով ծառան է զանազանուում: Նրա վրայ ամեն ինչ պէտք է լինի նուրբ և լաւ և զեղեցիկ և ազնիւ: Եւ այնուամենայնիւ նա ոչ մի ձիրք չունի հոգալու ալդ բոլոր բաների մասին և երբ ձեռք է բերում, չի կարողանում պահպանել: Նա միշտ կարիք ունի փողի և հոգսի: Երբեմն մի բան ալտեղ է թողնում, մի բան ալտեղ: Նա երբէք չի վերադառնում ճանապարհորդութիւնից, որ նրա իրերի երբորդ մասը պակաս չը լինէին: Երբեմն էլ ծառան է նրան կողոպտում: Ալդպէս, Անտճնիօ, նրա համար պէտք է ամբողջ տարի հոգալ:

ԱՆՏՈՆԻՅ

Եւ ալդ հոգացողութիւնը նրան դարձնում է աւելի և աւելի սիրելի: Երջանիկ երիտասարդ է, որի պակասութիւններն առաքինութիւն են համարում, որին, ալդ տղալին, զեղեցիկ կերպով թող է տրւում ալր մարդու դեր խաղալ, որ կարող է պարծենալ իր սքանչելի թուլութիւններով: Գու պէտք է ինձ ներես, իմ զեղեցիկ բարեկամ, եթէ այս տեղ էլ փոքր ինչ դառը լինեմ: Գու ամեն բան չես ասում, չես ասում թէ նա ինչ համարձակութիւն է դործում և եթէ նա աւելի խելօք է, քան թէ կարծում են: Նա պարծենում է երկուսի սիրով, կապում և քակում է հանգուցներ և ալդպիսի ճարպիկութիւններով վաստակում է սլդպիսի սրտեր: Միթէ կարելի է հաւատալ:

ԼԷՕՆՕՐԷ

Լաւ: Ալդ արդէն ապացուցանում է, որ ալդ միայն մի բարեկամութիւն է, որ մեզ կենդանութիւն է տալիս: Եւ եթէ մենք սէրը սիրով ենք փոխարինում, արդարացի չենք վարձատրում այն զեղեցիկ սիրտը, որ ինքն իրեն բոլորովին մոռանալով և անձնատուր լինելով, սքանչելապէս երազելով ապրում է իր բարեկամների համար:

ԱՆՏՈՆԻՅ

Փշացրէք նրան, միայն աւելի և աւելի, նրա եսականութիւնը սիրով տեղ ընդունեցէք, վիրաւորեցէք ձեր այն բոլոր բարեկամներին, որոնք ձեզ հաւատարիմ հոգով են նուիրուած, կամատր հարկ տուէք հպարտին, բոլորովին քանդեցէք վստահութեան զեղեցիկ ընկերական շրջանը:

ԼԷՕՆՕՐԷ

Մենք արնպէս կողմնապահ չենք, ինչպէս դու կարծում ես: Սենք մի քանի դէպքերում համոզում ենք մեր բարեկամին, մենք կամենում ենք նրան արնպէս կրթել, որ նա ինքն իրեն աւելի վալելի, կարողանալ տալ իրեն ուրիշներին աւելի վալելիու: Ինչ որ նրանում պախարակելի է, այդ մեզ համար ծածուկ չէ մնում:

ԱՆՏՕՆԻՕ

Այնուամենայնիւ շատ բան գովարանում էք, որ պախարակելի է: Ես նրան վաղուց եմ ճանաչում, նրան ճանաչելը շատ հեշտ է: Եւ նա չափազանց հպարտ է թագնուելու համար: Երբեմն ընկղմւում է ինքն իր մէջ, կարծես թէ ամբողջ աշխարհը նրա կրծքումը լինէր: Իր աշխարհում ինքն իրեն բաւարար է համարում և ամեն ինչ նրա համար անհետանում է նրա շրջակայքում: Այդպէս շարունակում է, վայր է գցում, մերժում է և ինքն իր մէջ հանգչում է: Յանկարծ որպէս մի աննշմարելի կայծ, վառում է ականը և սարսափելի կերպով պայթում է ուրախութիւն կամ վիշտ, բարկութիւն կամ մի ցնորք: Յետոյ կամենում է ամեն ինչ ըմբռնել, ամեն ինչ կեցընել, լետոյ պէտք է կատարուի ինչ որ մտածել կարող է, մէկ վայրկեանում, պէտք է դուրսալ արն, ինչ որ տարիներ շարունակ հարկաւոր է պատրաստել: Մէկ վայրկեանում պէտք է ոչնչացնել արն, ինչ որ երկարամեալ աշխատանքը կարող է լուծել: Նա ինքն իրենից պահանջում է անկարելին, որպէս զի ուրիշներից էլ կարողանալ պահանջել: Նրա խելքը կամենում է ըմբռնել ամեն բանի վերջին ծալրերը, որ հազարից մէկին է լաջողում, բայց այդ նրա բանը չէ: Վերջապէս ոչինչ չը բարւոքած, ընկղմւում է ինքն իր մէջ:

ԼԷՕՆՕՐԷ

Նա ուրիշներին չէ մեասում, իրեն է մեասում:

ԱՆՏՕՆԻՕ

Եւ այնուամենայնիւ ուրիշներին շատ է վիրաւորում: Կարձղ ես հերքել, որ կրքից գրաւուած վայրկեանում, որ նրան բոպէական ընդգրկում է, նա կը համարձակուի շարախօսել, թշնամանել իշխանին, նաև հինց իշխանուհուն կամ ում որ էլ լինի, թէպէտև միայն բոպէական: Այդ անցնում է,

վարկեանը կրկին սկսուում է. նա չի կարողանում զսպել ոչ իր բերանը, ոչ իր կուրծքը:

ԼԷՕՆՕՐԷ

Կարծեմ, որ եթէ նա մի կարճ ժամանակով հեռանար արտ տեղից, օգտաւէտ կը լինէր թէ նրա և թէ ուրիշներին համար:

ԱՆՏՕՆԻՅՈ

Կարելի է, կարելի է, որ ոչ: Բայց այժմ դրա մասին չը պէտք է մտածել, որովհետեւ չեմ կամենում սխալանքն իմ սեբրի վրայ բարձել: Կարող է թուել, որ ես եմ նրան աքսորում, այն ինչ ես չեմ աքսորում նրան: Ինչ որ ինձ կը վերաբերի, նա կարող է մեր արքունիքում հանգիստ ապրել: Եւ եթէ նա կամենում է հաշտուել ինձ հետ և եթէ կարող է իմ խորհուրդներին հետեւել, այն ժամանակ մենք կարող ենք միմեանց հետ բաւականին հաշտ ապրել:

ԼԷՕՆՕՐԷ

Ուրեմն լուս ունես ներգործել նաև մի հոգևոյ վրայ, որ սրանից կարճ միջոց առաջ, քեզ համար կորած էր թուամ:

ԱՆՏՕՆԻՅՈ

Մենք միշտ յոյս ենք ունենում, եւ ատլի լաւ է ամեն գործում յուսով, քան թէ յուսամտուել, որովհետեւ ձով կարող է կարելին գուշակել: Նա արժանի է մեր իշխանին: Նա պէտք է մնալ մեզ մօտ: Եւ եթէ մենք սխալուենք, նա միայնակ չի լինի, որին մենք համբերում ենք:

ԼԷՕՆՕՐԷ

Ես չի կարծում, որ դու այդքան անկիրք, անկողմնակալ լինէիր: Դու շուտ դարձի եկար:

ԱՆՏՕՆԻՅՈ

Հասակը պէտք է մի առաւելութիւն ունենալ, որ եթէ նաև սխալանքից չի կարող ազատ մնալ, գոնէ կարող է խկոյն զգաստանալ: Դու սկզբում աշխատում էիր հաշտեցնել ինձ քո բարեկամի հետ: Այժմ նոյնը ես եմ խնդրում քեզանից: Արև, ինչ որ կարող ես, որպէս զի այդ մարդը կարողանալ լարմարուել և ամեն բան կրկին իր կարգով գնալ: Եւ ինքս կը գնամ նրա մօտ, երբ քեզանից իմանամ, որ նա հանգստացել է, երբ կը կարծես, որ իմ ներկայութիւնը չարիքը չի աւելացնի: Բայց ինչ որ անելու ես, այժմ արև, որովհետև:

հէնց այս երեկոյ Ալֆօնսը վերադառնում է և ես պէտք է ուղեկցեմ նրան: Առ այժմ մնես բարև:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ի Լ

ԼԷՕՆՕՐԷ (մ/ւայն)

Այս անգամ, սիրելի բարեկամ, մենք համախոհ չենք: Իմ և քո շահերն այսօր ձեռք ձեռքի տուած չեն ընթանում: Ժամանակից կ'օգտուեմ և կը փորձեմ Տասսօին գրուել: Շնորհ:

ՁՈՐՐԱՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ս Ե Ն Ն Ա Կ

ՏԱՍՍՕ (մ/ւայն)

Ջարթնեցիք արդեօք երազից և միթէ գեղեցիկ ցնորքն յանկարծ թողեց քեզ: Միթէ մի գեղեցիկ օրուայ բարձրագոյն վայելքում, քունը զսպեց քեզ, արգելեց և ծանր կապանքով վախեցրեց հոգիդ: Այն, դու արթուն ես և երազում ես: Ո՛ւր են այն ժամերը, որոնք խաղում էին գլխիդ շուրջը ծաղկապսակներին հետ, այն օրերն, երբ հոգիդ ազատ տենչանքով թափանցում էր կապուտ երկնակամարը: Սև այնուամենայնիւ ապրում ես և քեզ զգում ես: Դու քեզ զգում ես և չը գիտես ապրում ես թէ ոչ: Ի՞մ մեղքն է, թէ ուրիշի, որ այժմ գըտնւում եմ այստեղ որպէս մեղապարտ: Միթէ յանցանք եմ գործեւ, որ պէտք է տանջուեմ: Իմ ամբողջ սխալանքը միթէ ծառայութիւն չէր: Նրան տեսայ և իմ լսժար կամքովս սրտիս ցնորական լոյսից շտապեցի, կարծելով, որ նա մարդ է, մարդի կերպարանք ունի: Բազկատարած դիմեցի նրա: և զգացի կողպէք և պարզունակ, ոչ կուրծք: Ո՛հ, ինչպէս լաւ մտածել էի, թէ ինչպէս էի կամենում ընդունել այդ մարդուն, որ ինձ հնուց կասկածելի էր թւում: Ի՞նչ էլ որ քեզ պատահած լինի, ստույգ կարծիր. ես նրան*) տեսայ: Նա կանգնած էր իմ առջև: Նա ինձ հետ էր խօսում, ես լսեցի նրան: Հարեացքը, ձայնը,

*) Իշխանունուն:

խօսքերի սքանչելի միտքը, դրանք միշտ իմն են, դրանց ինձնից չի կարող խելել ոչ ժամանակը, ոչ ճակատադիրը, ոչ էլ վայրենի բախտը: Եթէ հոգիս լանկարծ վրդովուեց և կըրծքումս շատ շուտ օդ տուեց բոցին, որ ինձ ճարակեց, ևս այդ չեմ կարող զղշալ, եթէ նաև կեանքիս ճակատադիրն ընդ միշտ խորտակուէր: Ես ինձ նրան էի նուիրել և ուրախ նետեում էի նրա ակնարկին, որ ինձ կորուստի մատնեց: Թող այդպէս լինի: Անուամենայնիւ ևս ինձ արժանաւոր լայտնեցի այն թանկագին վստահութեանը, որ ինձ կազդուրում էր, որ այս ժամին էլ կազդուրում է, որ իմ համար երկար ժամանակուայ սև դուռն ուժով բացեց: Այո, այժմ արդէն կատարուած է: Ամենագեղեցիկ հաճուքի արեղակն լանկարծ իմ համար մալր է մտնում: Իշխանը զրկում է ինձ իր սքանչելի հալեացքից և տարակուսած թողնում է ինձ այտուղ, մուխը նեղ ճանապարհի վրայ հանգչել: Տգեղ, երկդիմի թռչունը, մէջ գիշերալին զդուսելի լուղարկաւորը, դուրս է եկել և չչալով պտտում է դիտիս շուրջը: Դէպի ուր, ուր շարժեմ իմ քալլս, որ փախչեմ զդուանքից, որ մռնչում է շուրջս, խուսափեմ անդունդից, որ առաջս է դրած:

Ն Ե Կ Բ Ա Ր Գ Տ Ե Ս Ի Լ

ԼԷՕՆՕՐԷ, ՏԱՍՍՕ

ԼԷՕՆՕՐԷ

Ի՞նչ է պատահել: Սիրելի Տասսօ, քո եռանդը, կասկածանքդ այդտեղ հասցրին քեզ: Այդ քնչպէս պատահեց: Մենք բոլորս շփոթուած ենք: Քո հեզութիւնը, քո հաճութարար բնաւորութիւնը, քո արագընթաց հալեացքը, քո ուղղահալեաց խելքը, որով ամեն մէկին տալիս էիր, ումը ինչ պատկանում էր, քո հանդարտութիւնը, որ ընտելանում է ինչին որ ազնիւ մարդը շուտ է ընտելանում, սակաւ նախիրը, Լեզուիդ և շքրթունքիդ խելացի տիրապետելն, ուր մնացին, իմ թանկագին բարեկամ, ևս քեզ համարեա յօրորովին չեմ ճանաչում:

ՏԱՍՍՕ

Եւ եթէ այդ բոլորը կորած լինէր, Եթէ մի բարեկամ, որին դու մի ժամանակ հարուստ էիր կարծում, լանկարծ դո-

նրան աղքատ գտնէիր: Այն, դու իրաւացի ես. ես այլ ես ես չեմ և այնուամենայնիւ նույնպէս բարի եմ, ինչպէս որ էի: Կարծես թէ հանելուկ լինի, բայց և հանելուկ չէ: Հանգարտ լուսինը, որ գիշեր ժամանակ քեզ ուրախացնում է, անդիմադրելի կերպով հրապուրում է իր քալով աչքդ ու հողիդ, ցերեկով տատանում է որպէս մի աննշան, գունատ փոքրիկ ամպ: Լուսակոծնած եմ օրուայ փալլից: Դուք ինձ ճանաչում էք, ես ինձ այլ ես չեմ ճանաչում:

ԼԷՕՆՕՐԷ

Ինչ որ դու ինձ ասում ես, իմ բարեկամ, չեմ հասկանում, թէ ինչ ես ասում: Բացատրիր ինձ: Կոպիտ մարդու վիրաւորանքը միթէ այնպէս ցաւ պատճառեց քեզ, որ դու ինքդ քեզ և մեզ բոլորովին չես կարողանում ճանաչել: Վըստահացիր ինձ:

ՏԱՍՍՕ

Ես չեմ վիրաւորուածը, դու տեսնում ես ինձ պատճած, որովհետեւ ես եմ վիրաւորել: Բաղմաթիւ լիօսքերի հանգուցները, սուրը հեշտութեամբ, արագութեամբ է բաց անում, միայն թէ կալանաւորուած եմ: Հաղիւ գիտես—մի վախիր, իմ քնքնչ բարեկամ, դու հանդիպում ես բարեկամիդ բանտում: Իշխանը զսպում է ինձ, որպէս մի աշակերտի: Ես չեմ կամենում, չեմ կարող նրա հետ դատ վարել:

ԼԷՕՆՕՐԷ

Դու աւելի վրդովուած ես երևում քան վայել է:

ՏԱՍՍՕ.

Միթէ կարծում ես ինձ այնքան թուլ, այնպիսի երեխայ, որ ալպիսի մի դէպքը կարող է ինձ իսկույն տապալել: Այն որ պատահել է, ինձ այնքան էլ խոր ցաւ չի պատճառում: Միայն ինձ ցաւ է պատճառում այն նշանակութիւնը, որ դա ունի իմ համար: Թող ինձ նախանձողներն, իմ թշնամիքը միայն զգուշ լինեն: Մարտավարն արձակ և ազատ է:

ԼԷՕՆՕՐԷ

Մի քանիսին դու սխալմամբ կասկածանքի ես ենթարկել, ես ինքս դրանում համոզուեցի: Եւ Անտօնիօն էլ քեզ չի թշնամանում, ինչպէս դու կարծում ես: Այս օրուան տհաճութիւնը...

ՏԱՍՍՕ.

Այդ ես մի կողմ եմ թողնում, մա միայն Անտոնիօ'ին, թէ նա ինչպէս էր և այժմ ինչպէս է: Նրա կոշտ խելքն ինձ միշտ զգուելի է եղել և որ նա միշտ միայն վարպետի դեր է խաղում: Լսողի խելքը հետազօտելու տեղ, թէ արդեօք ինքն իրեն լու ճանապարհի վրայ է, նա քեզ սովորցնում է անպիսի բաներ, որ ինքդ աւելի լաւ և աւելի խոր ես զգում և չի լսում ոչ մի խօսք, որ նրան անում ես և երբէք քեզ չի ճանաչիլ: Չը ճանաչած լինել մի հպարտից, որ ժպտալով կարծում է, թէ քեզ անտես է առնում: Ես ոչ այն հասակն ունեմ և ոչ այն խելքը, որ կարողանամ միայն համբերելով ժպտալ նրան: Սեր լարաբերութիւնը չէր կարող տեղական լինել, վաղ թէ ուշ պէտք է կտրուէր: Եթէ ուշ պատահէր աւելի վատ կը լինէր: Ես ընդունում եմ միայն մի տիրոջ, այն տիրոջը, որ ինձ կերակրում է: Նրան լօժարութեամբ եմ հետևում և չեմ կամենում ոչ մի այլ վարպետ ունենալ: Ես կամենում եմ ազատ մտածել և ազատ բանաստեղծել: Գործողութեանց մէջ արդէն աշխարհը բաւականչափ սահմանափակում է սեզ:

ԼԷՕՆՕՐԷ

Նա բաւականին լաճախ, լարգանքով է խօսում քո մասին:

ՏԱՍՍՕ.

Կամենում ես ասել, խնայութեամբ, նուրբ և խելացի է: Եւ հէնց այդ է ինձ անհաճող, որովհետև նա զիտէ այնպէս հարթ և այնպէս պարմանաբանելով խօսել, որ նրա գովասանքը հէնց պարսաւանք է դառնում և ոչինչ, ոչինչ աւելի խոր չի վիրաւորում քեզ, քան նրա բերանի գովասանքը:

ԼԷՕՆՕՐԷ

Եթէ լսէիք, թանկագին բարեկամ, թէ նա ինչպէս էր խօսում քո և քո տաղանդի մասին, որ պարզեատու բնութիւնը շատերին թողնելով, քեզ է տուել: Ի հարկէ, նա զգում է, թէ դու ինչ ես, և ինչ ունես և այդ էլ գնահատում է:

ՏԱՍՍՕ

Ո՛հ, հաւատան ինձ, մի եսամոլ հոգի չի կարող խուսափել մանր նախանձի տանջանքից: Այդպիսի մի մարդ ներում է, երբ մի ուրիշն ունի կարողութիւն, զիրք և պատիւ, որովհետև նա կարծում է, այդ դու ինքդ ունես, դու այդ ունես,

եթէ ցանկանաս, եթէ դու լարատե լինես, եթէ բախտը հովանաւորի քեզ: Սակայն այն ինչ որ միայն բնութիւնն է շնորհում, որին չի կարելի հասնել ոչ մի ջանքով և ոչ էլ մի ձգտումով, միշտ մնում է անհասանելի, որ ոչ ոսկով, ոչ արով, ոչ խելքով, ոչ էլ լարատուութեամբ կարելի է ձեռք բերել, այդ նա երբէք չի ներիւ: Նա այդ զիջանում է ինձ: Նա, որ իր ծանրաշարժ խելքով կարծում է մուսաների բարեհաճութիւնը խորխտանօք առնել: Նա, որ մի քանի բանաստեղծների մտքերը կարողանում է միմեանց մօտ շարել, ինքն իրեն բանաստեղծ է թւում: Նա աւելի շուտ կը զիջանի ինձ իշխանի շնորհքը, որ ի հարկէ լսժարութեամբ կը կամենար իր վրայ սահմանափակել, քան տաղանդը, որ այն երկնալիները տուել են աղքատ, որք երիտասարդիս:

ԼԷՕՆՕՐԷ:

Ո՛հ, եթէ այնպէս պարզ նալէիր, ինչպէս ես եմ նայում: Դու սխալում ես նրա վերաբերմամբ, նա այդպէս չէ:

SUUSO.

Եթէ նրա վերաբերմամբ սխալում եմ, ուրախութեամբ եմ սխալում: Ես նրան համարում եմ իմ ամենաչար թշնամի, և ամբխիթարական կը լինէր, եթէ ես նրան քաղցրաբարոյ կարծէի: Յիմարութիւն է ամեն բանում զիջանել, այդ կը նշանակէ իր սեպհական ինքնութիւնը կործանել: Միթէ մարդիկ մեղ շատ են զիջանում: Ո՛չ, ո՛չ, մարդուն նրա նեղ բնաւորութեան համար հարկաւոր են կրկնակի զգացմունքներ, սէր և ատելութիւն: Միթէ նրան հարկաւոր չէ տիւ և գիշեր, քուն և արթնութիւն: Ո՛չ, այսուհետեւ ես այդ մարդուն պէտք է իմ ամենախոր ատելութեան առարկայ դարձնեմ: Ոչ, ինչ չի կարող զրկել ինձ այն ուրախութիւնից, որ ես նրա մասին վատ և շատ վատ մտածեմ:

ԼԷՕՆՕՐԷ:

Եթէ չես կամենում, թանկագին բարեկամ, կարծիքդ փոխել, չեմ հասկանում, թէ թնչպէս ես կամենում շարունակել մնալ այս արքունիքում: Դու գիտես, թէ նա ինչ նշանակութիւն ունի և պէտք է ունենայ:

SUUSO.

Ես շատ լաւ ու վաղուց գիտեմ, ո՞վ իմ գեղեցիկ բարեկամ, թէ որքան աւելորդ եմ այստեղ:

ԼԷՕՆՕՐԷ.

Ո՛չ, դու աւելորդ չես, և երբէք չես կարող աւելորդ լինել: Դու լաւ գիտես, թէ որքան բաւականութեամբ իշխանը և իշխանուհին քեզ հետ այս տեղ ապրում են: Եւ եթէ Ուրբինո քուրը գալիս է, նա համարեա դալիս է ինչպէս քեզ համար, նոյնպէս էլ իր եղբօր և քրօջ համար: Նրանք բոլորը շատ լաւ կարծիք ունեն ըր մասին և ամեն մէկն անպայման հաւատում է քեզ:

ՏԱՍՍՕ.

Ո՛հ, Լէճնօրէ, այդ թնչ չաւատ ընծայել է: Մի անգամ խօսել է արդեօք նա՞ ինձ հետ մի խօսք, մի ծանրակշիռ խօսք իր պետութեան մասին: Մի առանձին դէպք պատահեց, որի մասին նա նաև իմ ներկայութեամբ խորհրդակցեց իր քուրերի և ուրիշների հետ, ինձ երբէք բան չի հարցրել: Մենք միշտ միայն լսում ենք. Անտօնիօն գալիս է: Պէտք է Անտօնիօնին գրել: Հարցրէք Անտօնիօնին:

ԼԷՕՆՕՐԷ.

Շնորհակալութեան տեղ, դու զանգատում ես: Եթէ նա քեզ անպայման ազատութիւն է տալիս, դրանով նա քեզ լարգում է, որքան որ կարող է քեզ լարդել:

ՏԱՍՍՕ.

Նա հանգիստ է թողնում, որովհետև առպէտք է համարում:

ԼԷՕՆՕՐԷ.

Դու անպէտք չես աչն պատճառով, որ հանգչում ես: Արդէն երկար միջոց է, որ կրօքիդ վրայ գուրգուրում ես զղուանք և հոգս, որպէս մի սիրելի երեխայի: Եւ լածախ եմ մտածել և կարող եմ ևս խորհել ինչպէս կամենամ, այս զեղեցիկ տեղում, ուր թոււմ է բախտդ քեզ փոխադրել է, դու չես ատելու: Ո՛վ, Տասսօ: Տնիմ արդեօք քեզ մի խորհուրդ: Մթթէ ասեմ: Դու պէտք է հեռանաս:

ՏԱՍՍՕ.

Միրէլի բժիշկ, մի խնայիր հիւանդին: Տնւր նրան դեղը և մի մտածիր, դառն է թէ: ոչ, Միայն լաւ խորհիր, ով խելացի, բարի բարեկամ, կարող է արդեօք բժշկել: Եւ ինքս բոլորը տեսնում եմ, եղածն անցած է: Եւ կարող եմ ներել նրան, բայց ոչ նա ինձ: Նա հարկաւոր է, իսկ ես տարաբախտա-

բանք ոչ: Նա կարողամիտ է և ես դժբախտաբանք ոչ: Նա աշխատում է ինձ վնասել և ես չեմ կարող, չեմ կամենալ ընդդիմադործել: Իմ բարեկամներն անուշադիր են, ուրիշ կերպ են նայում գործի վրայ, հաղիւ ընդդիմանում են, այն ինչ պէտք է պատերազմէին: Գու կարծում ես, որ պէտք է հեռանամ, ես էլ եմ այդպէս կարծում: Ուրեմն մնաք բարև: Նս այդ էլ կը ասանեմ: Գուք ինձանից բաժանուանձ էք: Նս էլ կ'ունենամ այնքան ոլժ և քաջութիւն, որ կը կարողանամ ձեզանից բաժանուել:

ԼԷՕՆՕՐԷ.

Հեռումն էլ ամեն ինչ աւելի պարզ է երևում, որ ներկայում մեզ միայն շփոթեցնում է: Կարելի է կ'ղգաս, թէ թնչ սէր էր շրջապատում քեզ և թնչ արժէք ունի սրտակից բարեկամների հաւատարմութիւնը և ինչպէս լայնատարած աշխարհը չի կարող մերձաւորներին փոխարինել:

ՏԱՍՍՕ.

Այդ կը տեսնենք: Նս մանկութիւնիցս ճանաչում եմ աշխարհը, գիտեմ, թէ նա ինչպէս թողնում է անօգնական, միայնակ և իր ճանապարհով գնում է, որպէս արեգակը, լուսինը և այլ աստուածները:

ԼԷՕՆՕՐԷ.

Եթէ լսես ինձ, բարեկամ, երբէք չը պէտք է կրկնես նոյն տխուր փորձը: Եթէ խորհուրդս տամ, նախ պէտք է զընաս Ֆլօրէնցա և մի բարեկամ մեծ սիրով կը հոգալ քո մասին: Անճոգ կաց: Այդ բարեկամն ես ինքս եմ: Մի քանի օրից լեռով գնալու եմ այնտեղ ամուսնուլ մօտ, չեմ կարող նրա և իմ համար աւելի մեծ ուրախութիւն պատրաստել քան հրաւիրել քեզ մեր շրջանի մէջ: Աւելի ոչ մի խօսք չեմ ասում քեզ, դու ինքդ գիտես, թէ որպիսի իշխանի կը մօտենաս դու և այդ գեղեցիկ քաղաքն ինչպիսի մարդիկ ու կանալք է փալփալում իր կրծքի վրայ: Գու լռում ես: Լմա մտածիր: Վճռիր:

ՏԱՍՍՕ.

Ուսածդ հրապուրել է, բալորովին համապատասխան ցանկութեանս, որի մասին ծածուկ մտածում եմ: Սակայն այդ ինձ համար շատ նոր բան է, խնդրեմ, թող տուր մտածել, ես շուտ կը վճռեմ:

ԼԼՕՆՕՐԷ.

Ես գնում եմ ամենագեղեցիկ լուսերով, քո և մեզ համար, նոյնպէս և այս տան համար: Մտածիր միայն և եթէ լաւ մը տածես, դժուար թէ կարողանաս մի աւելի լաւ բան մտածել:

ՏԱՍՍՕ.

Մէկ բան էլ հարցնեմ, սիրելի բարեկամ, աստ ինձ, իշխանուհին թնչպէս է տրամադրուած դէպի ինձ: Բարկացած է ինձ վրայ: Ի՞նչ էր ասում: Ինձ շնտ պարսաւեց: Ա՛ղատ խօսիր:

ԼԷՕՆՕՐԷ.

Որովհետեւ նա քեզ ճանաչում է, քեզ հեշտութեամբ ներեց:

ՏԱՍՍՕ.

Շնտ կորցրեցի նրա աչքում: Մի փաղաքջիր:

ԼԷՕՆՕՐԷ.

Կանանց շնորհքի հետ չի կարելի հեշտութեամբ կատակ անել:

ՏԱՍՍՕ.

Սոժարութեամբ կը թողնի, երբ գնամ:

ԼԷՕՆՕՐԷ.

Ի հարկէ, եթէ քո բարօրութեան համար լինի:

ՏԱՍՍՕ.

Չեմ գրկուի արդեօք իշխանի ողորմածութիւնից:

ԼԷՕՆՕՐԷ.

Վստահութեամբ կարող ես հանգչիլ նրա մեծահոգութեան վրայ:

ՏԱՍՍՕ.

Եւ միթէ պէտք է իշխանուհուն բոլորովին միայն թողնենք: Դու գնում ես: Թէև ես նրա համար առանձին նշանակութիւն չունիմ, այնուամենայնիւ գիտեմ, որ նրա համար էլի մի չնչին բան էի:

ԼԷՕՆՕՐԷ.

Մի հեռուոր բարեկամ մեր հասարակութեան ցանկալի անդամ կը համարուի, եթէ գիտենանք, որ նա բախտաւոր է: Եւ այդ բաշտոյած է, ես քեզ բախտաւոր եմ տեսնում: Դու անբաւական չես հեռանալ այս տեղից: Իշխանը հրամայեց, որ Անտօնիօն տեսնուի քեզ հետ: Նա ինքն իրեն մեղադրում է դառնութեան համար, որով նա վիրաւորեց քեզ: Երբ նա գալ, խնդրեմ սիրով ընդունես նրան:

ՏԱՍՍՕ.

Յամենայն դէպս պէտք է վարուեմ նրա հետ:

ԼԷՕՆՕՐԷ.

Թող երկինքն ինձ ուժ տալ, սիրելի բարեկամ, որ դեռ
գնալուցդ առաջ կարողանամ աչքդ բանալ, որ ամբողջ հալ-
րենիքում քեզ ոչ ոք չը հալածի և չ'ատի և գաղտնաբար չը
ճնշի և չը ծաղրի: Գու անշուշտ սխալուում ես և ինչպէս սո-
վորաբար ուրիշների ուրախութեան համար բանաստեղծում
ես, տարաբախտաբար այս դէպքումն էլ բանաստեղծում ես
մի հաղուագիւտ ոստայն, ինքդ քեզ վիրաւորելու համար: Ես
կամենում եմ ամեն ինչ անել խոչնդոտներն անհետացնելու
համար, որպէս զի դու աղատ քալել կարողանաս կեանքի
դեղեցիկ ճանապարհի վրայ: Մնաս բարև: Յոյս ունիմ շուտով
լսել մի նպաստաւոր խօսք:

ԵՐՐՈՐԳ ՏԵՍԻԼ

ՏԱՍՍՕ (միայն)

Ես պէտք է ընդունեմ, որ ինձ ոչ ոք չի ատում, որ ոչ
ոք ինձ չի հալածում, որ բոլոր խորամանկութիւնը և բոլոր
գաղտնի ոստայնները միայն իմ գլխումն են մանոււմ և հիւ-
սուում: Պէտք է խոստովանեմ, որ ես անարդար եմ և մէկի հետ
անարդար եմ վարուել, որ չի արժանացել իմ վերաբերմամբ:
Եւ այդ այն ժամանակ, երբ արեգակի զիմացը, պարզ դրած
է իմ ամբողջ իրաւունքը և նրա խարդախութիւնը: Ես պէտք
է խոր զգամ, որ իշխանը սրտանց լատնում է ինձ իր շը-
նորհքն, առատութեամբ պարգևում է ինձ, այն ինչ, այս բո-
ւ պէիս նա այնքան թող է, որ թողնում է իմ թշնամիքին
պղտորել նրա աչքը և ի հարկէ շղթայել նրա ձեռքը: Նա չի
կարող տեսնել, չեմ կարող ցոյց տալ, որ խաբուած է, որ
նրանք խաբեբաներ են: Եւ որպէս զի նա իրեն հանդարտ
խաբի, որպէս զի նրանք կարողանան նրան հանգստութեամբ
խաբել, ես պէտք է ինձ հանգիստ պահեմ, նաև խուսափեմ:
Եւ ո՞վ է ինձ խորհուրդ տալու: Ո՞վ է զիմում ինձ կորովա-
միտ, հաւատարիմ, սիրելի կարծիքով: Լէօնօրէն թնքը, Լէօ-
նօրէ Սանվիտալէն, քնքով բարեկամը: Այ՛ն, ալժմ քեզ ճա-
նաչում եմ: Ո՛հ, ինչո՞ւ մինչև ալժմ հաւատում էի նրա շըր-

Թունքին: Նա անկեղծ չէր, Թէպէտև շատ քաղցրահնչիւն խօսքերով ինձ ցոյց էր տալիս իր շնորհքը, քնքշութիւնը: Ո՛չ, նա էր և մնում է մի խորամանկ սիրտ: Նա թեթև ու խելացի քալլերով թեքում է դէպի հաճութիւնը: Քանիցս անգամ ես ինքս ինձ կամաւ խաբել եմ նրա վերաբերմամբ: Եւ խկապէս ինձ խաբել է միայն սնտոխքը: Լաւ: Ես նրան ճանաչում էի և ինքս ինձ փաղաքշում էի: Ես ինքս ինձ ասացի, նա ուրիշներէ հեռ է այդպէս, իսկ քո վերաբերմամբ նրա կարծիքն անկեղծ, ճշմարիտ է: Ես այժմ լաւ եմ տեսնում, միայն շատ ուշ եմ տեսնում: Ես շնորհք էի վայելում և նա քնքշութեամբ լարմարում էր բախտաւորիս: Այժմ ես ընկալ, նա թիկունքն է ինձ դարձնում, ինչպէս բախտը: Այժմ գալիս է որպէս իմ թշնամու միջործիք, սպրդում է դէպի ինձ և այդ փոքրիկ օձը սուլում է իր կոկ լեզուով կախարդիչ հնչիւններ: Ո՛րքան սիրալիր էր երևում, աւելի սիրալիր, քան մի որեէ անգամ: Որքան բարեբեր էր նրա շրթունքի ամեն մի խօսքը: Բայց շողաքորթութիւնը չէր կարող երկար ծածկել ինձանից նրա կեղծ միտքը: Զակատի վրայ պարզ գրուած էր ըստը ասածի հակառակը: Ես հեշտութեամբ եմ զգում, երբ սրտիս ճանապարհն են պտռում և սրտանց չեն մտածում: Ես պէտք է գնամ: Պէտք է որքան կարելի է շուտ գնամ Ֆլորէնցա: Եւ ինչու դէպի Ֆլորէնցա: Լաւ եմ հասկանում, այն տեղ իշխում է Մէդիչիների տան նոր ձիւղը: Թէպէտև ակներև թշնամութեամբ չեն վերաբերում դէպի Ֆէրրարան, սակայն ծածուկ նախանձը սառը ձեռքով հեռացնում է միմեանցից ամենաաղնիւ սրտերը: Եթէ արժանանամ այն ազնիւ իշխանների շնորհքի բարձրագոյն նշաններին, որ և անկասկած պէտք է սպասեմ, դրանիկը հեշտութեամբ կը լաջողեցնի կասկածելի դարձնել իմ հաւատարմութիւնը և շնորհակալութիւնը: Այդ նրան հեշտութեամբ կը լաջողի: Այո՛, ես կամենում եմ գնալ, միայն ո՛չ այնպէս, ինչպէս դուք էք քցանկանում: Ես կամենում եմ գնալ և աւելի հեռու քան դուք կարծում էք: Ինչ պէտք է անեմ այս տեղ: Ո՛վ է ինձ այս տեղ պահում: Ո՛հ, ես այնպէս լաւ հասկացալ Լէօնօրէի խօսքերը, որ ես նրա շրթունքից դուրս քաշեցի: Հազիւ կարողացալ բառ առ բառ դուրս քաշել և պարզ գրիտեմ, թէ իշխանունիս ինչ է մտածում: Այո՛, այո՛, այդ էլ ճշմարիտ է: Եւ ի՞նչ լուսահատուիր սնա լօծարու-

Թեամբ ինձ թող կը տալ գնալ, եթէ գնամ, որովհետեւ այդ իմ բարօրութեան համար էս: Օ՛, եթէ նա իր սրտում մի կիրք ըզգար, որ կարողանար կործանել իմ բարօրութիւնն էլ, ինձ էլ: Աւելի լաւ կը լինէր, որ մահը տանէր ինձ, քան թէ այն ձեռքն՝ ընդարմացած սառնութեամբ հեռացնէր ինձ իրենից: Ես գնում եմ: Այժմ չզգոյ՛ն եղի՛ր և թո՛ղ չը խաբէ՛ք քեզ բարեկամութեան կամ բարութեան, ոչ մի պատրուակով: Ո՛չ որ չի խաբիլ քեզ, եթէ դու ինքդ քեզ չը խաբես:

ՉՈՐՐՈՐԿ ՏԵՍԻԼ

ԱՆՏՕՆԻՕ, ՏԱՍՍՕ.

ԱՆՏՕՆԻՕ

Ես եկել եմ, Տնասօ, քեզ մի խօսք ասելու, եթէ կը ցանկաստ և կարող ես լսել:

ՏԱՍՍՕ

Դու գիտես, որ ինձ արգելուած է գործելն, ինձ վայել է միայն զսպել և լսել:

ԱՆՏՕՆԻՕ.

Ես քեզ տեսնում եմ խաղաղ, ինչպէս ես ցանկանում էի և լօժարութեամբ կը խօսեմ քեզ հետ ազատ կրթից: Նախ լանուն իշխանի արձակում եմ թող կապը, որ թւում էր քեզ շղթայում է:

ՏԱՍՍՕ.

Կամալականութիւնն ինձ արձակում է, ինչպէս որ ինձ կապել էր: Ես ընդունում եմ և ոչ մի դատ չեմ պահանջում:

ԱՆՏՕՆԻՕ

Այժմ ես իմ կողմից քեզ ասում եմ, թւում է, որ ես զանազան կրքերից շարժուած, խօսքերով քեզ խիստ և աւելի եմ վշտացրել, քան ինքս կարող էի զգալ: Սակայն շրթունքիցս անզգոյ՛ն չեմ թուցրել ոչ մի հաճոյանք: Որպէս ազնուական, կարեորութիւն չունես ոխ հանելու և որպէս մարդ ներողութիւնը չես մերժիլ:

ՏԱՍՍՕ

Ես չեմ կամենում քննութեան ենթարկել, թէ որն է աւելի ծանր, վշտացումը, թէ հալոյանքը: Առաջինը խոր

Թախանցում է ուղեղի մէջ, իսկ երկրորդը կեղեքում է մորթը: Հայհոյանքի սլաքը դառնում է այն մտրդու վրայ, որ կտրծում է վիրուսը: Շատերի կարծիքով լաջողութեամբ մերկացրած սուրբ հեշտութեամբ է բաւականութիւն տալիս: Սակայն մի վշտացրած սիրտ դժուարութեամբ է հանգստանում:

ԱՆՏՕՆԻՍ.

Այժմ հերթն իմն է, որ քեզ թախանձանօք ասեմ. մի հրաժարուի՛ր, կատարի՛ր իմ ցանկութիւնն, իշխանի ցանկութիւնը, որ ինձ ուղարկեց քեզ մօտ:

ՏԱՍՍՕ.

Ես ճանաչում եմ իմ պարտաւորութիւնները և համաձայնում եմ. Թող ներուած լինի, որքան կարելի է: Բանաստեղծները խօսում են մի տեսակ նիզակի մասին, որ աջն վէրքը, որ ինքն է պատճառել, կարողանում էր իր սիրալիբ շօշափմամբ բժշկել: Մարդու լեզուն էլ ունի այդ ուժը: Ես չեմ կամենում դրան թշնամական հակառակութիւն գոյց տալ:

ԱՆՏՕՆԻՍ.

Ենորհակալ եմ քեզանից և ցանկանում եմ, ինձ և իմ կամքս քեզ ծառայեցնելու համար մտերմութեամբ փորձես: Ասա ինձ, կարո՞ղ եմ քեզ օգտաւէտ լինել: Ես լօժարութեամբ ցոյց կը տամ:

ՏԱՍՍՕ.

Դու առաջարկում ես այն, ինչ որ ես միայն ցանկալ կարող էի: Դու վերադարձրի՛ր ինձ ազատութիւնն, այժմ խնդրեմ հոգաս, որ կարողանամ գործադրել:

ԱՆՏՕՆԻՍ

Ի՞նչ կարող ես կարծել, պարզ խօսիր:

ՏԱՍՍՕ.

Դու գիտես, որ ես վերջացրել եմ իմ երկասիրութիւնը: Դեռ շատ բան պակաս է, որ բոլորովին աւարտած լինի: Այս օր մատուցի իշխանին, միենոյն ժամանակ լուս ունէի մի խնդիրք ներկայացնել նրան: Այժմ բարեկամներիցս շատերին ժողովուած եմ գտնում Հռովմում: Նրանցից ամեն մէկն արդէն առանձին նամակով լալտնել է ինձ իր կարծիքը զանազան տեղերի մասին: Շատից կարողացալ օգտուել, շատ բանի մասին էլ պէտք է մտածեմ և լօժարութեամբ չէի կամենալ զանազան տեղերը փոփոխել, եթէ ինձ աւելի չը համողեն:

քան կատարուել է: Այդ բարբառը չի կարելի նամակներով կատարել: Ներկայութիւնը շուտ կը բանալ այդ հանգուցները: Այսօր մտածում էի, իշխանից ինքս խնդրեմ, տեղ չը գտայ, այժմ չեմ համարձակուի ե լուս ունեմ այդ թուլտութիւնը քո միջնորդութեամբ ստանալ:

ԱՆՏՕՆԻՕ.

Ինձ թւում է, խորհրդաբեր չի լինի, որ դու այժմ հեռանաս, որովհետև վերջացրած աշխատութիւնդ քեզ առաջադրում է իշխանին և իշխանուհուն: Մէկ օրուայ շնորհքը հաւասար է մէկ օրուան հունձքի: Պէտք է զործել հենց որ նա հասնի: Եթէ հեռանաս, ոչինչ չես վաստակի, կարելի է կորցնես, ինչ որ արդէն վաստակել ես: Ներկայութիւնը մի ուժեղ աստուածուհի է, ճանաչիր նրա ազդեցութիւնը, մեծ:

ՏԱՍՍՕ.

Վախենալու ոչինչ բան չունեմ: Ալֆօնսն ազնիւ է, իմ վերաբերմամբ իրեն միշտ մեծահոգի է ցոյց տուել: Եւ ինչ լուս որ ունեմ, պէտք է միայն բարեբարութիւնից սպասեմ, ոչ թէ ողորմածութիւն որսամ իմ համար: Ես չեմ կամենում նրանից ոչինչ ընդունել, որ սալով կարող է նրան զղջացնել:

ԱՆՏՕՆԻՕ

Ուրեմն մի պահանջիր նրանից, որ նա այժմ արձակուրդ տայ քեզ: Նա այդ անհնութեամբ կը կատարի և համարեա վախենում եմ, որ նաև չը կատարի:

ՏԱՍՍՕ.

Նա լսծարութեամբ կը կատարի, եթէ լաւ խնդրեն և դու լաւ կարող ես, եթէ կամենաս:

ԱՆՏՕՆԻՕ

Բայց ասան ինձ, ինչ պատճառներ պէտք է առաջ բերեմ:

ՏԱՍՍՕ

Թող իմ երկասիրութեան ամեն մի տողն ինքը խօսի: Ինչ որ ես ցանկացել եմ, գովելի է, եթէ նաև նպատակն իմ ուժերի համար անհասանելի է մեռում: Խնամքի և ջանքի պահատութիւն չի եղել: Շատ օրերի ուրախալի ընթացքը, մութ գիշերների հանդարտութիւնը նուիրած էին միայն այդ բարեպաշտ երկին: Յոյս ունեմ համեստութեամբ մօտենալ հնադարեան մեծ վարպետներին, անվեհերութեամբ զինուած, զարթեցնել մեր ժամանակակիցներին երկարատե քնից, կոչել:

ազնիւ քաջագործութիւններ կատարելու, լետոյ կարելի է քրիստոնէից ազնիւ զօրքերի հետ մասնակցեմ կրօնական պատերազմի վտանգին ու փառքին: Եւ եթէ իմ երկը պէտք է զարթեցնի ամենաարժանաւոր մարդկանց, պէտք է որ ամենալաւերին արժանի լինի: Ալֆօնսին եմ պարտաւոր, ինչ որ կատարեցի: Այժմ կը ցանկալի վերջացնելու համար էլ նրան պարտաւոր լինեմ:

ԱՆՏՈՆԻՕ

Եւ այս իշխանն այստեղ միւսների հետ կարող է առաջնորդել քեզ նոյնպէս լաւ ինչպէս Հռովմայեցիք: Այստեղ վերջացրու երկասիրութիւնդ, սկս է տեղն, իսկ գործելու համար շտապիր Հռովմ:

ՏԱՍՍՕ

Ալֆօնսն առաջինը ողևորեց ինձ, կը լինի անշուշտ վերջինը, որ ինձ կուսուցանի: Միենտոյն ժամանակ քո խորհուրդը, խելացի մարդկանց խորհուրդը, որոնք ժողովուած կան մեր արքունիքում, բարձր եմ դասում: Գուք պէտք է որոշէք, եթէ բարեկամներս Հռովմում չը կարողանան ինձ ընտրովին համոզել: Սակայն պէտք է դրանց տեսնեմ: Գօնցագան ժողովել է իմ համար մի ատեան, որին ես պէտք է ներկայանամ: Հաղիւ կարող էի այդ սպասել: Ֆլամինիօ դէ Նօբիլի, Անջէլիօ դա Բանդա, Անտօնիանօ և Սպէրօն Սպէրօնի, դու դրանց ճանաչում կը լինես: Ի՛նչ անուններ են: Դրանք հաւատք ու հոգս են ներշնչում հոգուս մէջ, որ լօծարութեամբ խոնարհում է:

ԱՆՏՈՆԻՕ.

Դու միայն քո մասին ես մտածում, իսկ իշխանի մասին ոչ: Ես քեզ ասում եմ, որ նա քեզ չի արձակի: Եւ եթէ կատարի, նա լօծար կամքով քեզ չի թողնի: Դու չես պահանջիլ արջն, ինչ որ նա լօծարութեամբ չէր կամենալ տալ: Եւ պէտք է արդեօք բարեխօսեմ արջ գործում, որ ես ինքս գովել չեմ կարող:

ՏԱՍՍՕ.

Միթէ մերժում ես իմ առաջին խնդիրքն, երբ կամենում եմ փորձել առաջարկած բարեկամութիւնդ:

ԱՆՏՈՆԻՕ

Ճշմարիտ բարեկամութիւնն երևում է մերժման մէջ

պատեհ ժամին և սէրն լաճախ տալիս է մի վնասակար ինչք, երբ խնդրողի ցանկութեան մասին աւելի է մտածում, քան նրա բախտի մասին: Այս վարկեանում լաւ ես համարում, ինչ որ եռանդով ցանկանում ես և այս վարկեանում կամենում ես, ինչ որ պահանջում ես: Մոլորուողը դիւրաբորբոքմամբ լրացնում է ալն, ինչ որ ճշմարտութիւնը և ուժերը չեն կարողանում տալ: Իմ պարտաւորութիւնը պահանջում է, որքան կարող եմ, մեղմացնել աճապարանքը, որ քեզ տանում է դէպի չարք:

ՏԱՍՍՕ.

Ես արդէն վաղուց եմ ճանաչում բարեկամութեան այդ բռնութիւնը, որ իմ համար բոլոր բռնութիւններից ամենաանտանելին է թւում: Դու ալլ կերպ ես մտածում և այդ պատճառով էլ կարծում ես, որ ուղիղ ես մտածում: Ես լծաբութեամբ եմ ընդունում, որ դու իմ լաւն ես կամենում, միայն մի պահանջիր, որ դրան քո ճանապարհի վրայ պէտք է դանեմ:

ԱՆՏՕՆԻՅ

Եւ միթէ պէտք է իսկոյն սառն արիւնով կատարեմ և պարզ համոզմունքով վնասեմ քեզ:

ՏԱՍՍՕ

Ես ցանկանում եմ քեզ ազատ պահել այդ հոգսից: Այդ խօսքերով դու ինձ չես կարող լետ կանգնեցնել: Դու ինձ ազատ լայտնեցիր և այս դուռն ինձ համար այժմ բաց է, որ տանում է դէպի իշխանը: Ընտրութիւնը թողնում եմ քո կամքին: Դու, կամ ես: Իշխանը գնում է: Ոչ մի բոպէ չը պէտք է սպասել: Նոտ ընտրելու: Եթէ դու չը գնաս, ես կը գնամ, և թող լինի ինչ որ լինելու է:

ԱՆՏՕՆԻՅ

Մի փոքր միջոց տուր ինձ և սպասիր մինչև իշխանը վերադառնալ: Միայն ոչ ալօր:

ՏԱՍՍՕ

Ո՛չ, եթէ կարելի է հէնց այժմ: Ոտներս ալրում են այս մարմարիտնի լատակի վրայ: Խեղքս չի կարող հանդարտութիւն գտնել, մինչև որ արձակ ճանապարհի փոշին, ինձ շտապողիս, չը շրջապատի: Խնդրում եմ քեզ: Դու տեսնում ես թէ այս բոպէիս, որքան անկարող եմ, իմ տիրոջ հետ խօսել:

Տեսնում ես, ինչպէս կարող եմ ես այդ թագցնել, որ այս բու-
 պէլիս ես ինքս, ոչ էլ մի որ և է որժ չի կարող հրամայել
 ինձ: Միայն շղթաները կարող են ինձ պահել: Ալֆօնսը բըռ-
 նակալ չէ, նա ինձ ազատ լատնեց: Ո՛րքան լօծարութեամբ
 միշտ հնազանդել եմ նրա խօսքերին: Այսօր չեմ կարող հնա-
 զանդել: Միայն այսօր ազատութիւն տուէք ինձ, որ հոգիս
 խաղաղութիւն վայելի: Ես շուտով կը վերադառնամ պարտա-
 ւորութիւններս կատարելու համար:

ԱՆՏՕՆԻՅՈ

Դու ինձ երկմիտ ես դարձնում: Ի՞նչ պէտք է անեմ: Ես
 լաւ նկատում եմ, որ այստեղ մի սխալանք կայ:

ՏԱՅՍՈ.

Եթէ պէտք է հաւատ ընծայեմ քեզ, եթէ իմ բարին ես
 ցանկանում, աշխատիր որքան կարող ես մաղթանքս կատա-
 րելու: Այն ժամանակ իշխանը կը թողնի ինձ գնալ, և ես
 չեմ կորցնի նրա ողորմածութիւնը, նրա օգնութիւնը: Դրա
 համար քեզնից շնորհակալ կը լինեմ և լօծարութեամբ քեզ
 պարտաւորուած կը լինեմ: Իայց եթէ դու կրօնուճդ մի հին
 քէն ես փալփալում, կամենում ես աքսորել ինձ այս արքու-
 նիքից, ցանկանում ես լաւիտեան բախտս ծռել, առանց մի-
 օգնութեան աքսորել ինձ դէպի լայնատարած աշխարհը, կար-
 ծիքիդ վրայ հաստատ կաց և ընդդիմացիր:

ԱՆՏՕՆԻՅՈ

Որովհետեւ ես քեզ պէտք է գնասեմ, ս՛վ Տասսօ, ընտ-
 րում եմ այն ճանապարհը, որ դու ես ընտրել: Թող վախճանը
 որոշի, թէ ս՛վ է սխալուել: Դու կամենում ես գնալ: Ես քեզ
 առաջուց ասում եմ, թիկունքդ հաղիւ դէպի այս տունը դարձ-
 րած լինես, սիրտդ կը պահանջի վերադառնալ, քո կամակո-
 րութիւնը կը մղէ քեզ դէպի առաջ: Ցաւը, լուրջը, տխրու-
 թիւնը կը ծանրանան շուրջում քեզ վրայ և դու այստեղ էլ,
 բայտեղ էլ նպատակիդ չես հասնիլ: Սակայն քեզ խորհուրդ
 տալու համար, այդ այլ ես չեմ ասիլ: Առաջուց միայն ասում
 եմ, ինչ որ շուտով պէտք է պատահի և առաջուց հրաւիրում
 եմ քեզ, ամենավատ դէպքումն էլ հաւատալ ինձ: Ինչպէս դու
 պահանջում ես, ես կը խօսեմ իշխանի հետ:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ի Լ

ՏԱՍՍՕ (միայն)։

Այն, զնա միայն և հաստատ զնա, որ դու համոզես ինձ, ինչպէս կամենում էիր։ Ես կեղծել եմ սովորում։ Որովհետև դու մեծ վարպետ ես և ես հեշտութեամբ եմ հասկանում։ Կեանքն արդպէս ստիպում է մեզ կեղծել, այն, լինել նրանց նման, որոնց մենք կարող ենք քաջութեամբ և հպարտութեամբ արհամարհել։ Այժմ պարզ տեսնում եմ, արքունեաց ոստայնի ամբողջ արուեստը։ Անտօնիօն կամենում է ինձ ալտեղից աքտորել և չի կամենում ցոլց տալ, որ նա ինքն է ինձ աքտորում։ Նա իրեն ձևացնում է որպէս խնալող, խելօք, որ ինձ խիստ տկար գտնեն և ինքս ինձ անկարող զգամ, իրեն ձևացնում է խնամակալ, որ մինչև երեսուպի դրութեանը ստորացնի ինձ, որին չը կարողացաւ սարկութեան ենթարկել։ Նա ակդ կերպով է միզապատում իշխանի ճակատը և իշխանուհու աչքերը։ Նա կարծում է, որ պէտք է ինձ պահել, չէ որ բնութիւնն ինձ պարզեցնել է մի գեղեցիկ արժանիք, բայց տարաբախտաբար այդ բարձր շնորհքը վատ է ուղևորել, շատ թուլութիւններով, անզուսպ հպարտութիւնով, չափազանց դիւրագրգռութիւնով և սեփական տիրալի զգացութեամբ։ Ուրիշ կերպ չի կարող լինել, եթէ բնութիւնը մի մարդու ճակատագիրն արդպէս է տնօրինել։ Պէտք է այդ մարդուն ընդունել ինչպէս որ նա կալ, համբերել, տանել նրան և կարելի է մի լաջող օր վալելել նրանից անսպասելի վաստակ, որով նա կարող է ուրախութիւն պատճառել։ Սակայն ինչպէս որ նա ծնուել է, պէտք է նրան թուլ տալ այնպէս ապրել այնպէս էլ մեռնել։ Միթէ չեմ ճանաչում Ալֆօնսի հաստատ խելքը, որ դիմադրում է թշնամիներին և հաւատարմութեամբ պաշտպանում է բարեկամներին։ Հասկանցալ արդեօք նրան, թէ նա ինչպէս հանդիպեց ինձ։ Այն, ես այժմ հասկանում եմ իմ անբախտութիւնը։ Այդ է իմ ճակատագիրը, որ ամեն ոք միայն իմ վերաբերմամբ է փոփոխուում, ամենաթեթև քամուց մէկ բոպէում շեղում է, խսկ ուրիշների համար միշտ հաւատարիմ և անփոփոխ է մնում։ Միթէ միայն այդ մարդու գալը մէկ ժամում չը քանդեց իմ բախտը։ Նա չէր, որ իմ բախտի շէնքը հիմքի խորքից տակն ու վրայ արեց։ Ո՛հ»

պէտք է ալդ տեսնէի, հէնց ալս օր: Այ՛ն, ինչպէս ամեն մէկը գիտում էր դէպի ինձ: Այժմ բոլորն ինձ թողել են: Ի՞նչպէս ամեն մէկն աշխատում էր ձգել ինձ դէպի իրեն, հասկանալ ինձ: Այժմ բոլորն էլ աշխատում են ի բաց մերժել ինձ և խուսափել ինձանից: Եւ ինչու: Միթէ նա է միայն կշռում իմ արժանաւորութեան և բոլոր սիրոյ նժարը, որոնցով ես առատութեամբ պարգևուած եմ: Այ՛ն, այժմ բոլորը խուս են առաջ ինձանից: Դու էլ, դու էլ, սիրելի իշխանուհի, դու էլ ես հրաժարում ինձանից: Այս տխրալի միջոցին չ'ուղարկեց ինձ շնորհքի ոչ մի նշան: Միթէ դրան ևմ արժանացել: Դու խեղճ սիրտ, որին այնքան բնական էր նրան լարգելը: Երբ լսում էի նրա ձայնը, ինչպիսի անասելի դրացմունք թափանցում էր կուրծքս: Երբ տեսնում էի նրան, օրուան պայծառ լոյսն ինձ խաւար էր թւում: Անդիմադրելի կերպով քաշում էր ինձ նրա աչքը, նրա շրթունքը, ծնկներս հազիւ դիմանում էին և կանգնած մնալու համար հարկաւոր էր իմ ամբողջ հողույ ուժը, որ նրա ոտների տակ չ'ընկնէի: Հազիւ կարողանում էի ցրուել ալդ դառանցանքը: Այժմ, սիրտ դիմացիր: Դու առողջ խելք, այժմ չը թողնես միջաւորել քեզ: Այ՛ն, նա էլ: Միթէ կարող եմ ալդ ասել և հազիւ հաւատում եմ: Լաւ հաւատում եմ և կը ցանկալի լուել: Նա էլ, նա էլ: Բոլորովին ներկը նրան, միայն ինքդ քեզնից մի թագցնիլ: Նա էլ, նա էլ: Ո՛հ, ալդ խօսքը դէպի որը ես պէտք է կասկածանքով վերաբերուէի մինչև ապրում է իմ մէջ հաւատքի մի աւիւն, այ՛ն, ալդ խօսքը փորագրւում է ինչպէս ճակատագրի մի վերջաբան տանջազիւսակի, լիապէս գրուած, պղնձեալ եղերքի վրայ: Այժմ թշնամիներս ուժեղ են, այժմ լաւտեան խլուած է ինձնից ամեն մի ուժ, ինչպէս պատերազմեմ, երբ որ նա դիմացի զօրքի մէջն է: Ի՞նչպէս պէտք է համբերութեամբ տանեմ, եթէ նա իր ձեռքը հեռուից չի մեկնում ինձ: Եթէ նրա հայեացքը չի հանդիպում աղերսողիս: Դու համարձակուեցիր ալդ մտածել, խօսել և ալդ ուղիղ է առաջ քան վախենալ կարող էիր: Եւ առաջ քան լուսահատութիւնն իր երկաթի ճանկերով զգալարանքդ քրքրեց, այ՛ն, զանգատուիք դառը ճակատագրից և կրկնիր միայն, նա էլ, նա էլ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂԱԴԻՓԻՒՆ

ՍԻՈՋԻՆ ՏԵՍԻԼ

Պ Ա Ր Յ Է Ջ

ԱԼՖՕՆՍ, ԱՆՏՕՆԻՕ

ԱՆՏՕՆԻՕ.

Քո ակնարկութեամբ երկրորդ անգամ գնացի Տասսօի մօտ, այժմ նրա մօտիցն եմ գալիս: Ես համոզուած էի, նաև ստիպուած էի, միայն նա իր միտքը չի փոխուած և անձկալից խնդրուած է, որ դու նրան թող տաս կարճ ժամանակով գնալ Հոովմ:

ԱԼՖՕՆՍ

Ես դժգոհ եմ, որ և խոստովանուած եմ քեզ. և աւելի լաւ է այդ ասեմ քեզ, որ ես այդպէս եմ, քան թէ դժկամութիւնս ծածկեմ և աւելացնեմ: Նա կամենում է գնալ, Լաւ: Ես չեմ արգելում: Նա ցանկանում է գնալ, կամենում է Հոովմ գնալ: Ի՞նչ, այդպէս լինի: Միայն թէ Սցիպիօ Գօնցազան, այն խելօք Մէդիլին նրան ճանապարհից չը հանի: Իտալիային մեծ դարձրեց այն, որ ամեն մի դրացի միւսի հետ վիճում է, արժանաւորագոյններին տիրել, օգտուել: Մի զօրավար առանց զօրքի նւնում է մի իշխանի, որ տողսնդները չի ժողովում իր շուրջը: Եւ ո՞վ որ բանաստեղծութեան ձայնը չի լսում—մի բարբարոս է, ո՞վ էլ կուզի լինի: Ես գտել և ընտրել եմ դրան, ես հպարտ եմ, որ նրա նման մի ծառայ ունեմ: Եւ որովհետեւ ես նրա համար շատ բան եմ արել, չէի էլ կամենայ առանց կարիքի կորցնել նրան:

ԱՆՏՕՆԻՕ.

Ես շփոթուած եմ, որովհետեւ ես այնուամենայնիւ քո առջև կրում եմ այն լանցանքը, որ այսօր պատահեց: Ես լօժարութեամբ եմ խոստովանում սխալանքս և մնում է, որ քո ողորմածութիւնը ներողութիւն շնորհի: Սակայն եթէ կարող ես կարծել, որ ես ամենայն միջոց չեմ գործ դրել նրան հաշտեցնելու համար, ես բոլորովին անմխիթար կը մնամ: Ո՛հ, խօսիր ինձ հետ քո սքանչելի հալեացքով, որ ես կարողանամ կրկին ըմբռնել և ինքս ինձ հաւատ ընծայել:

ԱԼՖՅՕՆՍ

Ո՛չ, Անտօնիօ, ալդ կողմից հանգիստ եղիր: Ես ոչ մի կերպով ալդ չեմ վերագրում քեզ: Ալդ մարդու զգալութիւնը շատ լաւ եմ ճանաչում և գիտեմ, թէ ինչ եմ արել և որքան խնայել եմ նրան և որքան մոռացել եմ, թէ ինչ պէտք է նրանից պահանջէի: Մարդ շատ բանում կարող է իրեն զրսպել, բայց նրա զգալութիւնը չի կարող զսպել ոչ կարիքը և ոչ էլ երկար միջոցը:

ԱՆՏՅՆԻՕ.

Եթէ բոլորը շատ բան են անում մէկի համար, արդարացի կը լինէր, եթէ ալդ մէկն իրեն լաւ հարցնէր, թէ ուրիշներին ինչ է օգտաւէտ: Ով որ իր խելքն աջքան զարգացրել է, ով ժողովում է ամեն մի գիտութիւն, և մեզ թող է տրուած ամեն մի գիտութիւն, որ մեզ գրաւում է, մթթէ նա երկպառիկ մեղաւոր չէ, եթէ չը գիտէ իրեն զսպել: Մտածում է նա արդեօք դրա մասին:

ԱԼՖՅՕՆՍ

Մենք այժմ չը պէտք է հանգիստ մնանք, Երբ կամենում ենք վայելել, իսկոյն մեր քաջութիւնը վարժելու համար երևան է գալիս մի որ և է թշնամի, մեր համբերութիւնը փորձելու համար տրուում է մի բարեկամ:

ԱՆՏՅՆԻՕ.

Մարդու տուաջին պարտաւորութիւնն է ընտրել իր համար կերակուր և ըմպելիք, որովհետև բնութիւնը նրան անասունների նման չի սահմանափակել, նա կատարում է արդեօք իր պարտաւորութիւնը: Եւ երեխայի նման թնլ է տալիս արդեօք իրեն ամեն բանից գրգռուել, ինչ որ քմքմն փաղաքում է: Ե՛րբ է գինու հետ ջուր խմում: Շուտափոխ մէկը միւսի հետեից կլանում է համեմունք, քաղցրեղէններ, թունդ խմիչքներ և լետոլ զանգատում է թէ իր միտքը պղտորում է, իր տաք արիւնն եռում է, իր բնավորութիւնը տաքանում է և լետոլ մեղադրում է բնութիւնը և ճակատագիրը: Փանիցս անգամ տեսել եմ որպիսի զառնութեամբ և լիմարաբար վիճել է իր բժշկի հետ, ծիծաղելի է համարեալ, եթէ կարելի լինէր ծիծաղել, որ մէկին տանջում է և միւսին ձանձրացնում: «Ըս զգում եմ այս ինչ ցաւն» ասում էր նա վախենալով և տհաճութեամբ, «էլ ինչ էք գովում ձեր ա-

բուհատը, բժշկութիւն գտէք ինձ համար: «Լաւ» ասում էր բժիշկը, «ուրեմն խուսափէք այս և այն բանից»: «Այդ ես չեմ կարող: «Ուրեմն ընդունեցէք այս ինչ դեղը»: «Օ՛, սօյ, զգուշի համ ունի, վրդովում է բնութիւնստ: «Ուրեմն ջուր խմէք»: «Ձճւր: Ո՛չ երբէք: Ջրից այնպէս եմ վախենում, որպէս թէ կատաղածը կծած լինէր»: Ուրեմն ձեզ չի կարելի օգնել: «Ի՞նչու»: «Այդ ցաւի վրայ կաւելանան ուրիշ ցաւեր և եթէ չի կարող ձեզ մահացնել, ամեն օր աւելի և աւելի կը տանջի ձեզ»: «Լաւ, ուրեմն ֆնչու համար էք բժիշկ: Դուք ճանաչում էք իմ ցաւը, դուք պէտք է մի հնարք էլ գիտենաք դեղը համեղացնելու համար, որ ես դեռ ցաւից չը փրկուած, չը տանջուեմ բժշկուելու համար»: Դու ինքդ ես ծիծաղում, քալց ալդ ճիշտ է, չէ՞ որ ինքդ նրա բերանիցն ևլ ես լսել:

ԱԼՖՅՆՍ

Եւ ալդ լաճախ եմ լսել և լաճախ ներել եմ:

ԱՆՏՕՆԻՕ.

Ի հարկէ անչափաւոր կեանքը, որի պատճառով մենք ծանր, վարեմնի երազներ ենք տեսնում, վերջապէս մեզ ստիպում է օրը ցերեկով երազել: Ի՞նչ է նրա կասկածանքն, եթէ ոչ երազ: Ուր գնում է, կարծում է, որ թշնամիներով է շըրջապատուած: Նրա տաղանդը ոչ ոք չի կարող ճանաչել, որ նրան չի նախանձում, ոչ ոք չի կարող նախանձել նրան, որ նրան չի ատում և խստաբար չի հալածում: Այդպէս շատ անգամ քեզ գանգատներով ձանձրացրել է. կողպէքները կոտրել են, նամակները բռնել են, և թոյն և դաշոյն, ֆնչեր չի երևակայում նա: Դու քննութեան ենթարկել տուիր, քննեցիր և մի բան գտար արդեօք: Հազիւ թէ մի նշույլ: Ոչ մի իշխանի հովանաւորութիւն չի կարող նրան ապահովել, ոչ մի քարեկամի կուրծք չի կարող նրան սփոփել: Եւ դու կամենում ես մի այդպէսին հանգստութիւն, բնիտ տալ, կամենում ես նրանից ուրախութիւն խոստանալ քեզ:

ԱԼՖՅՆՍ

Դու իրաւացի կը լինէիր, Անտօնիօ, եթէ կամենալի նըբանից անձնական օգուտ տեսնել: Թէպէտե իմ համար արդէն առաւելութիւն է, որ նրանից անմիջապէս և անպայման օգուտ չեմ սպասում: Ամեն ինչ չի կարող մեզ միակերպ ծառայել: Ով որ կամենում է շատ բան գործադրել, պէտք է ա-

մեն ինչ գործադրի իր ձեռով, այն ժամանակ նա ամեն ինչ իրեն լաւ ծառայեցրած կը լինի: Այդ մեզ սովորցրել են Մէդիչիներն, այդ ապացուցել են Պապերն իրենք: Ո՛րպիսի զգուշութեամբ, որպիսի իշխանական համբերութեամբ և երկայնամտութեամբ զիմացել են այդ մարդիկ մի քանի մեծ տաղանդի, որ թուում էր թէ նրանց մեծ ողորմածութեանը հարկաւոր չէր և արնուամենայնիւ հարկաւոր էր:

ԱՆՏՕՆԻՑ.

Ո՛վ չը գիտէ, իմ իշխան, միայն կեանքի նեղութիւնը մեզ սովորցնում է գնահատել կեանքի բարիքը: Այդպէս երիտասարդ հասակում նա արդէն շատի է արժանացել, որ կարողանար չտախտորութեամբ վայելել: Ո՛հ, եթէ նա առաջ աշխատէր, ինչ որ նրան առատ ձեռքերով են առաջարկել, եթէ նա իր ոլտերը տղամարդի նման լարէր և քալլ առ քալլ բաւականութիւն զգար: Մի խեղճ աշնուական արդէն հասած է լինում իր ամենամեծ նպատակին, երբ մի ազնիւ իշխան ցանկանում է ընտրել նրան իր պալատի մլաքան և մեղմ ձեռքով փրկել նրան չափաւորութիւնից: Եթէ պարզեւմ է նրան հաւատարմութիւն և ողորմածութիւն և ցանկանում է բարձրացնել նրան իր մօտ միւսներից, լինի այդ պատերազմում թէ զործերում կամ խօսակցութեանց ժամանակ, կարծում եմ, որ համեստ մարդը լամբ շնորհակալութեամբ կը լարգի իր քախտաւորութիւնը: Եւ Տասսօն դեռ ալք բողորի հետ ունի երիտասարդի ամենագեղեցիկ բախտը, որ հալրենիքն արդէն ճանաչում է նրան և լոյս է դնում նրա վրայ: Ո՛հ, հաւատու ինձ, նրա քմահաճ տնածութիւնը հանգչում է նրա բախտի, լայն բարձի վրայ: Նա գալիս է, ողորմածութեամբ խօլլ տուր նրան գնալ, տուր նրան ժամանակ շտովմում և Նապօլում, որտեղ կամենում է որոնել արն, ինչ որ նա այս տեղ չի գտնում և ինչ որ միայն այս տեղ կը գտնի:

ԱԼՖՅՆՍ

Կամենում է առաջ Ֆէրմարա վեյադառնալ:

ԱՆՏՕՆԻՑ

Նա ցանկանում է Բէլլիգոնարթօ մնալ և կամենում է մի բարեկամի միջնորդութեամբ իր համար ուղարկել տալ ինչ որ ճանապարհորդութեան համար հարկաւոր է:

ԱԼՖՅՕՆՍ.

Եւ բաւական եմ: Գուրս իր բարեկամի հետ խսկոցն կը վերադառնայ և ես ձիով նրանից առաջ տանը կը լինիմ: Գուշուտով կը հետևես մեզ, երբ նրա համար հոգած լինիս: Հրամայիր տնարարին, ինչ որ հարկաւոր է, որ նա կարող է ալստես, ամրոցում մնալ, որքան կամենում է, մինչև որ նրա բարեկամն իրեն ուղարկի, մինչև որ մենք նամակներ ուղարկած լինինք նրան, որ ես ցանկանում եմ նրան տալ դէպք չնոյմ: Նա գալիս է: Գնաս բարև:

ՆՐԿՐՈՐԳ ՏԵՍԻԼ

ԱԼՖՅՕՆՍ, ՏԱՍԱՏՕ.

ՏԱՍԱՏՕ (զգոյշ)

Այն ողորմածութիւնը, որ դու ինձ այդքան լաճախ ապացուցել ես, այս օր լալտնում է ինձ ամբողջ փալլով: Գուշներեցիր, ինչ որ ես քո մօտ անդգոյշ և լանդուզն կերպով կատարեցի: Գուշաշտեցրիր ինձ հակառակորդիս հետ, դու ցանկանում ես թող տալ ինձ առ ժամանակ հեռանալ քեզնից, ցանկանում ես մեծահոգութեամբ վերապահել իմ համար քո շնորհքը: Այժմ ես լիակատար վստահութեամբ եմ հեռանում քեզանից և դադտնի լուսում եմ, կարճ միջոցը պէտք է բժշկէ ինձ ամեն բանից, ինչ որ այժմ ինձ ճնշում է: Հոգիս լվէտք է նորից ամբառնայ և այն ասպարէզը, որի վրայ քո ակնարկով, ուրախութեամբ և քաջութեամբ խրախուսուած, առաջին անգամ ոտք դրեցի, քո շնորհքին նորից ալժանի լինի:

ԱԼՖՅՕՆՍ.

Ճանապարհորդութեանդ ժամանակ ցանկանում եմ քեզ լաջողութիւն և լոյս ունիմ, որ ուրախ և բոլորովին առողջացած կրկին կը վերադառնաս ինձ մօտ: Այն ժամանակ դու կը վերադարձնես մեզ կրկնապատիկ վաստակ ամեն մի ժամի համար, որ դու մեզնից խլում ես: Եւ քեզ նամակներ կը տամ չնոյմ իմ կողմնակիցների և բարեկամների վրայ և ինձ շատ ցանկալի է, որ դու իմոնց հետ ամեն տեղ հաւատարմութեամբ վերաբերուես, քանի որ ես քեզ ՚ի հարկէ իմն եմ համարում, թէպէտև հեռու կը լինես:

ՏԱՍՍՕ

Դու շնորհակալից ես անում, սով իշխան, այն մարդուն, որ իրեն անարժան է զգում և այս բողոքիս անկարող է նա և իր շնորհակալութիւնը լայտնել: Շնորհակալութեան փոխարէն մի խնդիրք եմ ներկայացնում: Իմ երկասիրութիւնն ամենից մօտ եմ համարում իմ սրտիս: Ես շատ աշխատեցի և չեմ խընաւել ոչ ջանք և ոչ էլ խնամք, միայն դեռ շատ բան է մնում կատարելու: Ես ցանկանում եմ այն տեղ, ուր դեռ մեծահանձար մարդկանց ոգիներն են երերում և ուժգնութեամբ են երերում, այն տեղ կը կամենալի նորից ուսումնարան դնալ, այն ժամանակ իմ երկն աւելի կ'արժանանալ քո հաճոյին: Ո՛հ, վերադարձրու ինձ այն թերթերը, որոնց մասին ամաչելով եմ մտածում, որ քեզ եմ լանձնել:

ԱԼՖՅՆՍ

Դու այս օր չես վերցնի ինձանից, ինչ որ հէնց այս օր տուեցիր: Քոյլ տուր, որ միջնորդ լինիմ քո և բանաստեղծութեանդ մէջ: Զգու՛ն եղիւր, որ անաչառ ջանքովդ չը վիրաւորես մեղմ բնաւորութիւնը, որ կենդանի է քո լանգերի մէջ և մի լալր զանազան խորհուրդների: Զանազան մարդկանց հաղար տեսակ մտքերը, որոնք կեանքում և մտածմունքի ժամանակ միմեանց հակառակ են, բանաստեղծը խելացի կերպով միացնում է և չի վախենում մի քանիսին տհաճ լինելու, որ նա ոմանց ևս առաւել հաւանելի լինի: Սակայն ես չեմ ասում, որ դու չը պէտք է համեստութեամբ գործադրես այս ու այնտեղ քո խալտոցը, միևնույն ժամանակ խոստանում եմ քեզ, որ կարճ միջոցում բանաստեղծութիւնդ արտագրած կը ստանաս: Քո ձեռքով գրածը կը մնալ իմ ձեռքերում, որպէս զի կարողանամ քոյրերիս հետ մրասին լիովին վալելել: Եթէ աւելի կատարելագործուած լիտ բերես, աւելի մեծ վալելքով կ'ուրախանանք և որպէս բարեկամներ կը զգուշացնենք քեզ միայն մի քանի տեղերում:

ՏԱՍՍՕ.

Ես ամաչելով կրկնում եմ խնդիրքս. շուտ տուր ինձ արտագրածը: Իմ հոգին ամբողջովին հանգչում է այդ գործի վրայ: Դա պէտք է դառնալ ինչ որ դառնալու է:

ԱԼՖՅՆՍ

Ես հաւանում եմ ձգտումն, որ քեզ ողևորում է; սակայն

սիրելի Տասսօ, եթէ կարելի է պէտք է մի կարճ միջոց ազատ աշխարհը վարելէիր, զուարճանալիր, բժշկութեամբ արիւնդ մաքրէիր: Այն ժամանակ քեզ շնորհուած կը լինէր վերականգնած զգացման քիչ գեղեցիկ ներդաշնակութիւնը, որ զուպղտորուած եռանդովդ ի զուր ես որոնում:

ՏԱՍՍՕ.

Այդպէս թուում է, իմ իշխան, բայց ես առողջ եմ: Եթէ կարողանամ աշխատասիրութեանս նուիրուել, աշխատասիրութիւնն ինձ կրկին կ'առողջացնի: Դու ինձ երկար ժամանակ ես ճանաչում, ես ինձ լաւ չեմ զգում ազատ շքեղութեան մէջ: Հանդատութիւնն ինձ ամենից քիչ է հանգստացնում: Տարաբախտաբար զգում եմ, որ այս հոգուս համար բնութիւնը չի որոշել լողալ ժամանակի լայնատարած ծովում, առօրեայ փափուկ տարրերի վրայ:

ԱԼՖՅՆՍ

Ինչ որ մտածում, գործում ես, այդ բոլորը խոր ընկդմում է քեզ քո մէջ: Ճակատագիրը մեր շուրջը զանազան անդունդներ է փորել: Սակայն այստեղ, մեր սրտում դռնում է ամենախոր անդունդը, որի մէջ ընկնելն սքանչելի է: Խընդրեմ ինքդ քեզ ազատես քեզնից: Ինչ որ մարդը վաստակում է, այն կորցնում է բանաստեղծը:

ՏԱՍՍՕ.

Ի զուր եմ զսպում իմ մէջ այս ձգտումը, որ օր ու գիշեր կրծքումս ալլալլում է: Եթէ ես չը մտածեմ, կամ չըբանաստեղծեմ, կեանքս ալլ ես ինձ համար կեանք չէ: Արգելիր շերամին մանելու, երբ նա մանելով մօտենում է իր վախճանին: Նա իր կազմուածքից արտադրում է թանկագին հիւսուածք և չի դադարում մինչև որ ինքն իրեն չի ամփոփում իր դագաղի մէջ: Ո՛հ, եթէ մի բարի աստուած մի ժամանակ մեզ տար նախանձելի որդի ճակատագիրը, որ արագութեամբ և ուրախութեամբ տարածէինք թևերն արեգակի նոր հովտում:

ԱԼՖՅՆՍ

Լսիր ինձ. Դու շատերի կեանքի վայելչութիւնը կըրկնապատկում ես, խնդրեմ, սովորի՛ր կեանքի արժէքը ճանաչել, որ զու տասնապատիկ լիութեամբ ունես: Գնան բարե:

Որքան շուտ վերադառնաս մեզ մօտ, այնքան աւելի գեղեցիկ կը լինի գալուստդ մեզ համար:

ԵՐՐԱՐԳ ՏԵՍԻԼ

ՏԱՍՍՕ (միայն)

Սիրտ իմ, այդպէս հաստատ եղիր, հէնց այդպէս լաւ էր: Քեզ համար դժուար է, այս առաջին անգամն է, որ դու ցանկանում ես ե կարողանում ես կեղծել: Լաւ լսեցիր, այդ նրա խօսքերը չէին: Ինձ թուում էր, որպէս թէ միայն Անտօնիօի ձայնի արձագանքն էր: Ո՛հ, զգոյշ եղիր միայն: Գու այդ լսկոյն ամեն կողմից կը լսես: Հաստատ, միայն հաստատ: Գեռ մէկ բոպէի բան կալ անելու: Ով որ կեանքում կեղծելն ուշ է սովորում, նա կանխաւ ունի պատուաւորութեան տեսքն, արդէն կը լաջողի, միայն փորձուի՛ր դրանց հետ

(Փոքր դադարից լետոյ)

Գու շատ շուտ ես լողթանակում, ահա նա այս կողմն է գալիս: Գալիս է սքանչելի իշխանուհին: Ո՛հ, ինչ զգացմունք: Նա ներս է մտնում: Գովամակութիւնը և անվստահութիւնը կրծքումս լուծում են ցաւերի:

ՉՈՐՐԱՐԳ ՏԵՍԻԼ

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ՏԱՍՍՕ.

(Տեսիլի վերջում միւսները)

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Գու մտադիր ես հեռանալ մեզնից, կամ թէ աւելի ուղիղն ասած, ցանկանում ես դեռ միալ Բէլլիգուարզօ՞ում և լետոյ կամենում ես հեռանալ մեզնից, Տեսաս: Նոյս ունիմ, որ միայն մի կարճ միջոցով: Գու գնում ես Հռօվմ:

ՏԱՍՍՕ

Առաջ ուղեորուելու եմ այդտեղ և բարեկամներս ինձ լաւ կ'ընդունեն ինչպէս ես վստահանում եմ լուսալ, այնտեղ կարելի է, որ վերջին անգամ խնամքով և համբերութեամբ վերջին անգամ ձեռք տամ երկասիրութեանս: Սո այն տեղ ժողովուած կը գտնեմ շատ անձանց, որոնք իրենց

կարող են ամեն տեսակի վարպետներ անուանել։ Եւ միթէ աշխարհի ալդ առաջնակարգ քաղաքում ամեն մի վայր, ամեն մի քար չի դիմում մեզ խօսքով։ Քանի, քանի հաղարաւոր լուռ վարպետներ ծանր վեհափառութեամբ մեզ սիրով են ակնարկում։ Եթէ երկասիրութիւնս աչտեղ չը վերջացնեմ, երբէք չեմ կարող աւարտել։ Ա՛ի, տարաբախտաբար զգում եմ արդէն, զչ մի ձեռնարկութեան մէջ բախտ չունիմ։ Երկասիրութիւնս կը փոփոխեմ, բայց երբէք չեմ վերջացնի։ Ես զգում եմ, լաւ եմ զգում բարձր արուեստը, որ ամենքին սնունդում է, որ զօրացնում, կազդուրում է առողջ հոգուն, ինձ կը գլորի անդունդը, կ'աքսորի ինձ։ Ես շտապում եմ գնակ, թանկանում եմ շուտ Նապօլ հասնել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Կը համարձակուես արդեօք։ Դեռ խիստ աքսորը չի վերջացած, որ սխաժամ հանդիպեց քեզ և հօրդ։

ՏԱՍՍՕ

Դու իրաւացի ես զգուշացնում, ես արդէն նրա մասին մտածել եմ։ Ծպտուած կը գնամ ահն տեղ, կը հագնեմ աղքատ պանդխտի կամ հովուի շորեր։ Ես կը սպրդեմ քաղաքի միջով, ուր հաղարաւորների երթեկութիւնը կարող է մէկին հեշտութեամբ թաղցնել։ Կ'շտապեմ դէպի ծովի ափն, ահնտեղ իսկոյն կը գտնեմ մի նաւակ, որ պատկանում է բարի մարդկանց, գիւղացւոց, որոնք եկել են վաճառանոց և ցանկանում են տուն վերադառնալ, Սօրէնտի բնակիչներին, որովհետեւ ես Սօրէնտ պէտք է անցնեմ։ Այնտեղ բնակւում է քորս, որ ինձ հետ միասին ծնողներիս ուրախութեան ցաւ է պատճառել։ Նաւակում հանդարտ կը մնամ, նոյնպէս լուռ կ'իջնեմ ցամաք։ Ճանապարհով զգուշութեամբ կը բարձրանամ և մօտենալով դրանը, կը հարցնեմ. ո՞րտեղ է բնակւում Կօրնէլիան։ Ցոյց տուէք ինձ։ Կօրնէլիա Սէրզալէ։ Մի մանող կին ինձ սիրով ցոյց կը տալ փողոցը և տունը։ Կը բարձրանամ վերև։ Երեխաները շուրջս կը վաղվղեն և կը նայեն անկարգ մազերիս, տխուր օտարականիս վրայ։ Այդպէս կը մօտենամ սեամբին։ Դուռը բաց կը տեսնեմ և ներս կը մտնեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եթէ կարելի է, լաւ նայիր, Տասսօ։ Ճանաչի՞ր վտանգը, որի մէջ երևում ես։ Ես քեզ խնայում եմ, հակառակ դէպ-

քում քեզ կ'ասէի, միթէ ազնիւ է ալդպէս խօսելն, ինչպէս որ դու ես խօսում: Միթէ ազնիւ է, միայն իր մասին մտածելը, կարծես թէ չես վերաւորում բարեկամներիդ սիրաբ: Միթէ ծածուկ է քեզնից թէ եղբայրս ինչպէս է մտածում: Միթէ չը գիտես, թէ մենք երկու քոյրերս որքան ենք քեզ գնահատում: Միթէ այդ բոլորը չես զգացել, չես տեսել: Միթէ ամեն ինչ մի քանի բոպէում փոխուեց: Տասսօ: Եթէ կամենում ես հեռանալ, մեզ ցաւ ու հոգսերի մէջ մի գցիր:

(Տասսօն երեսը մի կողմ է դարձնում)

Որքան մխիթարական է կարճ միջոցով հեռացող բարեկամին տալ մի որ և է փոքրիկ ընծալ—մի նոր վերարկու կամ դէնք: Քեզ աւելի ոչինչ չի կարելի ընծալել, որովհետև ըլոր ունեցածդ ակամալ դէն ես գցում: Գու ընտրում ես քեզ համար պանդխտութեան պարկն ու սև վերարկուն, երկար ձեռափայտը և լծար կամքովդ գնում ես որպէս աղքատ և մեզ զրկում ես այն բանից, որ կարող էիր մեզ հետ միասին վալելել:

ՏԱՍՍՕ.

Ուրեմն դու չես կամենում ինձ բոլորովին մերժել: Ո՛հ, ինչ քաղցր խօսք, ս՛հ գեղեցիկ, թանկագին մխիթարութիւն: Պաշտպանի՛ր ինձ: Ա՛ռ ինձ քո հովանաւորութեան տակ: Թո՛ղ ինձ այտեղ, Բէլլիզուարդօ՛ում, տեղափոխիր ինձ Քօնստանդօլի, ս՛ր որ կամենում ես: Իշխանն ունի շատ և գեղեցիկ ամրոցներ, պարտէզներ, որոնք ամբողջ տարի պահպանւում են և դուք հազիւ գնում էք ալդ տեղերը մէկ օրով, երբեմն մէկ ժամով: Այ՛ն, ընտրեցէք ամենահեռաւորը, ուր ամբողջ տարի չէք գնում, որ կարելի է ալժմ անհոգ է մնացել: Այնտեղ ուղարկեցէք ինձ: Թողէք այնտեղ ձերը լինիմ: Որքան կը կամենալի հոգալ քո ծառերի համար, աշնանը կիտրոնների ծառերը ծածկել տախտակներով, աղիւններով և կապած եղէգներով լաւ պահպանել: Գեղեցիկ ծաղիկները պէտք է մարգերում տարածեն իրինց արմատները: Ամեն մի ճանապարհ, ամեն մի անկիւն մաքուր պէտք է լինի: Թո՛ղ պալատի մասին էլ հոգամ: Ժամանակին բաց կ'անեմ լուսամուտները, որ խոնաւութիւնը չը փնասի պատկերներին: Պատերի գեղեցիկ ձեփը կը մաքրեմ մի թեթև հովհարով: Յատակը մաքրութեամբ պէտք է փալի, տեղից չը պէտք է շարժուի ոչ մի քար, ոչ մի աղիւս, ոչ մի ձեղքից խոտ չի ծլի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Կրժքունս չեմ գտնում ոչ մի խորհուրդ, ոչ մի մխիթարութիւն, քեզ և մեզ համար: Աշքս գցում եմ շուրջս, չի տա մեզ արդեօք մի աստուած օգնութիւն, երանի լալտնէր ինձ: մի փրկարար բոլս, մի խմիչք, որ կարողանար հոգուդ և մեզ խաղաղութիւն տալ: Անկեղծ խօսքը, որ թռչում է շրթունքից, այդ գեղեցիկ բուժիչ միջոցն այլ ևս չի ներգործում: Պէտք է քեզ թող տամ գնալ, բայց սիրտս երբէք չի կարող քեզանից հրաժարուել:

ՏԱՍՍՕ.

Ո՛վ աստուածներ, միթէ սա նա է, որ քեզ հետ խօսում է և քեզ խղճում է: Եւ ինչպէս կարող էիր չը ճանաչել այդ ազնիւ սիրտը: Միթէ կարելի էր, որ սրա ներկայութեամբ փոքրոգութիւնը գրաւէր քեզ և լողթանարէր: Ո՛չ, ո՛չ, այդ դու ես և ահա այս էլ ես եմ: Ո՛հ, շարունակիր և թող որ ամեն մի մխիթարութիւն քո բերանից լսեմ: Մի զրկիր ինձ քո խորհրդից: Ո՛հ, խօսիր, ինչ պէտք է անեմ, որ եղբայրդ կարողանալ ինձ ներել, որ դու ինքդ յօժարութեամբ կարողանաս ինձ ներել, որ դուք կրկին ինձ ուրախութեամբ կարողանաք ձերը համարել: Ասան ինձ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

Մենք քեզնից շատ քիչ բան ենք պահանջում, և այնուամենայնիւ, կարծես թէ շատ լինի: Դու ինքդ պէտք է մեզ սիրով անձնատուր լինես: Մենք քեզնից չենք պահանջում այն, որ դու չ'ունես, միայն թէ դու ինքդ քեզ հաւանէիր: Դու մեզ ուրախութիւն ես պատճառում, երբ ինքդ ուրախ ես և երբ ուրախութիւնից փախչում ես, միայն տխրեցնում ես մեզ: Երբ դու մեզ անհամբեր ես դարձնում, այն ժամանակ մենք կը ցանկալինք օգնել քեզ և տարաբախտաբար տեսնում ենք, որ չի կարելի օգնել, երբ դու բարեկամիդ ձեռքն ինքդ չես բռնում, որ անձկալից տարածուած, քեզ չի հասնում:

ՏԱՍՍՕ.

Այդ դու ինքդ ես, այն սուրբ հրեշտակն ես, որ առաջին անգամ հանդիպեցիր ինձ: Ներիր մահկանացուիս շփոթուած հալեացքին, եթէ մի բոպէ չը ճանաչեց քեզ: Նա քեզ կրկին ճանաչում է: Հոգիս ամբողջովին բացում է միայն քեզ պաշտելու համար: Սիրտս բոլորովին լցում է քնքրու-

Քեամբ: Հէնց նա է, նա իմ առջև է կանգնած, Ի՞նչ զգացմունք: Միթէ այս մի շիթումն է, որ ինձ ձգում է դէպի քեզ, Միթէ այս մի կատաղութիւն է: Միթէ մի բարձրագոյն զգացողութիւն է, որ առաջին անգամ ըմբռնում է ամենաբարձր և ամենամաքուր ճշմարտութիւնը: Այ՛ո, այս զգացմունքն է, որ միայն կարող է ինձ երջանիկ դարձնել այս աշխարհում, որ ինձ այսչափ անբախտ դարձրեց, երբ ես դիմադրում էի նրան և կամենում էի սրտիցս աքսորել: Կամենում էի այս կրքի դէմ պատերազմել: Կռուեցի, երկար կռուեցի իմ խորին էութեանս հետ, անպատկառութեամբ եղծեցի իմ սեփական ինքնութիւնս, որին դու այդպէս ամբողջովին պատկանում ես:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եթէ կամենում ես, որ աւելի երկար լսեմ քեզ, Տնասօ, մեղմացրու լուզքդ, որ ինձ սարսափեցնում է:

SUUSO

Միթէ բաժակի եզերքը կարող են չափաւորել գինուն, որ փրփրալով եռում է և խշշալով բարձրանում: Ամեն մի խօսքովդ վերացնում ես բախտս, ամեն մի խօսքից լետոյ աչքդ աւելի պարզ է փալլում: Զգում եմ, որ ներքուստ փոխուած եմ, ազատ եմ, որպէս մի աստուած և այդ բոլորի համար քեզ պէտք է նորհակալ լինեմ: Մի անասելի ուժ, որ ինձ տիրապետում է, քո շրթունքից է բղխում: Այ՛ո, դու ինձ բոլորովին սեպականացնում ես: Իմ ամբողջ եսից ապագայում ինձ ոչինչ չի պատկանում: Աչքս պղտորում է բախտի և լոյսի մէջ, հոգիս երբերում է: Ոտներս այլ ևս չէն դիմանում: Անդիմադրելի կերպով քաշում ես ինձ դէպի քեզ և սիրտս անխափան ձգտում է դէպի քեզ: Գու ինձ լաւիտեան գրաւեցիր քեզ համար, ուրեմն մա նոյնպէս իմ ամբողջ էութիւնս:

(Գրկում է և սեղմում է):

ԻՇԽԱՆՈՒՀԻ.

(Հրում է նրան իրենից և փախչելով)

Հեռացիր:

ԼԷՕՆՕԻԷ

(որ բեմի լետևում մի փոքր երևալով, շտապում է առաջ)

Ի՞նչ պատահեց: Տնասօ, Տնասօ:

(Հետևում է իշխանուհուն):

SUUSO

(ցանկանալով հետեւ նրանց)

Ո՛հ Աստուած:

ԱԼՖՕՆՍ

(որ Անտոնիօի հետ մօտեցել էր)

Նա խելագարուել է, բռնեցէք նրան ամուր:

(Գնում է)

ՀԻՆՔԵՐՈՐԳ ՏԵՍԻԼ

SUUSO, ԱՆՏՕՆԻՕ

ԱՆՏՕՆԻՕ.

Ո՛հ, եթէ ալժմ ալիպէս լինէր, ինչպէս դու միշտ մտածել ես, որ դու թշնամիներով ես շրջապատուած, եթէ թշնամիներից մէկն ալստեղ լինէր, որքան կը լաղթանակէր: Անբախտ, հաղի եմ կարողանում զգաստանալ: Երբ մի անսպասելի դէպք է պատահում, երբ մեր հալեացքը մի սոսկալի գործ է տեսնում, մեր խելքը մի վալրկեան կանգ է առնում: Արդ ամեն ոչինչի հետ չենք կարող համեմատել:

SUUSO (երկար միջոցից լետու)

Կատարիբ միայն պաշտօնդ: Տեսնում եմ, որ դու ես Արո՛, դու վալելում ես իշխանի հաւատարմութիւնը: Կատարիբ միայն քո պաշտօնը և հանդարտութեամբ տանջիբ ինձ, մինչ ցմահ, որովհետև նեցուկս կոտորուել է: Հանիբ, հանիբ նետը, որ կարթերի պատառոտումս սոսկալի կերպով զգամ: Բռնակալի համար դու մի թանկագին գործիք ես: Եղիբ բանտապետ, եղիբ դահիճ, որքան գեղեցիկ է երկուսն էլ, որքան վալել են քեզ:

(Դառնալով դէպի բեմը)

Արո՛, դէ՛ գնա բռնակալ: Դու չէիր կարող մինչև վերջը ձեանալ, տնր լաղթանակդ: Ստրկին լաւ շղթալիբ, նրան լաւ պահեցիր հնարած տանջանքների համար: Վնա՛, ես քեզ ստում եմ, պարզ զգում եմ զզուանքը, որ առաջ է բերում մեծագոյն զօրութիւնը, որ չարամտութեամբ և անարդարութեամբ ձերբակալում է:

(Մի փոքր դադարից լետու)

Վերջապէս տեսնում եմ, որ աքսորուած, մերժուած եմ և աքսորուած եմ որպէս աղքատ: Գլխիս պսակ դրեցին, որ որ:

պէս զոճաբերութեան համար զարդարած անասուն զոճարանի առջ տանեն. Վերջին օրերում փաղաքշական խօսքերով իրենց ձեռքը գցեցին իմ միայնակ սեպհականութիւնն — իմ երկասիրութիւնը և պահեցին. Այժմ իմ միակ ինչքը, որ ինձ ամեն տեղ կը լանձնարարէր, ձեր ձեռքումն է, որ մնում էր ինձ սովից փրկելու համար: Այժմ լաւ եմ տեսնում, թէ ինչու պէտք է անգործ մնալ: Այդ մի դաւաճանութիւն է, որի առաջնորդը դու ես: Որպէս զի իմ երկն աւելի կատարեալ չը լինի, որ միայն անունս չը հուշակուի, որ ինձ նախանձողներն իմ մէջ հազարաւոր թուութիւններ գտնեն, որ վերջապէս ինձ բոլորովին մոռանան, այդ պատճառով էլ պէտք է անբանութեան ընտելանամ, այդ պատճառով էլ պէտք է խնայեմ ինձ և մտաւոր զգալութիւնները: Ո՛հ արժանաւոր բարեկամութիւն, թանկագին հոգացողութիւն: Դաւաճանութիւնն ինձ զզուելի էի ներկայացնում, որ անտեսանելի և անդուլ թակարդներով պատեց ինձ, միայն աւելի զզուելի դարձաւ: Եւ դո՛ւ, լուշկապարիկ, դո՛ւ, որ այդքան քնքշութեամբ երկնայնաբար հրապուրեցիր ինձ, այժմ ես լանկարծ տեսնում եմ քեզ: Ո՛չ, Աստուած, ինչու այդքան ուշ: Մենք մեզ յօժարութեամբ ենք խաբում եւ պատում ենք մերժումներին, որոնք մեզ են պատում: Մարդիկ միմեանց չեն ճանաչում: Միմեանց ճանաչում են միայն դատապարտումները, որոնք մերկ նստարանի մօտ շթղակակապ տնքում են, ուր ոչ ոք պահպանելու, ոչ ոք կորցնելու բան չ'ունի, նրանք միմեանց ճանաչում են, ուր ամեն մէկը խաբեբայ է ներկայանում և իր նմանին էլ խաբեբայ է ընդունում: Բայց մենք քաղաքավարութեան պատճառով չենք կամենում մի քանիսին ճանաչել, որպէս զի նրանք էլ մեզ չը ճանաչեն: Որքան ժամանակ քո սուրբ պատկերը թագնում էր ինձնից անառակին, որ փոքրիկ ճարպիկութիւններով էր գործում: Դիմակդ վար ընկաւ, այժմ տեսնում եմ Արսիտային իր բոլոր հրապուրքից մերկացած: Այ՛, այդ դո՛ւ ես: Քո մօտին էր երգում իր խորհրդակից երգը: Եւ այն փոքրիկ, նենգաւոր միջնորդը: Որքան ստորացած եմ տեսնում նրան իմ առջև: Եւ լում եմ նրա թեթեւ քայլերի ձայնը, ես ճանաչում եմ այն շրջանը, որի շուրջը նա սպրդում էր: Չեզ բոլորիդ էլ ճանաչում եմ: Քող այդ իմ համար բաւական լինի: Եւ եթէ թըշուառութիւնն ինձնից ամեն բան էլ լափշտակած լինի, ես ալնուամենախիւ կը գնահատեմ դրան: Այդ է սովորցնում ինձ ճշմարտութիւնը:

ԱՆՏՈՆԻՕ.

Զարմանքով եմ լսում քեզ, Տասսո, թէպէտեւ լաւ գիտեմ, թէ քո արագաշարժ խելքը որպիսի թեթեւութեամբ մի սահմանից դէպի միւսն է ճճում: Զգաստացիր: Զսպիր այդ կատաղութիւնդ: Դու չարախօսում ես, դու այնպիսի խօսքեր ես արտասանում, որոնք ներելի են միայն ցաւերիդ պատճառով, բայց ինքդ քեզ երբէք չես կարող ներել:

ՏԱՍՍՕ

Ո՛հ, մի մխիթարիլ ինձ այդ մեղմ շրթունքովդ, թող չը լսեմ քեզնից ո՛չ մի խելացի խօսք: Թող իմ համար մնալ իմ ընկճած բախտաւորութիւնը, որ ես չզգաստանամ և լետոյ ցնորուեմ: Զգում եմ ներքին ոսկերքս փշրուած և ես ապրում եմ, որ այդ զգամ: Յուսահատութիւնն իր ամբողջ կատաղութեամբ ընդգրկում է ինձ և դժոխալին տանջանքում, որ ինձ շրջապատում է, չարախօսութիւնն ինձ կը թուի ցաւի մի թեթեւ նշույլ: Լս կամենում եմ հեռանալ և եթէ դու անկեղծ ես, ապացուցիր ինձ և թող որ իսկոյն գնամ:

ԱՆՏՈՆԻՕ .

Սա չեմ կարող քեզ թողնել այդ տառապանքի մէջ: Եւ եթէ ըմբռնելուդ ողժը բոլորովին պակասում է, ի հարկէ իմ համբերութիւնը չի պակասի:

ՏԱՍՍՕ.

Ուրեմն պէտք է որպէս կալանաւոր քեզ անձնատուր լինիմ: Անձնատուր եմ լինում և գործը վերջացրած է: Սա չեմ ընդդիմադրում, ալսպէս իմ համար լաւ է: Եւ թող տուր ցաւելով կրկնեմ որ գեղեցիկ էր ինչպէս ես ինքս ինձ հետ կատակ արեցի: Նրանք գնում են: Ո՛վ Աստուած, այնտեղ արդէն տեսնում եմ փոշին, որ կառքերը բարձրացնում են: Զիւսուրներն առաջ են ընկած: Գնում են կառքով այնտեղ: Գնում են դէպի այնտեղ: Միթէ ես էլ այն տեղից չեկալ: Նրանք անցան, նրանք բարկացած են ինձ վրայ: Ո՛հ, եթէ միայն մէկ անգամ էլ համբուրէի իշխանի ձեռքը: Ո՛հ, եթէ կարողանալի միայն հրաժեշտ տալ: Իայն մէկ անգամ ասել, ո՛հ, ներիր, միայն լսել ես, գնա քեզ ներուած է: Սա այդ չեմ լսո մ, երբէք չեմ լսի: Չէ որ կամենում եմ գնալ: Թող տուր միայն հրաժեշտ տամ, միայն հրաժեշտ տամ: Ո՛հ, տո՛ւէք, ո՛հ լեա տուէք ինձ միայն մէկ բոպէով ներկայութիւնը: Կարելի է որ կրկին առողջանամ: Ո՛չ, ես հրաժարուած եմ, աքսորուած եմ, ես ինքս ինձ աքսորեցի: Սա ալ ես չեմ լսի այն ձայնն, այն հալեացքին չեմ հանդիպելու:

ԱՆՏՈՆԻՕ

Թող տուր մի մարդու ձայնը քեզ մտաբերի, որ անվրդով չի կանգնած քեզ մօտ: Դու այնպէս թշուառ չես, ինչպէս որ դու կարծում ես: Այրացիր: Դու շատ ես լուսահատում:

ՏԱՍՍՕ.

Մթթէ այնքան թշուառ եմ, ինչպէս որ երևում եմ: Մթթէ այնքան թուլ եմ, ինչպէս որ ինձ քո առջև ցոյց եմ տալիս: Մթթէ կորցրած եմ բոլորը: Մթթէ ցաւը, որպէս թէ գետինը շարժէր, շինուածքը դարձրեց աւերակի մի սարսափելի կոյտ Մթթէ բաւարար տաղանդ չի գտնուի, որ ինձ հազար ու մի բանով դրողեցնի, պահի: Մթթէ բոլոր ուժը սպառուել է, որ շարժուում էր իմ կրծքում: Մթթէ ոչինչ եմ, բոլորովին ոչնչացել եմ: Ո՛չ, ամեն ինչ իր տեղումն է և ես ոչինչ եմ դարձել: Ես ինքս ինձ ինձնից գողացան, նրան ինձնից գողացան:

ԱՆՏՈՆԻՕ.

Եւ եթէ քեզ թւում է, որ բոլորովին կորած ես, համեմատիր քեզ ձանաչիբ, թէ ինչ ես դու:

ՏԱՍՍՕ.

Այո, պատեհ ժամին ես ինձ մտաբերում: Զ՞ի կարող արդեօք ոչ մի պատմական օրինակ այլ ես օգնել: Մթթէ չի կարող ներկայանալ իմ աչքերիս մի ազնիւ մարդ, որ ինձնից մի որեւէ անգամ աւելի տանջուած լինէր, որպէս զի ինձ նրա հետ համեմատելով կարողանայի հանդարտուել: Ո՛չ, ամեն ինչ կորած է: Միայն մէկ բան է մնում. բնութիւնը տուել է մեզ արատաւք, ցաւի աղաղակ, երբ մարդ այլ ես չի կարողանում դիմանալ: Եւ բացի այդ բոլորից ցաւի ժամանակ տուել է ինձ նուազ, խօսք, տառապանքիս խիստ լիութեան մասին գանգատուելու համար: Եւ եթէ մարդ իր տանջանքում լամբանում է, մի աստուած ինձ տուել է շնորհք ասելու, թէ որքան վըշտակից եմ:

(Անտօնիօն մօտենալով բռնում է նրա ձեռքը)

Ո՛վ ազնիւ մարդ: Ի՞նչ հաստատ և հանդարտ կանգնած ես, իսկ ես միայն նմանում եմ հողմաշարժ ալիքին: Մտածիր միայն և մի բարձրացնիր քեզ ուժերիցդ վեր: Հոօր բնութիւնը, որ հաստատել է այս ժալուր, ալիքին էլ տուել է դիւրաշարժութիւն: Բնութիւնն ուղարկում է իր փոթորիկին, ալիքը փախչում է, երեւում է, և փքւում է և փրփրալով թեքում, անցնում է ջրովը: Այդ ալիքի մէջ որքան գեղեցիկ ցոլանում էր արեգակին, աստղերը հանգչում էին այդ կրծքի վրայ: Որ մեղմութեամբ շարժուում էր: Անհետացել է պայծառութիւնը, թռել է հանգստութիւնը: Վտանգի ժամանակ ես ինձ այլ ես չեմ ճանաչում և այլ ես չեմ ամաչում այդ խոտովանի: Ղեկը փշրուած է և ծառն ամեն կողմից ճալթում է: Գետինը տրաքելով պատուում է օտաներիս տակ: Ես երկու ձեռքովս քեզանից եմ բռնում: Այսպէս հաստատ ապաստանում է նաւաւ վարը վերջ ՚ի վերջու այն ժալուին, որին զիպչելով նա պէտք է ջարդուի:

ԹԱՐԳ. ԲԺ. ԼԵՒՈՆ ՏՌԴԲԱՆՆԵՆՆԵ